

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՄԱՍԻԿՈՆ
ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

ԱՌԱՐՈՒՄ ԽԱՍՏԱՄԱՀ ԶԱՓԱՍԹՈՅԻ
ԼԵՋՎԱՐԴԻՔԱԿԱՆ
ԱՐԱՄՁՆԱՐԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՄԱՍԻԿՈՆ ՅԱՎՈՒՄՅԱՆ

**ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ԶԱՓԱԾՈՅԻ
ԼԵԶՎԱՌԵՎԱԿԱՆ
ԱՌԱՋԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Գիտական դեկավար՝ ՅՈՒՐԻ ՈՈՒԲԵՆԻ ԴԱՎԹՅԱՆ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(53)
3 449

Գիրքը հրատարակվում է Արցախի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ

Տպագրվում է Սուլուս Խանջյանի ավագ որդու՝ Մուսկայի ավիոնոտորների
կենտրոնական ինստիտուտի նորարար գիտաշխատող, անվանի ֆիզիկոս
Համլետ ԽԱՆՅԱՆԻ մեկենասությամբ:

Խմբագիր՝ Կարեն Սուլուս ԽԱՆՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ

Յավորումյան Մամիկոն
3 449 Սուլուս Խանյանի չափաժոյի լեզվաօճական առանձնահատկու-
թյունները/ Մ. Յավորումյան.- Ստեփանակերտ: «Դիզակ պյուս»
հրատ., 2018.- 96 էջ:

Երևանի «Ուսում» դպրոցի վաստակաշատ ուսուցիչ Մամիկոն Յավորումյա-
նի «Սուլուս Խանյանի չափաժոյի լեզվաօճական առանձնահատկություննե-
րը» գիտական ուսումնասիրությունը նվիրված է անվանի բանաստեղծ Սուլ-
ուս Խանյանի պետքիայի լեզվաօճական առանձնահատկությունների գնա-
հատմանը: Դեղինակը կոնկրետ օրինակներով լուսաբանում է Խանյանի պե-
տքիայի հնչյունական իրողությունների ոճական առանձնահատկությունները,
բառապաշտային հարցերը, քերականական իրողությունները, պատկերա-
վորման արտահայտչական համակարգը: Ըստ էության գրքի հեղինակը առա-
ջին անգամ ներկայացնում է ճանաչված բանաստեղծի խոսքարվեստի ինքնա-
տիպությունն ու գեղարվեստական մակարդակը:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(53)

ISBN 978-9939-1-0822-3

© Մամիկոն Յավորումյան, 2018

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ



Բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ, Արցախի պետական համալսարանի դասախոս Սոկրատ Աղալարի Խանյանը ծնվել է 1930թ., հունվարի 22-ին, Արցախի Հաղբութի շրջանի Աղբուլաղ (այժմ՝ Ակնաղբյուր) գյուղում: 1947թ. ավարտել է հարևան՝ Էղիլու գյուղի (այժմ՝ Ուխտաձոր) միջնակարգը, իսկ 1953-ին՝ Բաքվի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1953-1962թթ. աշխատել է Բաքվում հրատարակվող «Կոմունիստ» (հայերեն) հանրապետական թերթի խմբագրությունում՝ որպես լրագրող: 1962-1965թթ. սովորել է ասպիրանտուրայում ու Երևանի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել թեզ «Ն. Զարյանի լրամատորգիան» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ապա Երևանում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում» (1950-1990-ական թվականներ) թեմայով: 1962-1969թթ. աշխատել է իր ավարտած բուհի հայոց լեզվի և գրականության ամբիոնում, իսկ 1969-ից առայսօր դասախոսում է Արցախի պետական համալսարանում: 1984-2008թթ. ղեկավարել է նախ հայոց լեզվի և գրականության, ապա գրականության և լրագրության ամբիոնը:

Ս. Խանյանը 20 բանաստեղծական ժողովածուների և 22 գրականագիտական ուսումնասիրությունների հեղինակ է: 2009-2011թթ. ԼՂՀ գրողների միության և ԱրՊՀ գիտական խորհրդի երաշխավո-

բությամբ հրատարակվել է նրա 10-հատորյակը, որից 4 հատորը՝ պոեզիա, իսկ 6-ը՝ գրականագիտություն:

Ս. Խանյանն ակտիվ ու արդյունավետ գրական-մանկավարժական և հասարակական աշխատանքի շնորհիվ պարզեատրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով (1978), ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի «Աշխատանքային գերազանց հաջողությունների համար» կրծքանշանով (1990), ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալով (2001), «Մայրական երախտագիտություն հայ քաջորդիներին» մեդալով (2003): 1992թ. դարձել է ԼՂՀ Նախարարների խորհրդի Եղիշեի անվան մրցանակի դափնինեկիր՝ «Արցախի արծիվը» պոեմի համար, իսկ 1998թ. արժանացել է ԼՂՀ գրողների միության Մուրացանի անվան մրցանակի՝ «Արցախյան պատերազմը և հայ պոեզիան» աշխատության համար: «Մարտնչող գրականություն» ուսումնասիրության շնորհիվ դարձել է ԼՂՀ ԳՄ 2013թ. մրցանակակիր:

2010թ. նշվեց Ս. Խանյանի ծննդյան 80-ամյակը, պարզեատրվեց ԼՂՀ «Սեպտապ Մաշտոց» շքանշանով, Հայաստանի ԳՄ «Գրական վաստակ» և Արցախի պետական համալսարանի «Ոսկե» մեդալներով: Արցախյան ազգային-ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցելու համար 2018թ. պարզեատրվել է ՀՀ «Մարշալ Բաղրամյան» շքանշանով:

Ս. Խանյանը երիտասարդական ավյունով շարունակում է գրական-մանկավարժական իր գործունեությունը, ճանաչված դեմք է Արցախի, Հայաստանի և Սփյուռքի մշակութային գործիչների լայն շրջանակներում:

Ս. Խանյանը ավանդական ընտանիքի նահապետ է, գիտության ասպարեզում ճանաչված չորս զավակների հայր, բարձրագույն կրթությամբ բոռների և աշխույժ ծոռների երջանիկ պապ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական գրականության լեզուն՝ որպես համագային լեզվի ոճական յուրահատուկ դրսևորում ու գրական լեզվի բարձրագույն ծև, բացառիկ դեր է կատարում լեզվի զարգացման ու մշակման գործում: Գեղարվեստական խոսքում են ծավալվում և արձագանք գտնում լեզվի զարգացման հիմնական միտումներն ու յուրահատկությունները: Ասել է թե՝ գեղարվեստական գրականության լեզուն և ժողովրդի ընդհանուր լեզվական մշակույթը մշտապես գտնվում են փոխներգործության վիճակում: Որպես խոսքի արվեստ՝ գեղարվեստական գրականությունն իր պատկերները ձևավորում և արտահայտում է լեզվի միջոցով՝ միաժամանակ նպաստելով նաև համաժողովրդական լեզվի արտահայտչական հնարավորությունների զարգացման ու կատարելագործմանը: Զարգանալով ժողովրդի գրական լեզվի հետ սերտ կապի մեջ՝ գեղարվեստական գրականության լեզուն հանդես է գալիս որպես գրական լեզվի խոսցած արտահայտություն, որն իր ինքնատիպությունն ստանում է նաև գրական լեզվից կատարվող շեղումների միջոցով: Բավական յուրօրինակ ձևով է լուծվում լեզվական նորմայի խնդիրը գեղարվեստական գրականության մեջ: Մի կողմից մեծ գրողներն իրենց վարպետությամբ ու հեղինակությամբ նպաստում են նորմայի ստեղծմանը, իսկ մյուս կողմից հենց նրանք էլ խախտում են նորման, ստիպում նրան գտնվել հանարյա շընդհատվող շարժման մեջ, ընդլայնում և ձևափոխում են այն: Նշված հանգանանքով է պայմանավորված խոսքի մեծ վարակումների ազդեցության յուրահատկությունը լեզվի զարգացման գործում: Գրական լեզվի ցանկացած ուսումնասիրություն սկսվում է այդ լեզվով ստեղծագործող տաղանդավոր գրողների լեզվական արվեստի բացահայտումից և կատարյալ չէ առանց այդ անհատների խոսքարվեստի ուսումնասիրության: Ինչպես նշում է այլովեսոր Ա. Սարությանը, «...գրողների ստեղծագործությունների լեզվի և ոճական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հայերների ոճարանության առաջնահերթ խնդիրներից մեկն է»¹:

Գեղարվեստական ստեղծագործության խոսրավեստի վերաբերյալ վերոհիշյալ ըմբռնումները հիմք ընդունելով՝ փորձել ենք բացահայտել *Սովորականացման* ստեղծագործության խոսքարվեստի լեզվառնական առանձնահատկությունները:

Գրաբնադադատական տարբեր հոդվածներում ու մենագրություններում հետազոտողների կողմից ուսումնասիրության են արժանացել խանյանի ստեղծագործության լեզվի որոշ հարցեր, սակայն բանաստեղծի խոսքարվեստին նվիրված ամբողջական, համապարփակ աշխատություն չկա: Աշխատությունը նման մի ուսումնասիրության համեստ փորձ է:

Ինչպես արդեն նկատեցինք, Սովորականացման բանաստեղծի լեզվառնական առանձնահատկությունները պատշաճ խորությամբ չեն ուսումնասիրվել: Սակայն պետք է նշել, որ տարիների ընթացքում առանձին հոդվածներում

¹ Սարության Ա., Ե. Զարենցի չափածոյի լեզուն և ոճը, Եր., 1979, էջ 4:

տարբեր հեղինակների կողմից անդրադարձ է կատարվել նրա լեզվի և ոճի առանձնահատկություններին:

Դեռևս 1961թ. նորագույն շրջանի հայ գրականության դասական Նախիրի Զարյանը Ս. Խանյանի առաջին՝ «Կարկաչ» ժողովածոլի մասին գրած իր «Բարեխստում բողոքներ» գրախոսության մեջ նշել է. «Ղարաբաղը իր բարձրաբերձ լեռներով և անդնդախոր ձորերով, իր փարթաման անտառներով և արագավազ գետերով, իր քաջարի-ազատարադ, ազատասեր և միաժամանակ ավանդապահ ժողովորով միշտ էլ եղել է հայ բանաստեղծների ոգևորության աղբյուրը: Ղարաբաղը իր բարձրագագա արուն ունի նաև երիտասարդ բանաստեղծների սրտում: Ես կուզենայի ընթերցողի ուշադրությանը հանձնել Ս. Խանյանի «Կարկաչ» գրքից հետևյալ քայլակը.

Ղարաբաղ իմ, փոքր ես, սակայն
Սոր փոքրությանն ո՞վ է նայում,
Ո՞ր հեռումեր ժնող մայրն է,
Որ աշխարհին չի հմայում:

...Ինչպես իր գոչակից ընկերների, Ս. Խանյանի թեմատիկան ևս հարուստ է և բազմակողմանի, նրան հուզում է սերը, ինքնությունը, ընտանիքը և գոյության այլ հարցեր:

Այդ երգերը բարեխստում բողոքներ են»²:

Արդյո հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամրիոնի ավագ դասախոս Կարինե Չակորյանը գրում է. «Ս. Խանյանը տարիների ընթացքում անընդհատ խորացրել է ստեղծագործական իր նախասիրությունները, հարստացրել ասելիքն ու կատարել ագործել բանաստեղծական արվեստը: Նա հմտորեն օգտվել է մեր լեզվի արտահայտչական հնարավորություններից՝ խոսքին հաղորդելով մաքուր ու լուսավոր երանգներ... Ս. Խանյանի գեղագիտական կողմնորոշումը խոսքի սեփական բույրը, համը, գույնը պահելու մեջ է»³:

Նա անդրադառնում է Ս. Խանյանի ստեղծագործության մեջ տեղ գտած կրկնությունների, հարադրությունների, կրկնավոր բաւերի, մակդիրների, փոխաբերությունների և համեմատությունների կիրառությանը և մի քանի այլ առանձնահատկությունների՝ հանգելով այն եղբակացության, որ «Ս. Խանյանի բանաստեղծությունները զերծ են պաճուճանքներից, գումագեղությունից, բայց բխում են սրտից, չերմ ու քնքուշ են, շաղախված բարու, կարոտի, սիրո ու լույսի թրիոններով»⁴:

«Բարեկանմության լույսը» (1963) ժողովածոլի գրախոսականում բանաստեղծ Մկ. Կորյունը այսպիսի բանաձևային եզրահանգում է կատարում. «Ո՞րն է Ս. Խանյանի բանաստեղծությունների դրականը և գրավականը... Յեղինակը ցուցաբերել է անսերեսթ, պարզ ու անկեղծ գրելու անժխտելի կարողություն: Երբ ասելիք կա, նա կարողանում է գտնել արտահայտչական դիպուկ ծներ և ցանկացած տրամադրությամբ վարակել ընթերցողին...»⁵:

² «Գրական Աղրբեջան», 1961, N 2:

³ Խանյան Ս., Ընտիր երկեր, հ. 2, Ստեփանակերտ, 2009, էջ 64:

⁴ Նույն տեղում:

⁵ «Գրական Աղրբեջան», 1963, N 6:

Ապա նույն գրախոսականում հավելում է. «Ս. Խանյանը բանաստեղծական մի լավ սովորության է հետևում. աշխատում է իր բանաստեղծությունն ավարտել աֆորիստիկ, հակիրճ ու ավարտուն մտքով...»⁶:

Սեկ այլ ժողովածուի՝ «Սիրտս ծեզ հետ է»-ի (1966) մասին գրախոսականում հօչակավոր գրող Մկ. Արմենը ընդգծում է. «...Սոկրատի մոտ պայման ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմերն ու երևույթները, պայծառ են բառերը... Դաճելի է կարդալ Սոկրատին, որի մոտ արև կա և լավատեսություն հակառակ մի քանի երիտասարդ և ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մռայլ է ընդհանուր տրամադրությունը, այլև, դրա հետ սերտորեն կապված, համեմատություններն ու բառային մատերիալը»⁷:

Սոկրատ Խանյանի «Արևսար» ժողովածուի գեղարվեստական արժանիքների մասին խոսելով՝ բանասիրական գիտությունների դոկտոր Դարություն Սերոբյանը նորա բանաստեղծական արվեստի խոսքը բնութագրում է հետևյալ կերպ. «Ի՞նչն է օգնել պոետին լավին հասնելու: Ամենից առաջ հեղինակը երգել է իր սրտին շատ մոտ ու ծանոթ այդ սրտի միջով անցած հովազը, հոգին պարուրած գաղափարը: Դրանցում կա և խոր հայրենասիրություն, և այդ հայրենիքի պատվի փառքի համար ընկածների նկատմամբ անհուն սեր և որդու կարոտ, և մայրական վշտի, ցավի, մորմոքի, մարդուն թևավորող սիրո նկարագիրը՝ ասված ներդին քնքշությամբ, լիրիզմով, մշակված բառ ու պատկերով...»⁸:

Ս. Խանյանի պոեզիայի խոսքարվեստի արժանիքներին է անդրադարձել բանասիրական գիտությունների դոկտոր պլոֆեսոր Սմբատ Ավագյանը՝ բանաստեղծի «Սպասում Ենք դեռ» (1975) գրքի մասին գրած հոդվածում, նորա խոսքը համարելով երաժշտական, հնչել և զգացնոնքային. «Պետք է ասել, որ հեղինակը թեման գեղարվեստականացնում է պատշաճ մակարդակով, «ներդին խոսքին» տալով երաժշտականություն, հնչելություն, զգացնոնքայնություն»⁹:

Նույն տեղում՝ Սմբատ Ավագյանը այսպիսի եղրահանգում է կատարում. «Ո՞րն է հեղինակի հաջողության գրավականը: Սոկրատ Խանյանը օգտագործում է ժողովրդական ինմաստությունները, առածները, թևավոր խոսքերը, դարձվածքները: ...Բանաստեղծի լեզուն սահուն է, պատկերավոր, հյութալի: Սա գալիս է նույնագեն ժողովրդական բառ ու բանը հիմանալիորեն օգտագործելու, հարուստ բառապաշար ունենալու և բառը տեղին գործածելու պարագաներից...»¹⁰:

Իսկապես, ինչ էլ որ ասելու լինենք, միանշանակ է, որ բոլոր գրողների լեզվի ակունքը ժողովրդական լեզուն է, ժողովրդական բառն ու բանը, և հենց այս տեղ է երևում բանաստեղծի վարպետությունը, թե նա ինչ հմտությամբ է կարողանում օգտվել այդ ակունքից՝ տեղին և ճիշտ համադրելով ու շաղախելով այն սեփական բառապաշարին և արտահայտչամիջոցներին:

⁶ Նույն տեղում:

⁷ «Գրական Աղրբեջան», 1966, N 6:

⁸ «Գրական Աղրբեջան», 1970, N 1:

⁹ «Գրական Աղրբեջան», 1975, N 4:

¹⁰ Նույն տեղում:

Այս առումով Սոկրատ Խանյանն իսկապես խնդիր չունի, նրա լեզուն գերծ է ավելորդ վերամբարձությունից և պարետիկությունից, այն իսկապես մոտ ու հարազատ է ժողովրդական պարզ լեզվին, ուր մի դարձվածք կարող է արտահայտել մի ամբողջ քառատողի իմաստ:

Ս.Խանյանի ոչ մի ժողովածու դուրս չի մնացել գրաքննադատների ուշադրությունից: Նրա գրքերի վերաբերյալ իրենց դրվատանքի խոսքն են ասել գրականագետներ Ս. Արգումանյանը, Ս. Դանիելյանը, Գ. Գասպարյանը, Ն. Աղայանը, Ժ. Անդրյանը, Վ. Աթանեսյանը, գրողներ Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Լ. Անանյանը, Յ. Բեգլարյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Թովմանյանը, Ռ. Եսայանը, Ն. Սողոմոնյանը և ուրիշներ:

Բանաստեղծի պոեզիայի մասին ընդիհանրացնող իր խոսքում գրաքննադատ Ս. Դանիելյանը նշել է: «Ս. Խանյանը բանաստեղծներ Գ. Սարյանի, Յ. Շիրազի, Վ. Դավթյանի օպարմից է, նույնիսկ թվում է, թե արցախյան հողի վրա քնարական չլիներ հնարավոր չեն: «Գանձ» բանաստեղծության մեջ, մասնավորապես, Ս.Խանյանը մատնանշում է վիպապաշտ գեղարվեստական իր ընկալումները՝ կարոտ, «կանաչ-կարմիր» առօրյա, երազայնություն, սիրտը շոշափելու սովորություն, և այսպես շարունակ դեպի բանաստեղծի սիրտը տանող կածաններ»¹¹:

Ս. Խանյանի ծննդյան 70-ամյակը լայնորեն նշվեց գրական հասարակայնության կողմից: Դայոց մամուլը իր խոսքն ասաց բանաստեղծի գրական հունձքի մասին: Արցախի պետական համալսարանը հրատարակեց «Սոկրատ Խանյան» կենսամատենագիտական ժողովածուն, որը կազմել և խմբագրել է բանասիրական գիտությունների թեկնածու, դրույտ, բազմավաստակ լեզվաբան Արմեն Յուլիի Սարգսյանը: Բավականին լուրջ այդ գիրքը ներկայացնում է Ս. Խանյանի կյանքի հիմնական տարեթվերը, պետական պարզևածները և առանձնապես նրա երկերի հարուստ մատենագիտությունը: Բանաստեղծի հետ ունեցած հարցազրույցուն Ա. Սարգսյանի հարցին՝ թե ո՞վ է Խանյանի սիրելի բանաստեղծը, նա պատասխանել է: «Բոլոր մեծերը: Ումի՞ց չսովորես: Յուրաքանչյուր անհատականություն ուսուցիչ է: Միայն մի բան կարող եմ նշել: Ես ռեբուսները չեմ ընդունել և չեմ ընդունում, ինձ համար գլխավորը արվեստի պարզությունն է»:

2000թ. Արցախի պետական համալսարանի ռեկտորատի որոշմամբ հրատարկվեց գրականագետ-մանկավարժ Անահիտ Արայանի «Կարոտի և սիրո կրակներ» ուսումնասիրությունը՝ նվիրված Ս.Խանյանի պոեզիային: Բավականին ծավալուն (110 էջ) այդ աշխատության մեջ հեղինակն ամբողջությամբ վերլուծել ու արժնորել է տաղանդավոր բանաստեղծի ստեղծագործությունը: Նշելով պոետական հունձքի գաղափարական հագեցվածությունը, Ա. Արայանը մասնակիորեն նշում է նաև Ս. Խանյանի հստակ ու պատկերավոր ոճն ու հոգեբանական լիցքավորման թարմ նրբերանգները: Յետագա տարիներին լայնորեն նշվեցին Ս.Խանյանի հորելյանական տարեթվերը. 2010-ին՝ ծննդյան 80, 2015-

¹¹ «ԼՂ Կանրապետություն» թերթ, 1996, 24 հունվարի:

ին՝ 85-ամյակը: Ականավոր բանաստեղծ-գրականագետը 2010-ին պարզեցաւրվեց ՀՅ ԳՄ «Գրական վաստակ» մեդալով, Արցախի պետհամալսարանի «Ոսկե մեդալով» և մտավորականի համար ամենաբարձր՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Այդ տարիներին Ս.Խանյանի գրական վաստակին մի շարք անգամ են անդրադարձել «Գրական թերթ», «Հայաստանի Հանրապետություն», «Ազատ Արցախ», «Լուսարար», «Եղիշի լուս», «Հայրենյաց պաշտպան» և այլ պարբերականները:

Ս. Խանյանի ստեղծագործության լեզվաօճական երանգների մասին իր լուրջ խոսքն է ասել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Շ.Ղազարյանը: «Արցախի բանաստեղծական արվեստի լեզուն և ոճը» աշխատության մեջ Շ. Ղազարյանը բերում է բազմաթիվ կոնկրետ օրինակներ և ընդգծում նաև Ս.Խանյանի խոսքարվեստի ինքնատիպ լեզուն ու ոճը:

2000թ. «Տարիներս» բանաստեղծական ժողովածուն տպագրելուց հետո 2012-ին Ս.Խանյանը համես եկավ «Մարտնչող գրականություն» ծավալուն գրականագիտական ուսումնասիրությամբ, իիմնականում նվիրված ականավոր բանաստեղծ Վ.Շակորյանի պոեզիային: Գրքի առաջարանում գրականագետ Ա.Արայանը բնութագրելով ժողովածուն, նշանամանակ անդրադարձել է Խանյանի բանաստեղծական նվաճումներին, նշելով «Ս.Խանյանը իր տաղանդի երանգներն է բերում նաև պոեզիայում: Նրա բանաստեղծական նոր շարքերը ապացուցում են, որ արարող միտքն ու կենսաթրի սիրտը երբեք չեն ծերանում: Մենք այս խորհուրդը բացատրում ենք նրանվ, որ բանաստեղծ-գրականագետ Ս.Խանյանն իր ոփեշնչման աղբյուրը համարում է ազատ ու անկախ, հպարտ ու անպարտ մեր ավանդական Հայոց Արցախը, որի գինվորյալ զավակներից է և ինքը»¹²:

2015թ. ծննդյան 85-ամյակի կապակցությամբ լուս տեսավ բանստեղծի չափածո երկերի ընդհանրացնող ժողովածուն՝ «Արցախի սիրտը» խորագրով: Մամուլն անմիջականորեն արձագանքեց գրական այդ երևույթին: Հռչակավոր արձակագիր-գրականագետ Ն.Աղայանը իր խոսքն ասաց «Գրական թերություն», որտեղ ընդգծեց. «2015թ. Ստեփանակերտում լուս է տեսել մեր ավագագույն գրողներից մեկի՝ Սոկրատ Խանյանի «Արցախի սիրտը» ընտրանի-ժողովածուն, որտեղ ներկայացված են նրա շուրջ կեսդարյա գրական ճանապարհի երկերը՝ բանաստեղծություններ, պոեմներ, լեզենդներ, որոնց բովանդակությունն ու գեղարվեստական արժանիքները հեղինակի անունը վաղուց սիրելի են դարձել շատերիս: Խանյանը դեմք է իր գրական տեսակի շրջանակում նշտապես հարազատ դասական պոեզիայի սահմանադրության ստեղծագործական դրույթներին, հատկապես բանատողի կանոնակարգությանը, որից նրանց բանաստեղծությունը հետաքրքիր շեղումներ է կատարել ու հասել էական արդյունքի: Սակայն կարծում եմ՝ չկա նոր ու իին պոեզիա, բանաստեղծությունը գրվածքի խորքում է... Այս գրքում ներկա է ոչ միայն Սոկրատ Խանյանը,

¹² Ս.Խանյան, «Մարտնչող գրականություն», «Դիզակ պյուս» հրատ., 2012,էջ 57:

այլև մի որոշ չափով, անցած տասնամյակների հայոց պոեզիայի դիմագիծը, որ ժողովածուն դարձնում է առավել ընդհանրական ու հետաքրքրի»:¹³

Գնահատելով վերոհիշյալ կարծիքների մեծարժեքությունը, այնուամենայ-նիվ, հարև է նկատել, որ Խանյանի խոսքարվեստի հարցեր քննող այդ աշխա-տություններն աճբողջական պատկերացում չեն տալիս բանաստեղծի ստեղ-ծագործական անհատականության, նրա լեզվի ու ոճի նասխն: Դանգանանալից ուսումնասիրության չեն արժանացել Խանյանի չափածոյի հնչյունական, բա-ռապաշարային, ծևաբանական, շարահյուսական իրողությունների, պատկե-րավորնան ու արտահայտչական միջոցների ոճական արժեքն ու առանձնա-հատկությունները: Այդ բացթողումը հնարավոր չափով լրացնելու անհրաժեշ-տության գիտակցումնով է ստեղծվել է սույն աշխատությունը:

Խանյանի ինքնատիպ լեզվանշակույթն ու արվեստը կարևորում են բանաս-տեղծի ստեղծագործության խոսքարվեստի համակողմանի գիտական քննու-թյունը, որն անհրաժեշտություն է և առնչում է հայ լեզվաբանության ու ոճա-գիտության կարևոր հարցերին:

Ուսումնասիրության նպատակն է գիտականորեն լուսաբանել Խանյանի ստեղծագործության խոսքարվեստը՝ առանձնացնելով լեզվական այն իրողու-թյունները, որոնք առավել քննող են բանաստեղծի խոսքարվեստին ու մտա-ծողությանը: Վերոհիշյալ նպատակադրումնով աշխատության մեջ առաջարկվել են հետևյալ խնդիրները:

ա) Խանյանի ստեղծագործության լեզվական փաստերի ընտրություն և հա-մակարգում,

բ) Խանյանական խոսքարվեստին բնորոշ լեզվաօճական իրողությունների բացահայտում,

գ) լեզվաօճական իրողությունների ուսումնասիրություն՝ հնչյունական, բա-ռապաշարային, ծևաբանական, շարահյուսական մակարդակներում և պատ-կերավորնան, արտահայտչական միջոցների համակարգում,

դ) Խանյանի ստեղծագործության խոսքարվեստի առանձնահատկություն-ների և գրական հայերենի լեզվաբերականական իրողությունների փոխհարա-բերության, քերականական շեղումների մեկնաբանություն:

Ուսումնասիրության փաստական նյութը Խանյանի չափածոն է՝ իր ամրող ծավալով: Լեզվական նյութի քննությունը կատարված է հայ և օտարազգի լեզ-վաբանների՝ տարբեր գրողների ստեղծագործությունների լեզվաօճական առանձնահատկություններին նվիրված հետազոտությունների հայեցակետից: Թեմայի ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է լեզվի քննության համաժամանակյա մեթոդով:

Աշխատության գիտական նորույթը Խանյանի ստեղծագործության համա-կողմանի քննությունն է: Առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրելու և արժնորելու բանաստեղծի ստեղծագործությունների լեզվաօճական առանձ-նահատկությունների ամբողջական համակարգը՝ և հնչյունական, և բառա-

¹³ «Գրական թերթ», թիվ 25, 22 հուլիսի, 2016թ., էջ 7:

պաշարային, և քերականական իրողությունների, և պատկերավորման, արտահայտչական միջոցների ոճական արժեքը, դրանց տեղն ու դերը հայերենի մշակման ու զարգացման գործընթացում:

Աշխատության տեսական արժեքը փաստական հարուստ նյութի լեզվառնական քննության հիման վրա Խանյանի խոսքարվեստի արժենորումն է: Ուսումնասիրությունների արդյունքում կատարված մեկնաբանություններն ու պարզաբանումները, դրանցից բխող եզրահանգումները կարևոր են Խանյանի լեզվական մշակույթի առանձնահատկությունների և գրական հայերենի լեզվաբերականական իրողությունների փոխհարաբերությունների հետազոտման առումով: Աշխատանքում առկա մոտեցումները, տեսական ընդհանրացումներն ու հիմնավորումները կարող են օգտակար լինել գրողի խոսքարվեստն ուսումնասիրողների, ինչպես նաև ստեղծագործության լեզվի և ոճի հարցերով գրադպողների համար: Կատարված լեզվառնական քննությունն իր ամբողջության մեջ հայ գրական լեզվի ուսումնասիրության բաղկացուցիչ մասն է, ուստի հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև ժամանակակից հայոց լեզվին, ոճագիտությանը նվիրված բուհական դասընթացներում և արդի հայ չափածոյի խոսքարվեստի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում:

ՐՆՁՅՈՒՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈԲԱԿԱՆ ԱՌԱՋԱՎԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնչյունական ոճավորումն ու բանաստեղծական խոսքի երաժշտականությունը հատկապես չափածոյի լեզվական արվեստը բնութագրող առանցքային հարցերից են: Մինչև վերջին տասնամյակները խոսքի հնչյունական կողմնը չէր դիտարկվել ոճագիտության հետազոտությունների շրջանակում, սակայն այսօր հնչյունների արտահայտչական հնարավորությունների բացահայտումը կարևոր տեղ է գրավում ոճագիտական ուսումնավորություններում: «Լեզվական յուրաքանչյուր միավոր,- գրում է պրոֆ. Լ. Եզեկյանը,- սկսած ամենանվազագույնից (հնչույթ) մինչև նախադասություն, կարող է դառնալ ոճաբանության ուսումնասիրության առարկա, եթե այն ունի հուզական, արտահայտչական որոշակի երանգավորում»¹⁴:

Սուլրատ Խանյանը նույնպես դիմել է այս հնարանքին՝ շնչավորելով և կենդանացնելով հայրենի բնությունը: Այսպես:

*Սուշկը դեղին է հագել,
Ճողը ժպտում է,
Սուշկի աշճան խշողից
Առուն խրտնում է:¹⁵*

Խանյանը թեև բաղաձայնույթի հետ կապված նորամուծություններ չի բերում, սակայն հաճախ է կիրառում այն՝ իր խոսքը ոճավորելու և գեղարվեստական պատկերներն ավելի արտահայտիչ ու ազդեցիկ դարձնելու համար: Խանյանի մոտ հաճախ ենք համդիպում Ժ բաղաձայնի կուտակումով ստեղծված բանաստեղծական պատկերների, ինչի լավագույն օրինակը դարձյալ մեզ հանդիպում է դեռևս Գրիգոր Նարեկացու տաղերի մեջ.

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծավալանայր յառաւատուն...¹⁶
Բերենք մի քանի օրինակ Խանյանի պոեզիայից.

*Ծիրանի ծառը ծաղկել է կրկին,
Սիրածն է ասես ծաղկաշոր հագել... (ԸԵ, հ. 1, էջ 52)
Ծ բաղաձայնի կուտակում ենք նկատում նաև մեկ այլ բանաստեղծության մեջ.*

Ես ծով դարձա, ալիքներով

¹⁴ Եզեկյան Լ., Հնչյունն (հնչույթ) իրու ոճույթ. հնչյունների ոճական արժեքը, «Բանբեր Երևանի Դամալսարանի», Եր., 2000, N1, էջ 37:

¹⁵ Խանյան Ս., Ընտիր երկեր, հ. 2, Ստեփանակերտ, 2009, էջ 357: Այսուհետև բնագրում կնշվեն միայն հատորը և էջը:

¹⁶ Նարեկացի Գ., Տաղեր և գանձեր, էջ 124:

Ծեծեցի ափս,
Դու մոտեցար ու լսեցիր
Հառաջող ժափս: (ԸԵ, հ. 1, էջ 430)

Ինչպես վերը նշեցինք, ծ բաղաձայնի կուտակման հնարանքը խանյանը կիրառում է բավականին հաճախակի: Ափա մեկ այլ օրինակ.

Ծովիկ, ծովաչ Ծովիմար,
Ումենայի մի հնար... (ԸԵ, հ. 2, էջ 183)

Երբեմն բանաստեղծը բաղաձայնույթ է ստեղծում՝ համադրելով **ծ, ծ և ց** բաղաձայնները.

Երբ պիտի ծնվեր, Թիրսի գագաթին
Մի աստղ էր թափել՝ շողեռով ամբիծ,
Լեռը դարձել էր լուսե Ծիր-Կաթին,
Աշունը գորգ էր հիմում շիկնամքից: (ԸԵ, հ. 2, էջ 447)

Բաղաձայնույթն օգնում է բանաստեղծին ավելի շոշափելի և տպավորիչ ներկայացնել տեսարանը, և խանյանը բավականին հաճախ է դիմում այդ հնարանքին՝ իր խոսքն ավելի ներգործուն դարձնելու համար: Երբեմն մի քառատողի մեջ կարող են հանդիպել տարբեր բաղաձայնների կուտակումներ, ինչպես, օրինակ, ներքոթիշյալ բանատողերում, ուր հատկապես աչքի է զարնում **գ** բաղաձայնի կուտակումը, սակայն այստեղ կա նաև **ծ** բաղաձայնի կուտակում, որոնք արտահայտվում են նույն բառը տարբեր հոլովածներով կրկնելու միջոցով:

Ժպիտող իմ մոր ժպտին է նման,
Գարուն, քո ժպտով դու գերում ես ինձ,
Զերմ գիրկող իմ մոր գրկին է նման,
Գարուն, քո գրկով դու գերում ես ինձ: (ԸԵ, հ. 1, էջ 52)

Խանյանի բանաստեղծական խոսքին երաժշտականություն է հաղորդում նաև նմանահունչ կամ նույն բառերի կրկնությունը: Փոքրածավալ բանաստեղծություններում նույնիսկ բառի 3-4 անգամ կրկնելն արդեն նպաստում է չափ ու կշռությի ուժեղացմանը՝ գոյացնելով առձայնույթ կամ բաղաձայնույթ: Միևնույն բառի կրկնության միջոցով ստեղծված բաղաձայնների կուտակումը կրկնակի արդյունք է տալիս՝ ավելի տպավորիչ է դառնում տվյալ բառը և ավելի է ընդգծվում նրա արտահայտած իմաստը: Այսպես օրինակ.

-Աշխարիի մեջ մի աշխարի էր,
Աշխարիմ ո՞վ է տարել իր հետ: (ԸԵ, հ. 1, էջ 485)

Կամ՝

Ոչինչ չեմ ուզում,
Չեմ ուզում ոչինչ,
Ուզում եմ գարման թովչանք ու արև,
Ոչինչ չեմ ուզում,
Չեմ ուզում ոչինչ... (ԸԵ, հ. 1, էջ 410)

Դիտարկված վերջին բանաստեղծական տողերում խանյանը կրկնվող բառերի միջոցով ստեղծել է չ բաղաձայնի կուտակում, ինչն ավելի է սաստկացնում տողերի ժխտական իմաստը: Սակայն նույն բաղաձայնի կուտակումը

տարբեր բանատողերում կարող է բոլորովին տարբեր ներգործություն առաջ բերել: Մեկ այլ բանաստեղծության մեջ խանյանը դարձյալ չ բաղաձայնի կուտակման միջոցով բաղաձայնույք է ստեղծում, որը, սակայն, այստեղ համեստ չ գալիս որպես ժխտական ինաստի կրող, այլ ավելի է թանձրացնում և տպավորիչ դարձնում **կանաչ** բարի արտահայտած ինաստը: Դիտարկենք օրինակը.

Քմախաչի կանաչ կաղմի,

Յզոր կաղմի Քմախաչի,

Քեզ իր ճամփին հանդիպողը

Իմ երգերից կծանաչի: (ԸԵ, հ. 1, էջ 377)

Չենք կարող ուշադրության չարժանացնել բանաստեղծի խոսքարվեստում ձայնորդ հնչյուն ուժեցող բառերի գգալի քանակությանը: Զայնորդների հիմնական առանձնահատկությունն այն է, որ մյուս բաղաձայնների համեմատությամբ նրանցում ձայնի և աղմուկի հարաբերության տեսակետից մեծ է ձայնի հարաբերական ծավալը: Ինչպես սովորաբար նշվում է, «ամենաքերև և բարեհունչ հնչյուններ համարվուն են ձայնավորները, ապա ձայնորդները»¹⁷: Լեզվաբանության մեջ ձայնորդները կոչվում են նայ (փափուկ)¹⁸, և դրանց ոճավորումը չափածո ստեղծագործություններում բանաստեղծական խոսքի մի շարք արժանիքների ապահովման կարևոր գործոն է դառնում: Խանյանի ստեղծագործություններում ձայնորդների կրկնության ոճական արժեքը ոչ միայն բանաստեղծական խոսքի նրբությունն ու երաժշտականությունը պայմանավորող ոճական հնարանը է, այլև զգայուն հոգեվիճակի ու մեղմ տրամադրությունների արտահայտման միջոց: Զայնորդների ոճավորմանը ուշագրավ են բանաստեղծական ներքոհիշյալ հատվածները.

Ողջո՞ւմն, Վարպետ, ողջո՞ւմն ու սեր

Քո գարունված տարիներին,

Այսպես փառք են տվել դարեր

Յաղթանակած արիներին:

Զարի երթը խաթարեցիր

Ճամփաներում քո դեգերուն,

Քամի՛ դերեր կատարեցիր,

Բայց մնացիր միշտ քո դերում: (ԸԵ, հ. 2, էջ 396)

Բանաստեղծական այս հատվածում **թ** բաղաձայնը հանդիպում է 21 անգամ, **Ա-ն՝ 13, Ֆ-ն՝ 5** անգամ: Անշուշտ, ձայնորդ հնչյունների կուտակումը որոշակի նպատակ է հետապնդում: զգացմունքի և ապրումի մաքրության տարր կա ձայնորդների առատությամբ աչքի ընկնող բանաստղերում: Նշված հանգամանքը պայմանավորված է այդ հնչյունները ներառող բառերի գործածությամբ: Ս. Աբեղյանը, խոսելով ձայնորդների ոճական արժեքի մասին, գրում է. «Բուրն ու բիրտ զգացմունքներն ու գաղափարները արտահայտվում են կոշտ բաղաձայններով, իսկ մեղմ ու փափուկ զգացումները՝ ձայնորդ (ռնգային և

¹⁷ Առաքելյան Գ., Գր. Նարեկացու լեզում և ոճը, Եր., 1975, էջ 193:

¹⁸ Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Եր., 2008, էջ 85:

նաև ն, մ, ր, ռ, լ) հնչյուններով»¹⁹: Սակայն, հաշվի առնելով, որ հնչյուններն ինքնին ոճական արժեք չունեն և արտահայտչականություն են ձեռք բերում միայն խոսքաշարում, հնչյունային զանազան գորգորդությունների մեջ մտնելով, Մ. Աբեղյանը հետագա շարադրանքում հավելում է. «Այս ամենի... նաև կարելի չէ մի որոշ կանոն դնել....: Բանաստեղծին իրեն է մնում միշտ որոշել, թե երբ և որ ձայնը ինչ ազդեցություն է թողնում»²⁰: Դետևաբար պետք է խսել ոչ թե հնչյունների արտահայտուած իմաստի, այլ հնչյունների գորգորդություններից ծնվող տրամադրության և տպավորության մասին:

Հայտնի է, որ խոսքի արտահայտչականության և երաժշտականության համար բանաստեղծները սովորաբար դիմում են նույնահումը բաղաձայնների ոճավլորնանը: Խաճանը երթեմն համարդում է նույնիսկ որոշակի առումով անհամատեղելի թվացող հնչյունները՝ բաղաձայնների անհամաշափ կուտակմամբ ստեղծելով զգացմունքի ու ապրումի շշափելիության տպավորություն: Ահա այդպիսի օրինակ.

Դու մինուճար, դու մոր ճրագ,
Դու պապի հույս, հոր ժառանգորդ,
Դու օքափի անմար կրակ,
Տիհմածարի ժաղկուն բողբոք: (ԸԵ, հ. 2, էջ 446)

Բերված օրինակում բանաստեղծը համատեղել է ճ, ջ, ծ, ժ բաղաձայնները, որոնք գուցե առաջին հայացքից անհամատեղելի թվան (բացի ջ-ճ-ից), սակայն այդպիսի համատեղումից բանաստեղծական հատվածը ձեռք է բերել երաժշտական հնչողություն:

Առձայնույթը (աստղանս) նույն կամ համահունչ ձայնավորների կրկնությունն է, որը, անշուշտ, բարձրացնում է բանաստեղծական խոսքի գեղագիտական արժեքն ու հիմնականում կիրառվում խոսքի բարեհնչության երաժշտականության պահանջով: Նարկ է նկատել, որ խաճանի խոսքարվեստում առձայնույթի որպես ոճական հնարանքի գործածությունը բավկանին քիչ է, քանի որ, ինչպես նշում է Եղ. Զրբաշյանը, խոսքի բովանդակության հետ իմաստային թույլ կապի հետևանքով «...ավելի դժվար է որսալ նրա (ձայնավոր հնչունի - ընդգծումը մերն է՝ Մ. Յ.) կապը պատկերվող երևույթի հետ»²¹: Բացի դրանց՝ բաղաձայններն իրենց բազմազանությամբ արտահայտչական ավելի մեծ հնարավորություններ ունեն և նպաստում են նաև տաղաշափական խնդիրների լուծմանը: Դիտարկենք օրինակ, որտեղ առկա է **ու** ձայնավորի կուտակմամբ ստեղծված առձայնույթի հնարանք.

*Դուրունց որդի, Դարաբաղը
Դարցնում է քեզ, ո՞ւ ես դու,
Դարաբաղի սիրով վառված,
Աստվածային հուլ ես դու:* (ԸԵ, հ. 2, էջ 121)

¹⁹ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ե, Եր., 1971, էջ 337:

²⁰ Նույն տեղում, էջ 338-339:

²¹ Զրբաշյան Է., Գրականության տեսություն, Եր., 1980, էջ 318:

Վերոնշյալ բանաստեղծական հատվածում ձայնավորների ներդաշնակ կրկնությունը հուզական ուժեղ տպավորության և արտաքին երաժշտականության ստեղծման յուրահատուկ գործոն է դառնում: Զայնավորների արվեստավոր կրկնությամբ խանյանը ոչ միայն առավել բարեհունչ է դարձնում բանաստեղծական խոսքը, այլև ոճական նշված հնարանքը հանդես է բերում որպես գեղարվեստական պատկերի կերտման կարևոր բաղադրիչ: Ահա առձայնութիւն մեկ այլ օրինակ՝ **ո** ձայնավորի կուտակմամբ.

Ո՞վ է ծակատդ շոյում մոր նման,

Յոր նման ո՞վ է դրմերդ բացում,

Ո՞վ է ափսոսում քո սերդ վառման... (ԸԵ, հ. 4, էջ 271)

Զայնավորների կուտակումից ստեղծվում է առձայնությ, ինչն էլ ուժեղացնում է երաժշտական զգացողությունը և դառնում ապրումի արտահայտման յուրօրինակ միջոց: Նկատենք նաև, որ խանյանի ստեղծագործություններում առձայնությի դրսևորումներից մեկն էլ ասոնանսային (մոտավոր) հանգն է, արենյանական բնորոշնամբ՝ ռիթմական առձայնություն²²: Այս դեպքում հնչյունային ոճավորումը ոչ միայն արտահայտչականության, այլև տաղաչափական խնդիրների լուծման միջոց է դառնում: Օրինակ՝

Ով սիրուն աղջիկ, ժպտա աշխարհին,

Այս ի՞նչ իրաշք են, սատանան տանի,

Մեկ-մեկ էլ եղիր իմ հանդեպ բարի,

Քո չեմուչումով իմձ մի սպանիր: (ԸԵ, հ. 4, էջ 161)

Բերված օրինակում **ի** ձայնավորը բանաստեղծին հաղորդում է երգեցիկ և նուրբ երանգ՝ միաժամանակ ստեղծելով տողերի համգավորում:

Խոսքի արտահայտչականության առումով ուշագրավ են նաև այն դեպքերը, երբ բաղաձայնությին միանում է առձայնությը: Զայնավորների և բաղաձայնների նպատակային կուտակումը ոճական յուրահատուկ լիցք է հաղորդում բանաստեղծական խոսքին: Արձայնությի և բաղաձայնությի գուգորդման լավագույն օրինակ է խանյանի «Վարդեր» բանաստեղծությունը, ուր գուգակցում են **վ և ա** հնչյունների կուտակումները: Բերենք մի հատված հիշյալ բանաստեղծությունից:

Գարնանային վարդերի մեջ վարդ աղջիկը վարդամպիտ

Յրեշտակ էր մի վարդահյուս, վարդէ համբույր ու վարդէ գիրկ...

(ԸԵ, հ. 2, էջ 113)

Բաղաձայն ու ձայնավոր հնչյունների ոճական արժեքը բանաստեղծության վերոնշյալ հատվածում պայմանավորված է այդ հնչյունները որպես բաղադրիչ տարրեր ներառող բառերի արտահայտօծ բովանդակությամբ ու հուզապահայտչական երանգավորմանը: Ամբողջ բանաստեղծության մեջ 54 անգամ կրկնվում է **վ** հնչյունը և 204 անգամ **ա** հնչյունը: Միասին այդ հնչյունները ներդաշնակում են բանաստեղծության մեջ արտացոլված ողբերգական տպավորությանը: Եղի Զբրաշյանը վ-ի բաղաձայնությը կապում է նարեկացուց եկող

²² Արենյան Ս., Երկեր, հ. Ե, էջ 341:

վարդի ու վերքի ողբերգական հակադրամիասնության հետ²³: Սակայն, ինչպես իրավացիորեն նշվում է, «դժվար է ասել, թե որոշակի հնչյունների կուտակման միջոցով արտահայտվում է միայն համապատասխան զգացում: Նույն հնչյունի կրկնությունը հաճախ կարող է տարբեր, նույնիսկ իրարամերժ զգացումներ արտահայտել»²⁴: Ահա վ բաղաձայնի հնչյունական ոճավորման այլ օրինակ.

Դանդիակեցին երեկոյի թևերի տակ սիրով վառման,

Ու վարդեր նա նվիրեց իր սիրածին վարդամման: (ԸԵ, հ. 2, էջ 112)

Նշված բանատողերում վ-ի բաղաձայնույթը քնարական հերոսի հիացական տրամադրությունների արտահայտման միջոց է: Վարդը գեղարվեստական պատկերում փերող ու հարատև գեղեցկության խորհրդանշ է: Բնականաբար, եթե այդ բառի հետ գործածվեր ողբերգական տրամադրություն շեշտադրող որևէ բար, բոլորովին այլ հնչեղություն կիաղորդեր բանաստեղծությանը, ինչպես բանաստեղծության ներքորդիշյալ հատվածում:

Նահատակված միրո վիշտը արցունքախար հոգում վառած,

Վարդ աղջիկը վարդափունջն է դմում նրա կրծքին սարած: (ԸԵ, հ. 2, էջ 113)

Յարկ է նշել, որ բաղաձայնույթի և առձայնույթի՝ որպես ոճական հնարանքի կիրառումը խանյանի խոսքարվեստում միանգամայն նպատակային է և պատճառաբանված: Բանաստեղծը, հնչյունական կողմը զուգակցելով իմաստայինին, կարողացել է ստեղծել գեղարվեստական տպավորիչ պատկերներ: Շատ ստեղծագործություններում նույնիսկ լեզվական այդ միավորներով է պայմանավորված չափածոյի համար այդքան հատկանշական երաժշտականությունը, խոսքի գեղեցկությունը, ասել է թե՝ ներդաշնակությունը հիմնականում պայմանավորված է «ոյուրալուր, ոյուրահնչուն» լինելու հանգանաճով²⁵:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խանյանի բանաստեղծության լեզուն բավականին հագեցած է բաղաձայնույթ և առձայնույթ ոճական հնարանքներով, ինչը նրա ստեղծագործություններին հաղորդում է ավելի քնարական և երգեցիկ երանգ:

Խանյանի բանաստեղծական խոսքն աչքի է ընկնում բարեհնչունությամբ ու ներդաշնակությամբ: Նրա լեզուն գեղեցիկ է, չկա բաղաձայնների խճողում. վերջիններս բարեխառնված են ձայնավոր հնչյուններով:

²³ Զրրաշյան Է., Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Եր., 1995, էջ 161:

²⁴ Մելքոնյան Ս., Ալմարկներ հայոց լեզվի ոճարանության, Եր., 1984, էջ 66:

²⁵ Աճառյան Յ., Լիակատար թերականություն հայոց լեզվի: Դամեմատությամբ 562 լեզուների: Ներածություն, Եր., 1955, էջ 253:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Բառապաշարը գրական յուրաքանչյուր ստեղծագործության շինանյութն է: Լեզվի հսկայական այս բառագանձից գրողն ընտրում է այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ է: Իր գրական հայացքների, ինչպես նաև տաղանդի համեմատ այդ նյութին տալիս է արվեստի հատկություն ու ներգործնան ուժ, ինքնատիպ ու անկրկնելի բնույթ, որ բխում է ստեղծագործության ներքին բովանդակությունից և համապատասխանում է գեղարվեստական ներդաշնակության օրենքներին:

Որքան հարուստ լինի գրողի բառապաշարը, այնքան նա ավելի խորն ու բազմակողմանի կներկայացնի նկարագրվող դեպքերն ու երևույթները:

Նաև բառապաշարի հարատությամբ են որոշվում իրականության գեղարվեստական արտացոլման հնարավորությունները:

Ընդհանուր հայերեն (չեզոք) կամ համագործածական բառեր

Ցանկացած գրողի, այդպես նաև Սոկրատ Խանյանի չափածոյի բառապաշարի հիմնական մասը գրական հայերենի ընդհանուր կամ համագործածական բառերն են: Դրանք իրենց քանակով ավելի շատ են, քան մյուս բոլոր շերտերի բոլոր բառերը միասին վերցրած: Այդ ընդհանուր բառաշերտը ինչպես ամեն մի գրողի, այնպես էլ Խանյանի ստեղծագործության բառային կազմի հիմնական աղբյուրն է: Յետևաբար, գրողի բառապաշարի ուսումնասիրությունը պետք է սկսել ընդհանուր բառերի բննությունից՝ ցույց տալով նրանց կատարած ոճական-իմաստային բազմազան ֆունկցիաները գրողի լեզվի մեջ:

Բոլոր գրողներն են օգտվում են մայրենի լեզվի ընդհանուր բառապաշարից, բայց նրանցից յուրաքանչյուրն օգտվում է յուրովի՝ իմաստային նրբություններ մտցնելով հենց այդ ամենասովորական, ամենագործածական բառերի կիրառության մեջ:

Սոկրատ Խանյանը հմտորեն է օգտվել հայ գրական լեզվի ընդհանուր բառերից՝ դրանց հաղորդելով արտահայտչական նոր երանգներ: Ընդհանուր հայերեն բառերի կողքին, բնականաբար, աչքի են ընկնում բանաստեղծական, գրական բառերը: Դրանք, զուգակցվելով ընդհանուր գործածական բառերի հետ, բանաստեղծի խոսքը դարձնում են արտահայտիչ ու պատկերավոր:

Ընդհանուր գործածական բառերը, որ մեր լեզվաբանական և ոճաբանական գրականության մեջ բնութագրվում են «չեզոք» տերմինով, ոճական յուրահատուկ երանգների բացակայության պատճառով, հաճախ ուսումնասիրողների ուշադրությունից դուրս են մնում:

Ինչպես վերը նշեցինք, չեզոք կոչված բառաշերտը բոլորովին էլ չեզոք չէ ոճական իմաստով: Յակառակ դեպքում որևէ լեզվով գրված երկի բառամթերքի ճնշող մասը կզույգեր ոճական արժեքից: Այսպիսի բան չկա և չի կարող լի-

նել: Պարզապես պետք է իմանալ, որ համագործածական կամ չեղոք կոչված բառերն արդեն իսկ հուզականությամբ լիցքավորված բառերի ենթաշերտից տարբերվում են նրանով, որ եթե վերջիններիս համար խոսքաշարը էական դեր չի խաղում, ապա չեղոք բառերը հավելյալ իմաստներով են օժտվում միայն խոսքաշարում, կոնկրետ բառաշղթայում: Բերենք օրինակներ Սոկրատ Խան-յանի պոեզիայից.

*Մաշուկ սարը մերը տիրում է,
Մերը ժպտում է Մաշուկ սարը,
Սիրու նրա մերը փիրուն է,
Մերը անտարբեր ու մերը սարը:*

*Բամաստեղի երգը լսել,
Դիացել է Մաշուկ սարը,
Նրա դաժան մահը տեսել
Ու լացել է Մաշուկ սարը: (ԸԵ, հ. 1, էջ 166)*

Կասկածից վեր է, որ այս փոքրիկ բնագրային վկայության մեջ առկա բոլոր բառական միավորներն անխստիր, ինքնին կամ առանձին վերցրած, ուրիշ իմաստներ չեն արտահայտում, քան դրանց մեջ պարփակված բուն՝ առաջնային կամ, այսպես ասած, բառարանային նշանակությունը (իմնտ. օր՝ տիրել, ժպտալ, անտարբեր, սառը...): Սակայն դրանք որոշակիորեն հյուսված խոսքային շղթայում՝ գուգորդությունների մեջ, լրացուցիչ կերպով օժտվել են իրադրախմասով: Արդյունքում ստեղծվել է չքնար մի բանադրձում, տվյալ դեպում՝ բնության անձնավորում:

Բերենք նմանատիպ այլ օրինակ, որտեղ բարի բուն կամ իմմանական նշանակություններին գումարվել են հավելյալ ոճական իմաստներ:

*Սրտերից ժայթռող ծայներ հավաքեց,
Ապա շաղախեց իր սրտի լույսով,
Սարդկության սիրով լարեց քնարը
Ու գրեց կյանքի սիմֆոնիան հղոր:
Նա մմաս բարով ասաց աշխարհին,
Թողած իր հոգու գանձերը հարուստ,
Դավերժությունը փայփայեց նրան*

Ու մաղթեց սիրով՝ քեզ բարի՝ գալուստ: (ԸԵ, հ. 1, էջ 256)

Դետևաբար, ընդհանուր գործածական բառերը ոճական տեսակետից բնութագրելիս պետք է նկատի ունենալ ոճարտահայտչական և իմաստային այն նրբությունները, որ պայմանավորված են նրանց յուրահատուկ ու մասնավոր կիրառություններով: Ամենագործածական բառերը նոր կապակցությունների մեջ ծեռք են բերում արտահայտչականություն և դրանով էլ դաշնում պատկերավոր: Բարի այդպիսի անսովոր կիրառությունը կարող է փոխել խոսքի ամբողջ բնույթը, հաղորդել նրան իմաստային ու ոճական նոր երանգ: Այսպես, օրինակ.

Քնած հողը ձյումի տակ
 Բարի երազ է տեսել
 Ու երազի ջերմ շնչով
 Զյունե վերմակն է կիսել:
 Կանգնել եմ ես արտի մոտ
 Ու ճայում եմ ժիերին,
 Նրամք արև են ըմպում՝
 Յողի երազն աչքերին:
 Նրամք արև են ըմպում՝
 Յողի, մարդու մեծ սիրով,
 Առատության հերիաբն են
 Յոյւսում գարնան թևերով:
 Պատառ-պատառ ձյուները
 Ուզումքվում են լուսաշող,
 Երևում է, որ իրար
 Յասկացել են ձյուն ու հող...
 (ԸԵ, հ. 1, էջ 376)

Բանաստեղծական այնպիսի հրաշալի մի պատկեր է ծնվել Խանյանի գրչի տակ, ուր գրեթե յուրաքանչյուր երկրորդ բառը հանդես է եկել փոխաբերական իմաստով կամ կրոնկետ բառային միջավայրում ստացած հատուկ նրբիմաստով, այդ պատճառով անիմաստ ենք համարել անգամ կրոնկետ բառեր ընդգծել:

Ընդհանուր գործածական բառերը, լինելով հայոց լեզվի (և ամեն մի լեզվի) հիմքն ու կայուն միջուկը, ըստ էության, պայմանավորում են նրա դեմքն ու դիմագիծը, ինքնաստիպությունը, խոսուն վկան են նրա պատմության անցած փուլերի: Ուստի բնական է, որ այս տեսակի բառերը չեն կարող չընորոշել նաև անհատ գրողի լեզուն, նրա հարազատությունը ժողովորական մտածողությանը: Յանագործածական բառերը գրողի ողջ ստեղծագործության մեջ՝ ամբողջությամբ վեցրած, և յուրաքանչյուր առանձին գործում գեղարվեստական մտածողության լեզվական հյուսվածքի այն հենքն են, որի վրա օդակվում ու ագուցվում են ընդհանուր բառապաշարի մյուս բոլոր ենթաշերտերի հատընտիր միավորները:

Այսպիսով՝ ևս մեկ անգամ հավաստենք, որ Ս. Խանյանի չափածոյի բառապաշարի ամենամեծ շերտը կազմում են ընդհանուր գործածական կամ համագործածական բառերը, որոնց ոճական արժեքը, որ նույն իրադրախմաստն է, դրսկորպում է գուգորդությունների մեջ, խոսքաշարում ու բնագրում:

Խանյանը հմուտ կերպով օգտվել է ընդհանուր բառերի իմաստային բազմազանություններից՝ իր բանաստեղծական բառապաշարը հարստացնելով նույն բառերի տարբեր իմաստների նուրբ կիրառություններով: Այստեղ նկատի չունենք այն իմաստները, որ բառը ծերք է բերում բնագրում յուրահատուկ կիրառության շնորհիվ, այլ այն իմաստները, որ բառարաններում արձանագրված են և այս կամ այն չափով ամրացված տվյալ բառի իմաստային նշանակության մեջ: Այս դեպքում տվյալ բառի՝ տարբեր իմաստներով գործածությունը դիտվում է ոչ որպես հեղինակային, անհատական գործածության արդյունք, այլ բառի բազմինաստությունը դրսկորող միջոց: Բառապաշարի իմաստային ոլորտում արդեն գործածական բառերի՝ նոր իմաստներով կիրառությունները բանաստեղծական խոսքին տալիս են բազմազանություն՝ նպաստելով նաև նրա գեղարվեստականացմանը: Բազմինաստության գործառությը, անշուշտ, պայ-

մանավորված է «ուղղակի իմաստի հիմքով առաջացած փոխաբերական իմաստով»²⁶:

Օրինակ՝

Թուրքն ուզում է **առնել** (գրավել) ճամփան,
Որ տանում է քաղաքամայր... (ԸԵ, հ. 3, էջ 273)

Ավետարանոց-Արցախական հող,
Վարանդա երկրի Մելիքների **զառ** (ոսկի, ոսկեկար) ... (ԸԵ, հ. 3, էջ 268)

Չոհերին ոտքի վրա հիշեցին,
Խորհուրդների մեջ իմաստուն ու չերմ
Նաև հարսանքի օրը **նշեցին** (որոշեցին): (ԸԵ, հ. 3, էջ 163)

....Տիկուրյունս, որ միշտ թաց էր,
Քեզ **կր մմում** (սպասում) սիրով ամշեց: (ԸԵ, հ. 3, էջ 129)

...Նա տագնապած այգի մտավ,
Ճքեց, շրջեց (գրունեց) հուզաքարավ,
Բարևեց հողին: (ԸԵ, հ. 3, էջ 90)

Այնժամ **կիաշվեմ** (կիամարեմ) ես ինձ երջանիկ... (ԸԵ, հ. 1, էջ 31)
Խանյանի ստեղծագործություններում հաճախ է հանդիպում նույն բառի
տարբեր իմաստներով գործածությունը: Սա խոսում է այն նաևին, որ խանյանը
թաջանքում է հայերենի բազմաթիվ բառերի իմաստային նրբերանգներին և
դրանք հմտորեն կիրառել է իր ստեղծագործություններում: Օր՝

...Կրամն ավարտում է խոսքը իր սրտառուչ
Ու հայացքը **ծգում** այգիների հեռուն... (ԸԵ, հ. 3, էջ 66)

...Սակայն որդուդ անցած ճամփան
ծգում է ոնց բարի համբավ... (ԸԵ, հ. 3, էջ 71)

Ստեղծագործական գործնթացի ժամանակ գրողները, օգտվելով բառերի
իմաստային բազմազանություններից, ընտրում են նրանց ամենաբնորոշ
իմաստները՝ տվյալ բովանդակությունը, այս կամ այն միտքը լրիվ և ամբողջա-
կան ձևով արտահայտելու համար: Բառը գեղարվեստական խոսքում ոչ միայն
սոսկ բառական որոշակի, կոնկրետ իմաստ արտահայտող լեզվական միավոր
է, այլև գեղարվեստական որոշակի գործառույթ ունեցող միավոր, դրա համար
էլ բանաստեղծը պետք է հաշվի առնի նրա իմաստային բազմազանություննե-
րը, ուղղակի և փոխաբերական նշանակությունները, կարողանա գտնել յուրա-
քանչյուր բառի մեջ թաքնված արտահայտչական արժեքը, դնել բառային այն-

²⁶ Ելոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 70:

պիսի միջավայրում, որ տվյալ բառը փայլի իր իմաստային հնչեղությամբ, ճշգրտությամբ արտահայտի բանաստեղծի խոհերն ու ապրումները, իրականությունից ստացած նրա տպավիրությունները:

Գրողի չափածո ստեղծագործության բառապաշարի երկրորդ, իր քանակական կազմով միայն համագործածական բառերին զիջող շերտը **զուտ կամ խիստ գրական**, այսպէս ասած, **բարձր ոճի** միավորներն են: Որոշ լեզվաբաններ այս խմբի բառերը կոչում են **հանդիսավոր** բառաշերտ կամ ենթաշերտ:

Այս խմբի բառերը, որ նույնապես կազմում են զգալի մի զանգված, հարաբերակից մյուս շերտերի ու ենթաշերտերի միավորներից տարբերվում են նրանվ, որ առավելապես գործածվում են բարձր գրական ոճի ստեղծագործություններում և ոճաբանորեն, ինքնին հասկանալի է, չնգոք չեն, ավելին, կարելի է ասել՝ ոճաստեղծ են:

Հոնանշային համապատասխան շերտից ընտրելով բարձր ոճի բառեր, ձևեր ու կապակցություններ, Ս. Խանյանը, հիարկե, երբեք չի հասնում վերաբարձրության, ոչ էլ լեզվի հյութագրկման: Զուտ գրական ձևերին միտելու միշտ հղի է այս երկու անցանկալի հետևանքներով: Զուտ գրական միավորները հակադրվում են ամենից առաջ ժողովրդախսակցական ձևերին: Դրանք, բնականաբար, չունեն վերջինիս հատուկ կենդանի շունչը, ավյունը: Եվ որպեսզի լեզուն «չիշութագրկվի», այն սովորաբար համենում են ժողովրդական բառությունց քաղված բառերով ու կապակցություններով: Խոկ երբեմն էլ, որ անհամենատ ավելի դժվար է, լեզվի կենդանությունը կարելի է ապահովել առանց այդ արտաքուստ շոշափելի տարրերի: Դա, ինչ խոսք, դժվար ուղի է, որը և ընտրել է Ս. Խանյանը:

Նրա լեզվին ազգային շունչ ու ոգի են ներարկում ոչ այնքան ժողովրդախսակցական ոլորտին հատուկ բառերն ու ձևերը, որքան ժողովրդական մտածողությունը, ժողովրդին, նրա ազգային ոգուն հարազատ հայեցի լեզվամտածողությունը: Դիտարկենք մի փոքրիկ հատված:

*Թշնամին հոշոտեց սիրտը քո,
Երագր հոշոտել չեղ կարող,
ճախրում ես արծվային քո հոգով*

Ու փարվում Արցախի լուսաշող: (ԸԵ, հ. 2, էջ 148)

Նկատելի է, որ այս հատվածի գրեթե բոլոր բառական միավորները բարձր գրական հնչեղություն ունեն: Զկա ժողովրդախսակցական շերտի մի բառ, բառածն կան կապակցություն: Ոճը ոչ միայն բարձր է ու վսեմ, այլև, կարելի է ասել, երանգակորված է գրքային որոշ տարրերով (հոշոտել, ճախրել, արծվային, փարվել, լուսաշող, մորմոք, քաջասիրտ, նահատակ): Ընդամենը մի քանի տողում այսքան հույժ գրական միավորները, թվում է, որոշակի վերամբարձություն կիաղորդեն բանաստեղծի լեզվին, սակայն իրականում լեզուն որքան գրական է, նույնքան և ժողովրդային, հարազատ հայի հոգուն ու մտածողությանը: Պատճառը Ս. Խանյանի մտածողությունն է, որ խիստ բնաշխարհիկ է, հայկաբան:

Լեզվաբան Ա. Պապոյանը մի առիթով իրավացիորեն գրել է. «Բարձր ու

վսեմ գրական հայերենը, եթե իրոք այդպիսին է, արդեն իսկ ներծծված է ժողովրդական լեզվամտածողությամբ»²⁷:

Սեկ անգամ ևս ընդգծենք, որ այս կարգի բառերը որքան էլ որ հույժ գրական են, առերևույթ նույնիսկ գրքային ու բարձր ոճի կամ հանդիսավոր, այսուհանդերձ, շատ հեռու են վերամբարձությունից: Դրանք պարզապես բնորոշում են գրողի չափածոյի բառամբերի մի ստվար շերտը, որը ոճաբանորեն չեղոք չէ: Այն որքան գեղեցիկ է ու վսեմ, նույնանական հարուստ է ոճական նրբերանգներով: Այս հանգամանքն անկասկած մեծացնում է բանաստեղծական հյուսվածքի ներգործնան թափը:

Ժողովրդախոսակցական և բարբառային բառեր

Սոկրատ Խանջյանի բառապաշարի ընդհանուր շղթայի մեջ որոշակի տեղ են գրավում նաև ժողովրդախոսակցական բառերը:

Բարբառները եղել և մնում են մեր լեզուն սնող հիմնական աղյուլութերից մեկը: Հայերենի բազմաթիվ բարբառներ դեռևս պարունակում են գրական լեզվի կողմից չյուրացված հարուստ բառապաշար, որի՝ գրական լեզու մուտք գործելու ուժին, բնականաբար, մնում է գեղարվեստական գրականությունը: Բանաստեղծը բարբառներից (հիմնականուն Ղարաբաղի բարբառից) վեցըել է այն, ինչը նպաստում է խոսքի հուզականության ու արտահայտչականությանը: Սա գեղարվեստական խոսքին ներկայացվող էական պահանջներից մեկն է:

Դիտարկենք Ս. Խանջյանի «Արցախի արծիվը» պոեմը, որը հագեցած է բարբառային բառերով և արտահայտություններով:

Ինչպես վերը նշեցինք, բարբառային բառերը հանդես են գալիս հիմնականում հերոսների խոսքում, սակայն Խանջյանը պոեմի նախերգում նույնպես օգտագործում է բարբառային և ժողովրդախոսակցական բառեր, և սա պատահական չէ: Չափազանց արհեստական և անհամոզիչ կստացվէր, եթե զուտ գրական բառերով շարադրված նախերգից հետո բանաստեղծն անցում կատարեր ժողովրդախոսակցական ու բարբառային բառերով հագեցած պոեմի գլուխներին: Դրանով հեղինակը օրգանական կապ է ստեղծում պոեմի բոլոր մասերի միջև: Այսպէս, նախերգում հեղինակային խոսքում կարդում ենք.

*Միրտս մեկն առավ քեզ,
Եվ աստղացավ իմ հոգին: (ԸԵ, հ. 3, էջ 136)*

Սեկ այլ հատվածում անգամ համեմատության մեջ կարելի է նկատել ժողովրդախոսակցական տարր. ինչպես-ն ավելի գրական հնչեղություն ունի, քան ոնց-ը.

...Այդ աշխարհն էլ ինչպես եղեմ
Զգվել էր ոնց լեռնապար: (ԸԵ, հ. 3, էջ 137)

Ինչպես տեսնում ենք, բերված հատվածում բանաստեղծը միաժամանակ օգտագործել է և ինչպես-ը, և ոնց-ը, բնականաբար սա հետապնդում է նաև այլ

²⁷ Պապոյան Ա., Պ. Աևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1970, էջ 26:

նպատակ, այն է՝ խուսափել կրկնօւթյունից, ինչպես նաև ելնելով տաղաչափական սկզբունքներից՝ վաճերի քանակից:

Նույն նախերգում հանդիպում ենք.

... Իր հավատին հավատարիմ՝

ճամփա չտա խուժանին: (ԸԵ, հ. 3, էջ 138)

Այստեղ հանդիպում ենք նաև սեռական հոլովի բարբառային կամ խոսակցական կազմության.

... Ուր չոքել էր վիշապն ինչպես

Դագարացոց (հագարացիների) գորքը խիտ: (ԸԵ, հ. 3, էջ 138)

Մեկ այլ տեղ՝

Գիտեմ, որ ինձ ես հիշում ու լաիս,

Ինձ ես որոնում **սողերանց** շարքում: (ԸԵ, հ. 3, էջ 258)

Վարպետ գրողն օգտվում է ոչ միայն ժամանակակից հայերենի բառական հարստությունից, այլև գրաբարի, ժողովրդական կենդանի խոսքի ու բարբառների կենսունակ տարրերից: Երբ ասում ենք, թե գորոյ լեզուն պետք է գերծ լինի բարբառայնությունից, արխակ բառերից, դա ամենահն էլ չի նշանակում, թե դրանք առհասարակ անընդունելի են գեղարվեստական խոսքի համար: Դիտարկենք հետևյալ օրինակները.

Մետաքսի գործվածք, աղած համով ծուկ,

Յավերի տակից նոր վերցրած տաք ծու,

Չորթան, պղկարան, շլորի լավաշ,

Այն ամենն, ինչից կստացվի լավ ճաշ... (ԸԵ, հ. 3, էջ 145)

Շուշանիկը իր հոր կանչից

Զգաստացավ ու խո՛ր շնչեց.

-Այստե՞ղ եմ, հայր, աղբրին մոտիկ: (ԸԵ, հ. 3, էջ 158)

-Գնա՞նք,- ասաց,- քերի՛ Աղամ,

Սենք էլ ումենք մի չաղ կիստար... (ԸԵ, հ. 3, էջ 159)

Հաճախ ոչ միայն դժվար, այլև անհնարին է լինում այդ կարգի բառերի փոխարինումը գրական համապատասխան հոմանիշներով: Այս կարգի բառերից ոչ մի գործ չպետք է խուսափի, որոնք բանաստեղծի խոսքի մեջ բերում են իրենց յուրահատուկ համն ու հոտք, յուրօրինակ կոլորիտը: Օր՝

...**Այած փարվել էր նորդնժա հարսին,**

Սայրը նայում էր նրա թոլս վարսին... (ԸԵ, հ. 3, էջ 169)

Բայց թշնամին առել ճամփի թեք կրնակը

Ու չեր թողնում, որ մարդ անցնի անգամ ոտոն: (ԸԵ, հ. 3, էջ 188)

Դարձ չկա, թերևս, թերել բոլոր բարբառային և խոսակցական բառերը, սակայն ևս մեկ անգամ նշենք, որ նպատակային կերպով բանաստեղծը պունը հագեցրել է նման բառերով՝ փորձելով ստեղծել տեղի և պատմական ժամանակահատվածի կոլորիտ, ինչը նրան հաջողվել է:

Խանյանը հաճախ է գործածում **ջան** բառը, որը չի կարող փոխարինվել

գրական ոչ մի բառով: Գեղարվեստական գրականության մեջ նմանօրինակ բառերի դերը կարևորելով՝ Յովհաննես Թումանյանը դիպուկ պատասխան է տալիս այն քննադատներին, ովքեր պահանջում էին նման բառերից մաքրել գրական լեզուն: «...Առաջարկում եք «ջան»-ի տեղ գործաժել «հոգյակ»..., այսուհետև փոխանակ ախաբեր ջան կամ Գրիգոր ջան ասելու, մաքրուր հայերենով կասենք հոգյակ եղբայր կամ հոգյակ Գրիգոր...: Մի՞թե չեք տեսնում, որ հոնքը շինելու տեղ, աչքն էլ հանում եք», - գրում է բանաստեղծը²⁸:

Բազմավանկ բառերում **ա** ձայնավորի սղումը, ինչպես հայտնի է, միջինհայերենյան շրջանի հնյունափոխական երևոյթ է, որը պահպանվել է նաև արևմտահայերենում և Կարմն բարբառի խոսվածքներում²⁹: Բերենք մի քանի օրինակ՝ շաբթով (ԸԵ, հ. 1, էջ 359), քեզմից (ԸԵ, հ. 1, էջ 418), մեզմից (ԸԵ, հ. 1, էջ 437), հնձնից (ԸԵ, հ. 4, էջ 165), փեսին (ԸԵ, հ. 3, էջ 173), քարվան (ԸԵ, հ. 3, էջ 168) և այլն: Երբեմն նկատելի է նաև այլ ձայնավորի սղում (տվյալ դեպքում *ի* ձայնավորի), ինչզ նույնպես բառին հաղորդում է բարբառային երանգ, ինչպես օրինակ՝ հարանքում (ԸԵ, հ. 3, էջ 167):

Ժողովրդախոսակցական բառաշերտի մասն են կազմում նաև նվազական, փոքրացուցիչ ածանցներով կազմված բառերը, որոնք ոչ միայն արտահայտչականություն են տալիս բանաստեղծական խոսքին, այլև ընդգծում են բանաստեղծի գորովագուր վերաբերմունքը հանճապատասխան առարկայի կամ անձի նկատմամբ: Խանյանի խոսքարվեստում ոճական նման գործառություն են օժտված փոքրիկ (ԸԵ, հ. 2, էջ 291), շնիկ (ԸԵ, հ. 2, էջ 293), քույրիկ (ԸԵ, հ. 2, էջ 300), արջուկ (ԸԵ, հ. 2, էջ 300), Սուսիկ (ԸԵ, հ. 2, էջ 303), բալիկ (ԸԵ, հ. 2, էջ 306), գառնուկ (ԸԵ, հ. 2, էջ 307), կարմրաթշիկ (ԸԵ, հ. 2, էջ 318), աշիկներ (ԸԵ, հ. 2, էջ 322), որբուկ (ԸԵ, հ. 2, էջ 325), ուլիկ (ԸԵ, հ. 2, էջ 327), թոռնիկ (ԸԵ, հ. 2, էջ 330), հորոռուկ (ԸԵ, հ. 1, էջ 360), թխլիկ (ԸԵ, հ. 1, էջ 360), տաղիկ (ԸԵ, հ. 1, էջ 352) և այլ բառեր: Յայտնի է, որ նվազափաղաքշական ածանցներով կազմված բառերը ժողովրդական ոճավորման երանգ են կրուն: Խոսքային համապատասխան միջավայրով են պայմանավորված նվազափաղաքշական ածանցներով կազմված բառերի գործածությունները, որոնց ստեղծած արտահայտչականությունը բանաստեղծական խոսքը դարձնում է ազրեցիկ ու հուզական:

²⁸ Թումանյան Յ., Երկերի ժող. 6 հատորով. հ. 4, Քննադատություն և հրապարակա-խոսություն (1892-1921), Եր., 1951, էջ 142:

²⁹ Ղազարյան Ս., Միջին հայերեն, գ. 1, Եր., 1960, էջ 191-192, Սարապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրը, Եր., 2006, էջ 30, Մկրտչյան Յ., Կարմն բարբառը, Եր., 1952, էջ 13:

Հարադրություններ

Խոսելով գրողի խոսքաշարում հանդիպող ժողովրդախոսակցական տարրերի մասին՝ ամենից առաջ պետք է առանձնացնել **հարադրությունները**:

Հարադրությունները բարդության մի տեսակ են՝ վերլուծական կազմությամբ: Սրանք ամենից ավելի հատուկ են հայոց ազգային լեզվանտածողությամբ, գործածվում են առավելապես ժողովրդախոսակցական լեզվում, հենց այդ պատճառով է նույնպես զուրկ են չեզոքությունից: Այս կարգի բարդությունները ամենից առաջ բնութագրվում են նրանով, որ գրական երկը համեմում են ժողովրդական լեզվանտածողության տարրերով:

Իրենց խոսքիմասային յուրահատկությամբ հարադրավոր բարդությունները բաժանվում են երկու խմբի՝ բայական և անվանական:

Նման հարադրությունները գործածված են նաև Խանյանի ստեղծագործություններում՝ աչքի ընկնել, ճանապարհ ընկնել (ԸԵ, հ. 3, էջ 81), անց կենալ (ԸԵ, հ. 3, էջ 151), սիրել-շահել (ԸԵ, հ. 3, էջ 176), ծառս լինել (ԸԵ, հ. 2, էջ 90), քշել-տանել (ԸԵ, հ. 3, էջ 238), գնալ-ծուլվել (ԸԵ, հ. 2, էջ 116), անցնել-գնալ (ԸԵ, հ. 3, էջ 189), հարցմունք անել (ԸԵ, հ. 3, էջ 90), աչքը ճպել (ԸԵ, հ. 3, էջ 334):

Հարադրավոր բայերից բացի Ս. Խանյանի չափանոյում մի յուրօրինակ բառաշերտ են կազմում նաև անվանական հարադրությունները, որոնց մեջ գերակշռում են գոյականական և ածականական կազմությամբ բաղադրությունները: Այս կարգի հարադրությունները դասակարգվում են բաղադրիչների՝ 1.շարահյուսական հարաբերությամբ, 2.իմաստային հարաբերության հիմունքներով: Ըստ բաղադրիչների ներքին՝ շարահյուսական հարաբերության, սրանք կարող են կազմված լինել «Լրացում-լրացյալից, և համադաս անդամներից, և նույնիսկ միևնույն բարի կրկնությունից»³⁰: Ըստ կազմիչների իմաստային հարաբերության՝ ստորակարգվում են նույնական, առնչակցական և հակադրական ենթատեսակների: «Նույնական են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները նույն իմաստն ունեն կամ իմաստով մոտ են, ինչպես՝ գոռում-գոյցուն....»³¹: «Առնչակցական են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները իմաստով առնչակից են, ինչպես՝ թուր ու թվանք, թև ու թիկունք: Նակադրական կապակցության մեջ հարադրությունների բաղադրիչները հակադիր իմաստներ ունեն, ինչպես՝ ամառ-ձնեռ, լավ-վատ»³²:

Ստորև բերենք հարադրությունների օրինակներ, որոնք հանդիպում են Ս. Խանյանի բառապաշտությունում:

Նույնական հարադրություններ - կիսատ-պրատ (ԸԵ, հ. 3, էջ 115), դուռ ու դարպաս (ԸԵ, հ. 3, էջ 239), գյուղ ու շեն (ԸԵ, հ. 3, էջ 148), կտուր ու տանիք (ԸԵ,

³⁰ Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 162:

³¹ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, հ. Ա, Եր., 1990, էջ 213:

³² Նույն տեղում, էջ 213-214:

հ. 3, էջ 155), խանում-խաթում (ԸԵ, հ. 3, էջ 172), ահ ու սարսափ (ԸԵ, հ. 4, էջ 63), շանթ ու կայծակ (ԸԵ, հ. 3, էջ 184), հոլր-կրակ (ԸԵ, հ. 3, էջ 231), կարգ ու կամոն (ԸԵ, հ. 3, էջ 202), զրույց ու խոսք (ԸԵ, հ. 3, էջ 207), խոսք-զրույց (ԸԵ, հ. 3, էջ 207), ոլոր-մոլոր (ԸԵ, հ. 1, էջ 35), չար ու ամգուր (ԸԵ, հ. 3, էջ 240), դղիրդ ու որոտ (ԸԵ, հ. 3, էջ 243), վիզ ու սատար (ԸԵ, հ. 3, էջ 245), գյուղ ու ավան (ԸԵ, հ. 3, էջ 245), վաճար ու եկեղեցի (ԸԵ, հ. 3, էջ 246), շանթ-կրակ (ԸԵ, հ. 2, էջ 117), տաղ ու երգ (ԸԵ, հ. 2, էջ 148), խենք ու խելառ (ԸԵ, հ. 2, էջ 170), ճար ու հնար (ԸԵ, հ. 2, էջ 187), դեղ-բալասան (ԸԵ, հ. 3, էջ 277) և այլն:

Առնչակցական հարադրություններ - դաշտ ու արտ (ԸԵ, հ. 3, էջ 244), թևիկունք (ԸԵ, հ. 3, էջ 91), թռո ու թաց (ԸԵ, հ. 3, էջ 91), ուշք ու միտք (ԸԵ, հ. 2, էջ 187), սեր-ամրջանք (ԸԵ, հ. 3, էջ 125), գիր ու գիրը (ԸԵ, հ. 3, էջ 143), զորք-զորագլուխ (ԸԵ, հ. 3, էջ 150), լաց ու կանչ (ԸԵ, հ. 3, էջ 155), կարմիր-կանաչ (ԸԵ, հ. 2, էջ 117), վար ու ցան (ԸԵ, հ. 3, էջ 178), ավար-ոսկի (ԸԵ, հ. 3, էջ 181), աղ ու հաց (ԸԵ, հ. 3, էջ 207), կրակ-շանթ (ԸԵ, հ. 3, էջ 220), կայսր-երիտրութք (ԸԵ, հ. 3, էջ 222), տուն ու տեղ (ԸԵ, հ. 3, էջ 247), տուն-տեղ (ԸԵ, հ. 3, էջ 236), արած-դրած (ԸԵ, հ. 2, էջ 77), խաղ-զրույց (ԸԵ, հ. 4, էջ 48), թռո ու ծոռներ (ԸԵ, հ. 4, էջ 83), ճիչ ու որոտ (ԸԵ, հ. 4, էջ 85), սիրտ ու արյուն (ԸԵ, հ. 4, էջ 144), ուժ ու ավյուն (ԸԵ, հ. 4, էջ 144), շղող ու շաղ (ԸԵ, հ. 4, էջ 129), թռի ու թռի (ԸԵ, հ. 2, էջ 181), թռն ու դադար (ԸԵ, հ. 3, էջ 245), գիր ու մատյան (ԸԵ, հ. 3, էջ 246), սիրտ ու հոգի (ԸԵ, հ. 2, էջ 141), աչք-ունք (ԸԵ, հ. 2, էջ 179), հարգանք ու կշիռ (ԸԵ, հ. 3, էջ 192), նետ ու աղեղ (ԸԵ, հ. 3, էջ 287) և այլն:

Ճակատրական հարադրություններ - օր ու գիշեր (ԸԵ, հ. 3, էջ 120), իշխան ու ռամիկ (ԸԵ, հ. 3, էջ 173), ահել-ջահել (ԸԵ, հ. 3, էջ 174), ձմեռ-ամառ (ԸԵ, հ. 3, էջ 196), ծեր ու մանուկ (ԸԵ, հ. 3, էջ 233), եկող-գնացող (ԸԵ, հ. 2, էջ 123), տեր ու ծառա (ԸԵ, հ. 4, էջ 96), ապած-չապած (ԸԵ, հ. 4, էջ 116), հին ու նոր (ԸԵ, հ. 4, էջ 129), վեր ու վար (ԸԵ, հ. 2, էջ 122), առ ու ծախ (ԸԵ, հ. 2, էջ 125), աջ ու ծախ (ԸԵ, հ. 3, էջ 247), ծնունդ ու մահ (ԸԵ, հ. 2, էջ 147), ել ու մուտ (ԸԵ, հ. 3, էջ 310) և այլն:

Ինչպես նկատում ենք բերված օրինակներից, Խանյանի բառապաշտում առավելապես հանդիպում են նույնական և առնչակցական հարադրությունները, որոնք բանաստեղծի խոսքին հաղորդում են յուրատեսակ պատկերավորություն և հյութեղություն:

Խանյանի չափածոյում գործածված բազմաթիվ հարադրություններն ավելի ընդհանրացված և հարուստ բովանդակություն են պարունակում, քան նրանց բաղադրիչների արտահայտած ինաստների սոսկական գումարը:

Ահա հենց սա էլ պայմանավորում է նման տեսակի բաղադրությունների ոճական արժեքը:

Սոկրատ Խանյանի ստեղծագործությունները հարուստ են հարադրություններով, որոնք նրա բանաստեղծական խոսքը դարձնում են ավելի հյութեղ, պատկերավոր և կոլորիտային:

Դարձվածքներ

Մեծ է և բազմաբնույթ նաև դարձվածքների ոճական արժեքը գեղարվեստական խոսքում: Դարձվածքները «խտացված խոսքի անզուգական արտահայտություն են»^{33:}

Խոսելով գրողի բառապաշտում եղած դարձվածքային կապակցությունների մասին՝ անհրաժեշտ է ցուց տալ նաև նրա կազմած դարձվածքային նոր արտահայտությունները, որովհետև գրողներն ու բանաստեղծները կազմում են բազմաթիվ նոր, հաջողված պատկերավոր արտահայտություններ, որոնք շատ անգամ ընդհանրանում են և վերածվում թևավոր խոսքերի: Այս առումով բավականին հարուստ է խանյանի պոեզիան, ինչը նույնպես խոսում է բանաստեղծի պատկերավոր և լայնախոհ մտածելակերպի մասին: Այսպես՝

...Վերջին փետուրը հողմերիմ կտամ ես Յայաստամի... (ԸԵ, հ. 3, էջ 182)

...Սի տեղ չոքած ոտք էր լիզում... (ԸԵ, հ. 3, էջ 182)

Առաջնորդներին մատը թափ տալիս տեսել են նրան...

... Նրան տեսել են հերն անիծելիս մենգ Բեղավորի... (ԸԵ, հ. 3, էջ 209)

Ոսիխը աղ է ցանում

Խորացող մեր մեջ վերջին: (ԸԵ, հ. 3, էջ 232)

Ելիր ոտքի, ցավի տանեմ... (ԸԵ, հ. 3, էջ 248)

...Ուր վտանգ կար, նա այնտեղ էր,

Դարձած անպարտ թև ու թիկունք... (ԸԵ, հ. 3, էջ 275)

Մենակ դո՛ւ չես իռ թշնամու հախից գալու... (ԸԵ, հ. 3, էջ 276)

Թիկունք դարձամք, հույս տվինք... (ԸԵ, հ. 2, էջ 79)

Թևեր տվինք դարերին... (ԸԵ, հ. 2, էջ 80)

Սակայն մենք կու չեմք գմացել ցավին... (ԸԵ, հ. 2, էջ 80)

Խաչի պապս կարող էր

Ծնկի թերել գոռ դկին... (ԸԵ, հ. 2, էջ 82)

Ժայռերից ժայռ տված իմ հաղթ ոտքերի տակ,

Ողջ Սյունիքը դարձել եմ կարկտաքակ: (ԸԵ, հ. 3, էջ 194)

³³ Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 193:

Դարձվածները ոչ միայն արտահայտչական երանգ են հաղորդում բանաստեղծական տողերին, այլև ոճավորում են խոսքը, «մեծ հնարավորություններ են ընձեռում արտահայտելու խոսողի անմիջական ապրումներն ու առավելապես ընդգծելու տվյալ պահի՝ նրա տրամադրությունները»³⁴:

Յուրաքանչյուր գրող ու բանաստեղծ կազմում են որոշ կապակցություններ, որոնք կարող են գործածվել նախ որպես բանաստեղծական թևավոր արտահայտություններ, ապա անցնելով համաժողովրդական լեզվի մեջ, համընդհանուր գործածություն ստանալ, կայունանալ և վերածվել դարձվածքային արտահայտությունների:

Նորարանություններ

Գեղարվեստական գրականությունը հսկայական դեր ունի մայրենի լեզվի հարստացման գործում: Մեր լեզվի բառային կազմն անընդհատ համալրվում է նորակերտ բառերով, որոնց գալիք մասը լեզվի մեջ է մտնում հատկապես գեղարվեստական գրականության միջոցով:

Խանյանը հմտորեն է օգտվել հայոց լեզվի բառային կազմի հարստությունց, սակայն նա չի բավարարվել միայն այդ բառապաշարից ընտրություն կատարելով, բառերը ճիշտ ու տեղին գործածելով: Նա ոչ միայն օգտվել է մեր լեզվի հարուստ բառապաշարից, այլև իր ակտիվ վերաբերմունքն է ցուցաբերել մեր լեզվի բառական հարստության նկատմամբ: Այդ արտահայտվել է նրանով, որ նա մեր լեզուն հարստացնել է բազմաթիվ նորակերտ բառերով, որոնք աչքի են ընկնում իրենց հասկանալիությամբ, կազմության ճշտությամբ, իմաստային ու արտահայտչական նրբությունների բազմազանությամբ: Խանյանի նորակազմությունների մեջ մասը պարզ են ու հասկանալի՝ կազմված հայոց լեզվի բառակազմական օրենքներին համապատասխան: Դեղինակային նորաբանությունը որքան հասկանալի լինի ու ճիշտ կազմված, այնքան ավելի մեծ կլիմի նրա արժեքը և շուտ կընդիմանանա լեզվի մեջ:

Նորակերտ բառերը ստեղծվում են եղած բառերի ու արմատների հիման վրա՝ բառակազմական տարրեր միջոցներով (բառաբարդում, բառածանցում):

Խանյանի բառապաշարում հանդիպում ենք և՛ բառաբարդման, և՛ բառածանցման ճանապարհով կազմված նորակերտ բառերի:

Խանյանը բարդ բառեր է կազմում տարրեր խոսքի մասերի բազմազան գործորդություններով՝ բաղադրիչ տարրերի շարահյուսական տարրեր հարաբերությամբ ու խոսքիմասային տարրեր արժեքով:

Գոյականի գուգորդություն գոյականի հետ՝ ածականի խոսքիմասային արժեքով՝ արևահունց (ԸԵ, հ. 3, էջ 121), հանճարաշուրը (ԸԵ, հ. 3, էջ 142), ճնճուկաթը (ԸԵ, հ. 3, էջ 144), ծաղրատոն (ԸԵ, հ. 3, էջ 174), երկարակող (ԸԵ, հ. 3, էջ 181), վիշապահող (ԸԵ, հ. 3, էջ 181), Գրիգորաշունչ (ԸԵ, հ. 3, էջ 208), հեթիարաշուրը (ԸԵ, հ. 3, էջ 245), մեսրոպանուն (ԸԵ, հ. 2, էջ 103), տերյանալուր

³⁴ Բաղիկյան Խ., Դարձվածքային ոճաբանություն, Եր., 2000, էջ 15:

(ԸԵ, հ. 2, էջ 168), աստղահեր (ԸԵ, հ. 2, էջ 181), աստղաառէց (ԸԵ, հ. 2, էջ 181), աստղակունակ (ԸԵ, հ. 2, էջ 269), պապենաշուրթ (ԸԵ, հ. 4, էջ 62):

Գոյականների գուգորդությամբ կազմված բարդություններն ունեն նաև գոյականի խոսքիմասային իմաստ՝ թուրքահունձ (ԸԵ, հ. 3, էջ 273), հարսնաերգ (ԸԵ, հ. 3, էջ 302):

Գոյականի բաղադրություն ածականի հետ՝ ածականի նշանակությամբ՝ թխագիսակ (ԸԵ, հ. 3, էջ 145), հմտաձեռ (ԸԵ, հ. 3, էջ 146), շուրջառատ (ԸԵ, հ. 2, էջ 117), նորեփ (ԸԵ, հ. 3, էջ 165):

Գոյականի և ածականների բաղադրությունը բայարմատի կամ բայահիմքի հետ՝ երկու դեպքում էլ բարդությունը ստանում է հիմնականում ածականի խոսքիմասային արժեք, օրինակ՝ Առանաժին (ԸԵ, հ. 3, էջ 139), արցախակամ (ԸԵ, հ. 3, էջ 141), շանթակուտակ (ԸԵ, հ. 3, էջ 174), ամպուպակուր (ԸԵ, հ. 3, էջ 184), սրտապարար (ԸԵ, հ. 3, էջ 208), արցախատենչ (ԸԵ, հ. 3, էջ 208), մտագալար (ԸԵ, հ. 3, էջ 233), նենգածին (ԸԵ, հ. 3, էջ 238), հայակեր (ԸԵ, հ. 3, էջ 264), (սական համրիպում է նաև «լեշակեր» գոյականը (ԸԵ, հ. 3, էջ 181)), ժողովրդածին (ԸԵ, հ. 3, էջ 313), լուսառար (ԸԵ, հ. 3, էջ 341), ցավազարդ (ԸԵ, հ. 4, էջ 109), հուսածին (ԸԵ, հ. 4, էջ 115):

Խանյանի բառապաշարում տեղ գտած նորաբանությունների մեջ ուշադրության են արժանի բայական նորակազմությունները: Գոյականներից բայեր կազմելը հեղինակային նորակազմությունների ստեղծման հիմնական եղանակներից մեկն է, որը, ըստ L. Եգելյանի, կատարվում է լեզվական նմանողության (անալոգիա) սկզբունքով և նպաստում է սեղմությանը³⁵: Դրանք կազմվում են անվանական խոսքի մասերից, հիմնականում գոյականներից և ածականներից՝ բայական համապատասխան ձևույթներով, օր.՝ աստղանալ (ԸԵ, հ. 3, էջ 136), թրագարկ անել (ԸԵ, հ. 3, էջ 150), խոսք կայծակել (ԸԵ, հ. 3, էջ 188), արև պահել (ԸԵ, հ. 4, էջ 127), փարոսել (ԸԵ, հ. 3, էջ 193), արցախվել (ԸԵ, հ. 3, էջ 225), փափախել (ԸԵ, հ. 3, էջ 238), հեքիաթվել (ԸԵ, հ. 3, էջ 249), քարավանվել (ԸԵ, հ. 3, էջ 251), կակաչվել (ԸԵ, հ. 3, էջ 257), արձվանալ (ԸԵ, հ. 3, էջ 225), երակվել (ԸԵ, հ. 4, էջ 62), շարականվել (ԸԵ, հ. 4, էջ 67), ուղունքվել (ԸԵ, հ. 4, էջ 112), արմատագերծվել (ԸԵ, հ. 4, էջ 120), օջախվել (ԸԵ, հ. 4, էջ 126):

Վերոնշյալ արցախվել, հեքիաթվել, քարավանվել, կակաչվել, երակվել, շարականվել օրինակներում հանդես եկող -վ- ածանցը, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Արրահամյանը, ոչ թե թերականական ձևույթ է, այլ հանդես է գալիս «բառակազմական- բաղադրական դերով»³⁶:

Խանյանի նորակերտ բառերի մեջ մասը կարող են նշնել ոչ միայն մեր բանաստեղծական բառապաշարի, այլև մեր լեզվի բառային կազմի մեջ: Այդ նորաբանություններն իրենց ճիշտ, լիիմաստ կազմության շնորհիվ դառնում են արտահայտիչ ու դիպուկ՝ խամանի բանաստեղծական խոսքին տալով ակտիվություն և ներգործուն ուժ: Խանյանի ստեղծագործությունների բառապաշ-

³⁵ Եգելյան L., Յայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 139:

³⁶ Արրահամյան Ա., Բայց ժամանակակից հայերենում, գ. 1, Եր., 1962, էջ 656:

րում եղած նորակերտ բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում կազմված են ճիշտ, հայոց լեզվի բառակազմական կանոններին համապատասխան:

Նոր բառեր կազմելիս խանյանն օգտվում է նաև մեր լեզվի բառակազմական մի այլ հնարավորությունից՝ **բառածանցումից**: Այսպես՝ սերություն (ԸԵ, հ. 3, էջ 101), արցախական (ԸԵ, հ. 3, էջ 208), սարինյանական (ԸԵ, հ. 4, էջ 51), լուսնաշողով (ԸԵ, հ. 3, էջ 140), հորթավարի (ԸԵ, հ. 1, էջ 245), Արյուծստան (ԸԵ, հ. 3, էջ 393), դարեղեն (ԸԵ, հ. 4, էջ 68), կրորուստալից (ԸԵ, հ. 4, էջ 111):

Առավել հաճախ են հանդիպում հարակատար դերբայով նորաբանությունները: Սրանց յուրահատկությունը կայանում է նրանում, որ հիմնականում կազմված են հասուլի անուններից, սակայ դեպքերում հասարակ գրյականերից, օրինակ՝ քրիստոնացած (ԸԵ, հ. 3, էջ 189), վարդանված (ԸԵ, հ. 3, էջ 244), ավարայրված (ԸԵ, հ. 3, էջ 244), անդրամիկված (ԸԵ, հ. 3, էջ 273), նժդեհված (ԸԵ, հ. 3, էջ 273), ամարասված (ԸԵ, հ. 3, էջ 273), ավոյացած (ԸԵ, հ. 3, էջ 274), խաչենված (ԸԵ, հ. 4, էջ 51), արշալուսված (ԸԵ, հ. 2, էջ 113), ավերակված (ԸԵ, հ. 3, էջ 245), առասպելված (ԸԵ, հ. 3, էջ 273), սարդարապատված (ԸԵ, հ. 3, էջ 314), այբուբենված (ԸԵ, հ. 4, էջ 64), հուշարձանված (ԸԵ, հ. 4, էջ 119) և այլն:

Հազվադեպ հանդիպում են գոյականի և կապի միջոցով կազմված նորաբանություններ, ինչպես օրինակ՝ աստղամերձ (ԸԵ, հ. 2, էջ 131):

Սակայն բանաստեղծի և արհասարակ գրողի բառապաշարում եղած նորաբանությունների մասին խոսելիս չպետք է սահմանափակվել միայն կազմության ճշտությունը ու տվյալ լեզվի բառակազմական օրենքներին համապատասխանությունը հաշվի առնելով, որովհետև դա կիանգեցնի միակողմանի մոտեցման:

Հետևաբար, գրողի բառապաշարում եղած նորակերտ բառերի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն նրանց ինաստային կողմն ու կազմության ճշտությունը, այլև այդ բառերի գեղարվեստական ու ոճական դերը խոսքային կոնկրետ պայմաններում:

Եթե հաշվի ենք առնելու նաև այս վերջին կողմը, ապա նկատում ենք, որ բանաստեղծի կազմած նորակերտ բառի արժեքը չի որոշվում միայն համաժողովրդական լեզվի մեջ գործածվելու և գրական լեզվի բառապաշարը հարստացնելու դերով:

Ստեղծագործական պրոցեսում բանաստեղծին առաջին հերթին հետաքրքրում է այն միտքը, թե ինչպիսի բառ ընտրի կամ կազմի, որ իրեն համակած պարունակությունը արտահայտի ճշտորեն և ամբողջությամբ: Այդ պատճառով համապատասխան բառի որոնումները բանաստեղծի ստեղծագործական պրոցեսի ամենակարևոր կողմներից են, որովհետև բանաստեղծը բազմաթիվ հոմանիշներից միշտ ընտրում է ինչ-որ մեկը, որն առավել դիպուկ է տվյալ դեպքի համար, տվյալ բառային միջավայրում: Եվ բանաստեղծության հաջողությունը պայմանավորված է իենց այդ բառերի ճիշտ ընտրությունով, որտեղ այդ բառերը դառնում են անփոխարինելի:

Հետևաբար, չի կարելի ոճական-գեղարվեստական որոշակի գործառույթ

կատարող նորաբանությունը գնահատել ու արժեքավորել բնագրից դուրս, որտեղ նրա գործածությունը պայմանավորված է լինում ոճական մի շարք յուրահատկություններով:

Բնագրից դուրս ընդգծված նորակազմությունները չեն կարող արտահայտել իմաստային այն բնորոշ նրբերանգները, ինչ որ ունեն:

ճիշտ է, բնագրից դուրս էլ նրանք ունեն իրենց բառական կոնկրետ իմաստները, բայց ոճական լրացուցիչ երանգը չունեն: Երբ նորաբանությունները կտրում ենք իրենց բառական միջավայրից, բառերի ամբողջական կապակցություններից, ապա նկազեցնում ենք նրանց արտահայտչականություննը, և բառերը գրկվում են իրենց կոնկրետ գեղարվեստական ներգործուն ուժից, ոճական այն արժեքից, որ ունեին բնագրությունը:

Այսպիսով, Խանջյանը հմտորեն է օգտվել հայոց լեզվի բառակազմական ձկուն հնարավորություններից, տարբեր ձևույթների բազմազան զուգորդություններով կազմել է բազմաթիվ բառեր ու ածանցավոր բառեր, որոնք աչքի են ընկնում կազմության ծշտությամբ, իմաստային խորությամբ և բանաստեղծի ցանկացած միտքը ծշտորեն կազմված և արտահայտիչ դրսնորելու հատկությամբ: Այդ նորաբանությունները կազմված են ըստ անհրաժեշտության և բոլորովին ինքնանպատակ չեն: Քեդինակը դրանք կազմել է՝ նկատի ունենալով դրանց կենդանի ու գործուն իմաստները: Օգտագործելով մեր լեզվի բառակազմական ձկուն հնարավորությունները՝ Խանջյանը կազմել է բազմաթիվ նոր բառեր, որոնք հարստացնում են ինչպես նրա պոեզիայի, այնպես էլ հայ գրական լեզվի բառային կազմը: Խանջյանի ստեղծագործության բառապաշտությունը տեղ գտած նորաբանությունները հանդիս են գալիս որպես բանաստեղծի ինքնատիպության ու լեզվաօճական յուրահատկությունները դրսնորող տարրեր:

Օտարաբանություններ

Օտարաբանություններ կամ «օտարամուծություններ» են այն բառերը, որոնք առնվում են օտար միջավայրից և տվյալ պահի թելադրանքով գործադրում խոսքում՝ միջավայրի անմիջականությունը ընդգծելու կամ տվյալ գաղափարն այլ կերպ արտահայտելու հնարավորություն չունենալու պատճառվով»:³⁷

Գեղարվեստական խոսքում օտար բառերի գործածությունը սովորաբար պայմանավորված է լինում ոճական զանազան նկատառումներով: Օտար բառերը Խանջյանի ստեղծագործություններում կատարում են ոճական տարբեր ու բազմազան ֆունկցիաներ, որոնցով և պայմանավորված են այդ բառերի գործածությունները: Իրենց ոճական յուրահատուկ երանգի շնորհիվ այդ բառերը ծառայում են որպես միջոց այս կամ այն ժողովրդի կյանքի ու կենցաղի մասին որոշ պատկերացում տալու և տեղական բնորոշ երանգ ու համապատասխան կոլորիտ ստեղծելու համար, օր.՝ ցար (Ըե, հ. 3, էջ 383), պարոլ (Ըե, հ. 3, էջ 86),

³⁷ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, էջ 161:

խարջ (ԸԵ, հ. 3, էջ 141), դիրիեմ (ԸԵ, հ. 3, էջ 145), իմամ (ԸԵ, հ. 3, էջ 152), ալ-լահ (ԸԵ, հ. 3, էջ 186), դորան (ԸԵ, հ. 3, էջ 189), բազրեթ (ԸԵ, հ. 3, էջ 206), գրադ (ԸԵ, հ. 3, էջ 227), պուղիկենս (ԸԵ, հ. 3, էջ 238), ԲԵՏԵՒ (ԸԵ, հ. 3, էջ 242), մուրազ (ԸԵ, հ. 3, էջ 249), չոջուս (ԸԵ, հ. 3, էջ 253), Օմօն (ԸԵ, հ. 3, էջ 265), Նովուուզ բայրամ (ԸԵ, հ. 3, էջ 269), ազիզ անա (ԸԵ, հ. 3, էջ 300), դոմնա (ԸԵ, հ. 3, էջ 103), օրեյ (ԸԵ, հ. 3, էջ 225), Ազարբայջան (ԸԵ, հ. 3, էջ 254), գարդաշ (ԸԵ, հ. 3, էջ 386), շեյքան (ԸԵ, հ. 3, էջ 387), կոստոս (ԸԵ, հ. 3, էջ 404), էրմանի (ԸԵ, հ. 3, էջ 416), դոչիներ (ԸԵ, հ. 3, էջ 422), չայ (ԸԵ, հ. 3, էջ 423):

Ինչպես երևում է բերված օրինակներից, օտար բառերի օգտագործումը Խանջանի ստեղծագործություններում պայմանավորված է ոճական զանազան նկատառումներով: Այդ բառերը բանաստեղծն օգտագործել է պոեմի հերոսի հոգեբանությանը հարազատ ննալու, հերոսների խոսքը ոճավորելու, ինքնատիպ ու արտահայտիչ դարձնելու, միջավայրի հարազատ կոլորիտ ստեղծելու համար:

ՀԱՐԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոսքը ոճավորելու համար կարևորություն են ներկայացնում անցյալում գործածված այն բառերը, որոնք, արդի հայերենում կյանք չստանալով հանդերձ, գործածվում են ըստ անհրաժեշտության: Դրանց դերը գեղարվեստական խոսքում «ավելի շատ ոճական, արտահայտչական է, քան անվանողական»³⁸: Սրանք հնաբանություններն են, որոնք երկու ենթախմբի են՝ բաժանվում՝ հնաբառեր և պատմաբառեր:

Սոկրատ Խանջանի բառապաշարում հանդիպում են հնաբանությունների բոլոր տարատեսակները՝ քանակային որոշակի տարրերությամբ:

Պատմաբառեր են այն բոլոր բառերը, որոնք անվանում են ժողովրդի կյանքի ընթացքում պատմության գիրկն անցած հասկացություններ ու գաղափարներ: Այսպիսի բառեր մեզ պետք են անցյալի կյանքը վերարտադրելիս (պատմական ուսումնասիրություններում ու գեղարվեստական երկերում), երբ համապատասխան հասկացությունների համար արդի հայերենը բառ չի ունենում, և մենք ստիպված ենք լինում դիմել գործածությունից դուրս եկած բառերին: Այսպես, օրինակ, Խանջանի պոեզիայում հանդիպում են՝ երդիկ (ԸԵ, հ. 3, էջ 145), այրուծի (ԸԵ, հ. 3, էջ 150), ազատ (գոյական) (ԸԵ, հ. 3, էջ 150), բազպան (ԸԵ, հ. 3, էջ 152), նիզակ (ԸԵ, հ. 3, էջ 198), ծիրանի (ԸԵ, հ. 3, էջ 165), նակար (ԸԵ, հ. 3, էջ 439), առանշահիկ (ԸԵ, հ. 3, էջ 172), իշխան (ԸԵ, հ. 3, էջ 208), ազատանի (ԸԵ, հ. 3, էջ 180), պայազատ (ԸԵ, հ. 3, էջ 174), բարան (ԸԵ, հ. 3, էջ 185), բուր (ԸԵ, հ. 3, էջ 196), մագաղաք (ԸԵ, հ. 3, էջ 209), մաճկալ (ԸԵ, հ. 3, էջ 227), բյուզանդացի (ԸԵ, հ. 3, էջ 327), կայսր (ԸԵ, հ. 3, էջ 334), լեզեռն (ԸԵ, հ. 3, էջ 347), մատյան գումոր (ԸԵ, հ. 3, էջ 347), ումկ (ԸԵ, հ. 3, էջ 352), վեզիր (ԸԵ, հ. 3, էջ 391), նաժիշտ (ԸԵ, հ. 3, էջ 444) և այլն:

³⁸ Եղեկյան Լ., Յայոց լեզվի ոճագիտություն, էջ 125:

Հնաբառերը նեղ առումով հնաբանությունների մյուս տեսակն են: Սրանք այն բառերն են, որոնց նշանակած գաղափարներն այժմ էլ կան, գոյություն ունեն, սակայն արտահայտվում են այլ բառերով կամ մեր լեզվի զարգացման ներքին օրենքներին համապատասխան ձևափոխվել են, և ներկա ձևն ու իհն ձևը տարբեր ոճական երանգավորումներ ունեն: Այս պատճառով էլ հնաբառերը երկու ենթախմբի ենք բաժանում:

ա. Սրանք այն բառերն են, որոնց իմաստներն այժմ նոր բառերով են արտահայտվում, այսինքն արդի հայերենում ունեն նոյն իմաստն արտահայտող բառեր, սակայն անցյալի պատրանք կամ պատմական բներանգ ստեղծելու նպատակով դիմում ենք իհն, գործածությունից դուրս եկած բառերին: Օրինակ՝ հագարացի (ԸԵ, հ. 3, էջ 153), ռամիկ (ԸԵ, հ. 3, էջ 180), ռետք (ԸԵ, հ. 3, էջ 150), շամանդար (ԸԵ, հ. 3, էջ 150), զանգապան (ԸԵ, հ. 3, էջ 151), ջվալ (ԸԵ, հ. 3, էջ 192), շինական (ԸԵ, հ. 3, էջ 331), շեն (ԸԵ, հ. 3, էջ 331), զորական (գոյական) (ԸԵ, հ. 3, էջ 331), վիրապ (ԸԵ, հ. 3, էջ 252):

բ. Սրանք այն բառերն են, որոնք քերականական հնչյունային և կամ ձևահմաստային փոփոխություններ են կրել և դարձյալ ոճավորման նպատակով գեղարվեստական ստեղծագործության մեջ հանդես են քերվում իրենց իհն ձևով: Օրինակ՝ գրիչ (գրող) (ԸԵ, հ. 3, էջ 146), գավ (ԸԵ, հ. 3, էջ 192), թռչկան (ածական) (ԸԵ, հ. 3, էջ 334), աչքը ճաել (ԸԵ, հ. 3, էջ 334):

Հնաբանություններ են նաև այն բոլոր կապակցությունները (կայուն կապակցություններ, դարձվածքներ և այլն) և առաջարանությունները, որոնց գաղափարները կան, մնում են և արտահայտվում են մեր նոր գրական լեզվի կառույցներում:

Բոլոր հնաբանություններն ընդհանրապես ունեն ոճական լիցքավորում: Դրանք խոսքին կարող են տալ կարևորություն, համոդիսավորություն, հոետոռականություն, հնության փայլ, եթե գործածվում են ճիշտ տեղում և ճաշակով: Հնաբանությունները ստեղծում են բնականության պատրանք, ընթերցողին մտովի տանում վաղ ժամանակների միջավայր և դրանով արտահայտման եղանակը դարձնում հետաքրքրական:

Հնաբառերի մեջ են մտնում նաև գրաբարյան որոշ քերականական ձևեր, որոնք բանաստեղծական խոսքն օժտում են արտահայտչականությամբ և ընդգծում հեղինակի ասելիքը:

Գրաբարը մեր գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցների հարստության հոլսալի գանձարանն է, և ամեն դեպքում, երբ արդի հայերենը որևէ դժվարություն է հանդես բերում, մենք դիմում ենք նրան՝ իբրև անսպառ մի աղբյուրի: Երբեմն գրաբարյան ձևերին ենք տալիս նախապատվությունը գեղարվեստական խոսքի յուրահատկությունների թելադրանքով:

Գրաբարյան բառերի օգտագործումը գրողից պահանջում է հմտություն, գրական բարձր ճաշակ ու լեզվական նրբությունների հմացություն: Եվ որքան հմտորեն է օգտվում գրողը գրաբարյան բառերից, այնքան ավելի արդարացված ու իհնավորված է լինում արխահզմների (հնաբանությունների) գործածությունը նրա ստեղծագործություններում:

Խանյանը, գրաբարյան տարրերից օգտվելիս, կարողանում է իհն, մոռաց-

ված բառերը դնել նոր բառակապակցությունների մեջ, որի շնորհիվ այդ բառերը ստանում են հաճապատասխան ոճական արժեք և ձեռք են բերում նոր արտահայտչականություն: Այսպես օրինակ՝

...Զինքերը հավաքեցին

Մորթապաշտ ու բացբերան: (ԸԵ, հ. 3, էջ 231)

Կամ՝

...Տղաներին ի գե՞ն կոչենք... (ԸԵ, հ. 3, էջ 264)

Յեռվից գերում էր շքերը լերանց... (ԸԵ, հ. 3, էջ 214)

Եղիցս փառք Նժեհին մեծ... (ԸԵ, հ. 3, էջ 239)

Գրաբարյան տարրերն օգտագործելով որպես ոճավորման միջոց՝ բանաստեղծը ցանկանում է իր խոսքին հաղորդել հուզարտահայտչական բարձր լիցը և հանդիսավորություն:

Օր.՝ Եկել է նա, հասել Արցախ, մտել ամեն քաղաք ու բերդ,

Ամարսս է զալիս հիմա Դիզակի քաջ այրերի հետ: (ԸԵ, հ. 3, էջ 207)

Գրաբարյան բառերի օգտագործումը երբեմն էլ պատմական կոլորիտ է հաղորդման ստեղծագործությանը, օրինակ՝

Յովսեմը ժպտաց և դիմեց. «Զինք հավաքիր, իշխան,

Անունդ բարձր է, բայց շաղած կաթ է կարծեն քո հոգին...»: (ԸԵ, հ. 3, էջ 150)

Իսկ հագարացին կրակ է ցանում և գիշեր, և տիկ: (ԸԵ, հ. 3, էջ 153)

Դու՝ մի խաղալիք, մենք՝ մանկտիք վազան,

Քո զորությունը ծանակով խոցող: (ԸԵ, հ. 3, էջ 198)

Եթե գրաբարյան բառն օգտագործված է ճիշտ, իմաստային կողմի հաշվառումով, ապա այնպես է ձուլվում տվյալ բառական միջավայրին, որ բոլորովին էլ չի հակադրվում նրան, այլ, ընդհակարակը, ծեռք է բերում արտահայտչական նոր երանգ: Գրաբարյան բառերի նման կապակցությունը նպաստում է խոսքի պատվերավորությանը, հարստացնում է բանաստեղծի լեզուն: Երբեմն ընդհանուր կապակցության մեջ չի էլ զգացվում այս կամ այն բառի գրաբարյան լինելը: Օր.՝

Յազար իմն հարյուր տասմանքորսին

Վիլիկելմ Երկրորդ ելակ նոր որսի... (ԸԵ, հ. 3, էջ 222)

Մեկ այլ տեղ՝

Կենաց աստղ էր դարձել քաջ Միերի սրտում

Այդ պահանջը արդար և հուրիրան: (ԸԵ, հ. 3, էջ 266)

Մի մայր Երկիր, հինգ թագավոր,

Բյուզանդիոնի, սելջուկի դեմ... (ԸԵ, հ. 3, էջ 409)

Գրաբարյան բառերի գործածությունն անպայման պայմանավորված չէ ոճաարտահայտչական կոնկրետ խնդիրներով. Երբեմն բանաստեղծը դրանց դիմում է այլ նկատառումներով՝ հանգի, բանաստեղծության չափը պահպանե-

լու, իմաստային այս կամ այն նրբությունն արտահայտելու համար:

Օր.՝ Եթե ուզում ես, Բուղա, կամոքը

իմ հարվածներից քեզ հեռու պահել... (ԸԵ, հ. 3, էջ 197)

Դյուր են եկել վարդապետներ, քահանաներ, եպիսկոպոս...

(ԸԵ, հ. 3, էջ 207)

Խոսելով գրողի բառապաշարում եղած **արխահզմների** մասին՝ պետք է նկատի ունենալ, որ դրանք հնացածության աստիճանով տարրեր են իրարից, հետևաբար տարրեր են նաև իրենց բնույթով և օգտագործման հնարավորություններով: Դա բացատրվում է Ջրանով, որ բառերի հնացումը լեզվի մեջ տեղի է ուժենում ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար: Բարի կամ նրա այս կամ այն նշանակության հնացումը երկարատև պատճական պրոցեսի արդյունք է:

Երբ խոսում ենք արխահիկ բառերի մասին, իհարկե նկատի ունենք այն, որ դրանք, որպես հնացած բառեր, դուրս են եկել ամենօրյա գործածությունից, բայց ոչ ընդհանրաբան լեզվից: Հետևաբար հնացած բառերը կարող են օգտագործվել գրողների կողմից և հաճախ էլ օգտագործվում են: Արխահզմները Ա. Մարությանը բնութագրում է որպես բառեր, որոնք հնացել են այն պատճառով, որ նոյն իմաստով մի այլ բառ դրանց դուրս է մղել գործածությունից:³⁹

Նայած այն բանին, թե բառը, որպես որոշակի իմաստ արտահայտող հնչյունական կապակցություն, ամբողջովին անգործածական է ժամանակակից լեզվում, թե՝ հնացել են միայն նրա այս կամ այն իմաստները, արխահզմները բաժանվում են երկու խմբի՝ բառական արխահզմներ և իմաստային արխահզմներ:

Խանյանի բառապաշարում հանդիպում ենք և բառական, և իմաստային արխահզմների:

Իմաստային արխահզմները տարբերվում են բառային արխահզմներից նրանով, որ վերջիններս, որպես բառային միավորներ, մեր լեզվի մեջ այսօր չեն գործածվում, իսկ իմաստային արխահզմները, որպես բառեր, լեզվի մեջ գոյություն ունեն, բայց նրանց մի քանի նշանակություններ արդեն հնացած են: Դենց այդ բառերի՝ հնացած նշանակություններով գործածություններն իմաստային արխահզմներ են:

Գրաբարյան բառերի և առհասարակ արխահզմների օգտագործումը, հետապնդում է գեղարվեստական որոշակի նպատակ, և դրանց գործածությունը պայմանավորված է ոճական զանազան նկատառումներով: Խանյանը հաճախ դիմում է հայոց լեզվի այդ բառաշերտին՝ բանաստեղծական բարձր ոճ, հուզարտահայտչական զանազան նրբերանգներ արտահայտելու համար:

Գրաբարյան բառերը Խանյանի ստեղծագործություններում ինքնանպատակ չեն գործածված, դրանք չեն մնում բանաստեղծի բառապաշարում որպես մեկուսացված տարրեր, այլ ձուլվում են բառապաշարի մյուս շերտերի հետ՝ կատարելով ոճաարտահայտչական որոշակի դեր:

³⁹ Մարության Ա., Ե. Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, էջ 74:

Խանյանն օգտվել է գրաբարյան բառերից, նրանց իմաստային զանազան նրբություններից՝ տալով նրանց գործածության իրավունք և դրանով իսկ հարստացնելով ինչպես իր պոեզիայի, այնպես էլ հայ գրական լեզվի բառային կազմը:

Բառապաշարի իմաստաձևային խմբերի ոճական կիրառությունները

Յոմանիշներ

Հայտնի է, որ գեղարվեստական խոսքի արտահայտչականությունը հաճախ կախված է բառի ճիշտ ընտրությունից, իսկ ընտրության հնարավորություն ամենից առաջ տալիս է հոնանիշների առկայությունը լեզվում:

Խանյանի բանաստեղծական խոսքում լայնորեն օգտագործվում են բառերի իմաստաձևային խմբերի ոճական նրբերանգները: Նրա լեզվին առանձնակի հմայք ու հյութեղություն է հաղորդում նույնանիշների և հոնանիշների առատ օգտագործումը: Դրանց ընտրությունն ու տեղին գործածումը մեծ նշանակություն ունի բանաստեղծական խոսքի ճիշտ կառուցման համար, որ գոռողի բառապաշարի հարստության արտահայտություններից մեկն է: **Յոմանիշներն** աչքի են ընկնում իմաստային բազմազան նրբություններով, ուստի դրանց հաճախակի օգտագործումը հարստացնում և ճոխացնում է գոռողի լեզուն: Խանյանը հմտորեն է օգտվել հայերնի հոնանիշներից և նույնանիշներից՝ դրանով գեղեցկացնելով և հարստացնելով իր լեզուն: Հայտնի է, որ գեղարվեստական խոսքի արտահայտչականությունը հաճախ կախված է բառի ճիշտ ընտրությունից, իսկ ընտրության հնարավորություն ամենից առաջ տալիս է հոնանիշների առկայությունը լեզվում: Ընդունված է ասել, որ հոնանշությունը ոճագիտության հիմքն է: Ասել է թե՝ ոճաբանական ելակետերն ու մոտեցումները հիմնականում գործում են այն դեպքում, եթե կա ընտրության հնարավորություն, եթե կան հոնանիշներ ու զուգաձևություններ:

Մ. Աբեղյանը առաջիններից մեկն էր, ով անդրադարձավ հոնանշության խնդրին և տարբերակելով մերձիմաստ և նույնիմաստ բառերը՝ առանձնացրեց հոնանիշների երկու տարատեսակ՝ համանիշներ և նույնանիշներ⁴⁰: Դետագայում, սակայն, ինչպես նկատում է Ն. Պառնասյանը, «դպրոցական քերականությունների մեջ հոնանիշ և նույնանիշ տերմինները նույնացվեցին, իսկ իմաստային և կիրառական նրբերանգները ունեցող բառերի համար սկսեց գործածվել հոնանիշ տերմինը»⁴¹: Այսպիսով՝ հոնանիշների բնութագրման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հոնանիշները մերձիմաստ կամ նույնիմաստ լեզվական իրակություններ են, որոնք տարբերվում են արտահայտության

⁴⁰ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 159:

⁴¹ Պառնասյան Ն., Շարահյուսական համանիշները Ժամանակակից հայերենում, Եր., 1970, էջ 21:

ձևերով ու ոճական կիրառությամբ:

Ինքնատիպ և գեղեցիկ հոմանիշներով հարուստ է Խանյանի չափածոն: Բանաստեղծը օգտվում է հոմանիշներից երեմն անհարկի կրկնություններից խուսափելու համար: Այսպես, օրինակ.

Դիզափայտը շոյում է **զավակմերին** անձնվեր,

Արևարդ հրճվանքից սեզ գլուխն է օրորում:

Իրար նեցուկ են դարձել **որդիները** Դիզակի... (ԸԵ, հ. 3, էջ 184)

Մեկ այլ տեղ՝

...Որտե՞ղ է ննջում, ո՞ր կաղնու ներքոն կամ ո՞ր ժայռի տակ...

(ԸԵ, հ. 3, էջ 204)

Ուր թշնամանք ու կրակ, ուր պատերազմ կա ահեղ,

Այնտեղ կա և հաղորություն, և պարտություն կա այնտեղ:

Աշխարհացունց **մարտերում** ո՞վ չի խոցվել սրերից... (ԸԵ, հ. 3, էջ 187)

Նույնանիշներից օգտվելիս Խանյանը հաշվի է առնում նրանց ոճական տարրերություններն ու կիրառական առանձնահատկությունները՝ արիի (ԸԵ, հ. 3, էջ 147) - արև (ԸԵ, հ. 3, էջ 153), ծանապարհ (ԸԵ, հ. 3, էջ 83) - ճամփա (ԸԵ, հ. 3, էջ 73), առավոտ (ԸԵ, հ. 2, էջ 302)- այգ (ԸԵ, հ. 3, էջ 234), տանկ (ԸԵ, հ. 3, էջ 243) - հրասայլ (ԸԵ, հ. 3, էջ 242):

Որքան հմտորեն է օգտվում գրողը մայրենի լեզվի հոմանիշներից, այնքան ճիշտ, պատկերավոր ու արտահայտիչ է նրա բանաստեղծական խոսքը: Տվյալ բովանդակության, նտրի, այս կամ այն զգացմունքի նրբերանգներին համապատասխան հոմանիշներ ընտրելը անչափ կարևոր է գեղարվեստական խոսքի համար: Դա պայմանավորված է հոմանիշների յուրահատուկ բնույթով: Յոնմանիշները, ունենալով ընդհանուր, իրար խիստ մոտ նշանակություններ, իրարից տարրերվում են ինաստային նրբերանգներով: Յոնմանիշների մեջ միշտ էլ նկատելի է երկու կողմ.

1. նրանց իմաստային ընդհանրությունը,

2. ամեն մի հոմանիշի մեջ եղած մասնավոր լրացուցիչ իմաստային նրբությունը և հուզաքարտահայտչական այս կամ այն երանքը, որոնցով և պայմանավորված են նրանց ոճական կիրառությունների տարրերությունները:

Դենց այդ լրացուցիչ, երկրորդական իմաստային նրբությունների առկայությունն է հոմանիշների մեջ, որ անհնարին է դարձնում մի հոմանիշի փոխարեն մի այլ հոմանիշի գործածությունը՝ չնայած նրանց իմաստային ընդհանրությանը:

Խանյանը կարողանում է ցանկացած բառային համատեքստում ճիշտ հոմանիշային ընտրություն կատարել, և դրա արդյունքում մենք նրա բառապաշտարում տարրեր համատեքստերում հանդիպում ենք՝

հողագունդ (ԸԵ, հ. 3, էջ 107)-երկրագունդ (ԸԵ, հ. 3, էջ 113)-երկիր (ԸԵ, հ. 3, էջ 196)-աշխարհ (ԸԵ, հ. 2, էջ 183),

գույն (ԸԵ, հ. 3, էջ 112)-երանգ (ԸԵ, հ. 4, էջ 447)-բույր (ԸԵ, հ. 3, էջ 121),

կապույտ (ԸԵ, հ. 2, էջ 183)-բիլ (ԸԵ, հ. 2, էջ 111)-լուրջ (ԸԵ, հ. 2, էջ 337),

պաղատել(ԸԵ, հ. 3, էջ 186)-հայցել(ԸԵ, հ. 3, էջ 186)-խնդրել(ԸԵ, հ. 1, էջ 46)-աղաշել(ԸԵ, հ. 1, էջ 424),

առավիտ(ԸԵ, հ. 2, էջ 302)-այգ(ԸԵ, հ. 3, էջ 139)-լուսաբաց(ԸԵ, հ. 1, էջ 39)-լուսայգ(ԸԵ, հ. 1, էջ 162),

թևածել(ԸԵ, հ. 1, էջ 139)-ճախրել(ԸԵ, հ. 1, էջ 339),

ելուզակ(ԸԵ, հ. 3, էջ 253)-ավազակ(ԸԵ, հ. 3, էջ 256),

թշնամի(ԸԵ, հ. 4, էջ 228)-ոսոյն(ԸԵ, հ. 2, էջ 75),

փոթորիկ(ԸԵ, հ. 4, էջ 179)-հողմ(ԸԵ, հ. 1, էջ 392)-խորշակ(ԸԵ, հ. 3, էջ 198)-սամում(ԸԵ, հ. 3, էջ 199)-քամի(ԸԵ, հ. 1, էջ 100)-մրդիկ(ԸԵ, հ. 1, էջ 408),

խավար(ԸԵ, հ. 1, էջ 91)-մութ(ԸԵ, հ. 1, էջ 245),

կրակ(ԸԵ, հ. 3, էջ 124)-հոլոր(ԸԵ, հ. 3, էջ 84)-պող(ԸԵ, հ. 2, էջ 84),

երազ(ԸԵ, հ. 2, էջ 431)-պատրանք(ԸԵ, հ. 3, էջ 125),

երկնագնա(ԸԵ, հ. 1, էջ 226)-վերսլացիկ(ԸԵ, հ. 1, էջ 226)-վերձիգ(ԸԵ, հ. 2, էջ 75),

արփի(ԸԵ, հ. 3, էջ 147)-արև(ԸԵ, հ. 3, էջ 152):

Հայոց լեզվի բառապաշարի հարստությունն ու իմաստային բազմազանությունը բանաստեղծին հնարավորություն են տալիս օգտվելու հայերենի հոմանշային հարուստ բառագանձից: Օգտագործելով հայոց լեզվի մեջ եղած բառային հոմանիշները՝ խանյանը հաշվի է առել նրանց իմաստային բազմազան նրբությունները:

Երբեմն խանյանը հոմանիշները գործածում է միասին՝ զուգահեռ գործածությունով ավելի ուժեղացնելով նրանց իմաստային կողմը՝ դրանով իր խոսքին հաղորդելով հոլովականություն և արտահայտչականություն: Դրանց միջոցով բանաստեղծը ոճական հազեցվածություն, բազմազանություն է հաղորդում իր խոսքին, գեղարվեստական պատկերը ստանում է աստիճանական զարգացում, իսկ բանաստեղծության բովանդակությունն ամբողջանում է հոմանիշների իմաստային նրբերանգներով:

Անհիմն է այս կարծիքը, թե հոմանիշների համատեղ գործածությունը վնասում է խոսքի սեղմությանը: Ինչպես նշում է Ս. Մելքոնյանը, «...դա չի կարող վերաբերել գեղարվեստական լեզվին, ուրի հոմանիշների այրախսի օգտագործումով ընդգծվում է նախադասության առանձնապես կարևոր նշանակություն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ավելի է զորեղանում խոսքի արտահայտչականությունը»⁴²: Բացի դրանից՝ հոմանիշները միշտ ունենում են ինչ-որ չհամընկնող տարրեր՝ նրբմաստային, արտահայտչական, ոճական առումներով: Այդ իսկ պատճառով հոմանշային կրկնությունը հնարավորություն է ընծեռում առավել ամբողջական և բազմակողմանիորեն բացահայտելու և նկարագրելու առարկան: Օրինակ՝

Նրա աչքերում մշուշ էր ու մեզ,

Ինչպես էգերին որոնող մի ցուլ...

... Կորցրած մարդկային հարգանք ու կշիռ,

⁴² Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, էջ 77:

Չար ոստիկանի սիրտն էին խուժում: (ԸԵ, հ. 3, էջ 192)

Սակայն թշնամին չար ու անգուք է,
Վառում է արտը, այգին տրորում: (ԸԵ, հ. 3, էջ 240)

Եղծվել են, պղծվել սրբություն ու փառք... (ԸԵ, հ. 3, էջ 224)

Ու դառնում է նա աչքի լուս,
Վիզ ու սատար ընկերներին... (ԸԵ, հ. 3, էջ 225)

Ինչպէ՞ս չասի, սո՞՝, շամ որդի,
Ցորպա՞ծ ես, թե՞ խելագար... (ԸԵ, հ. 3, էջ 237)

Արցախցիները պողպատից կարծր են,
Վեհ են ու բարձր են և ամողոք... (ԸԵ, հ. 3, էջ 98)

Յոմանիշների միջև եղած իմաստային տարբերությունները հաճախ այնքան աննշան են, որ գոռողի վարպետությունից է կախված, թե որքանով նա ճիշտ կօգտվի մայրենի լեզվի հոմանիշների հարուստ պաշարից, որովհետև մտքի նրերանցներին հանապատասխան հոմանիշներ ընտրելն այնքան էլ հեշտ չէ:

Յոմանիշներից որևէ մեկի գերադասության խնդիրը կապված է նաև բառի՝ համատեքստում ունեցած կապակցելիության հատկանիշի, նրա՝ կոնկրետ բառային միջավայրում եզակիորեն անհրաժեշտ լինելու հանգանակի հետ: Պետք է նկատել, որ լեզվում չկան այնպիսի բառեր, որոնք և իմաստով, և կիրառությամբ, և՝ արտահայտչական հնարավորություններով նույնը լինեն: Ճիշտ է ասված՝ «...աշխարհիս երեսին ոչ մի լեզվում երկու բառ չկամ մարենատիկաբար ճիշտ միևնույն նշանակությունը տվող, ամենքն էլ տարբերվում են իրարից թե շատ և թե քիչ»⁴³: Ասել է թե՝ որոշ լեզվաբանների կողմից հոմաշային կարևոր սկզբունք համարվող փոխադարձ փոխարինելիության մասին խոսք լինել չի կարող: Խսկական բանաստեղծի համար լեզվում փոխարինող հոմանիշներ չպետք է լինեն: Նա պետք է փնտրի և գտնի տվյալ կապակցության մեջ անփոխարինելի բառը:

Խանյանը ոչ միայն առատորեն գործածում է լեզվական հոմանիշների տարբեր, բազմապիսի միավորներ, այլև իր չափածոյում ստեղծում և ձևավորում է հոմանշային բազմանդամ շարքեր: «Յոմանիշների շարքը,- գրում է Ա. Սուլիկասյանը,- իրենից ներկայացնում է բառերի և դարձվածաբանական միավորների պատմականորեն կազմավորված համաժամանակյա խմբավորում: Յոմանիշների շարքի մեջ մտնող բառերն ու դարձվածներն արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են կամ իմաստային նր-

⁴³ Նալբանդյան Մ., Յերկերի լիակատար ժողովածու 5 հասորով, հ. 3, Յերևան, 1940, էջ 213:

բերանգներով, կամ ոճական կիրառությամբ, կամ էլ և մեկով, և մյուսով»⁴⁴: Ուշագրավ են հատկանես բանաստեղծի խոսքարվեստում հաճախակի գործածական բառերի կազմած հոմանշային շարքերը, ինչպես՝ արև (ԸԵ, հ. 3, էջ 152) - արեգակ (ԸԵ, հ. 3, էջ 181), ճամփա(ԸԵ, հ. 3, էջ 87) - ճանապարհ (ԸԵ, հ. 3, էջ 83), հուր (ԸԵ, հ. 3, էջ 120) - կրակ (ԸԵ, հ. 3, էջ 203) և այլն, որոնց ստորև կանդրադառնանք:

Իմաստով միմյանցից հեռու բառերը հոմանշային արժեք են ստանում ոչ թե բառային, այլ խոսքային ճակարդակում և դրանց դուրս հոմանշային հարաբերություն չեն դրսւորում: Այլ կերպ ասած՝ դրանց հոմանշությունը տվյալ դեպքում հեղինակային - անհատական է: Խոսքային (անհատական) հոմանիշներն ունեն «ճիշտ անհատական դրոշմ և սերտորեն կապված են հեղինակի բանաստեղծական մտածողության ու ճաշակի հետ»⁴⁵: Այսպես օրինակ՝ ճախրումներով քննուշ, թեթև... (ԸԵ, հ. 4, էջ 116)

Տվյալ խոսքարից դուրս բնըուշ և թեթև բառերն ամենակին էլ հոմանիշներ չեն, սակայն թերված օրինակում նրանք հանդես են գալիս որպես հոմանիշներ և բնութագրում ճախրումների գեղեցկությունը:

Դիտարկենք մեկ այլ օրինակ՝

Պատի՛կ ու թա՛խտն են կանչում այնտեղից... (ԸԵ, հ. 2, էջ 94)

Առանձին վերցրած պատիվ և թախտ բառերը նույնպես հոմանիշներ չեն, սակայն թերված խոսքաշարում դրանք հանդես են գալիս որպես հոմանիշներ և արտահայտում են հեղինակություն, դիրք իմաստը:

Ինչպես համոզվում ենք թերված օրինակներից, խանյանն առատորեն օգտվել է հայերենի հոմանիշների հարուստ պաշարից՝ դրանով իսկ իր խոսքը դարձնելով ավելի գումար ու տպավորիչ:

Չնորիկիվ իրենց իմաստային նրբությունների, ոճական ու կիրառական բազմազանությունների, հոմանիշներն անշափ կարևոր դեր ունեն գրական լեզվի և մասնավորապես բանաստեղծական լեզվի բառապաշարի մեջ: Յոմանիշների առատ օգտագործումը բանաստեղծական խոսքը դարձնում է գումագեղ, արտահայտիչ ու պատկերավոր, և պատահական չէ, որ ոնանք հոմանիշները դիտում են որպես գրողների ոճն իրարից տարբերող հիմնական միջոցներից մեկը:

⁴⁴ Սուլիքասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 126:

⁴⁵ Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճարանություն, էջ 141:

Հականիշներ

Խանյանի խոսքարվեստում հականիշները հոմանիշների համեմատությամբ ավելի սակավ են գործածվում, բայց դրանց ոճական արժեքն առավել ցայտուն է դրսնորվում: Բառերի իմաստաձևային խմբի մեջ մտնող հականիշներն օժտված են ոճական մեջ ներուժով. հակադրությամբ ներկայացնելով իրերն ու երևույթները, հոգեվիճակն ու ապրումները՝ առավել համոզիչ և պատկերավոր են դարձնում բանաստեղծական խոսքը: Բառային հականիշների գործածությունը հնարավորություն է ընձեռում տարբեր կողմերից զննելու և նկարագրելու առարկաները, երևույթները, գործողությունները, հատկությունները:

Բերենք օրինակներ՝ ահելանանք-ջահելանանք (ԸԵ, հ. 1, էջ 225), բարեկամ-ոսոխ (ԸԵ, հ. 2, էջ 75), ժափտ-քախիժ (ԸԵ, հ. 2, էջ 80), տաքացած-սառը (ԸԵ, հ. 2, էջ 87), ծերեր-փոքրեր (ԸԵ, հ. 2, էջ 88), հին-նոր (ԸԵ, հ. 2, էջ 90), բարի-չար (ԸԵ, հ. 2, էջ 104), զնում-զալիս (ԸԵ, հ. 2, էջ 109), վեր-վար (ԸԵ, հ. 2, էջ 122), զա-զնա (ԸԵ, հ. 2, էջ 123), տալիս-առնում (ԸԵ, հ. 2, էջ 126), պարտվես-հաղթես (ԸԵ, հ. 2, էջ 126), ծնունդ-մահ (ԸԵ, հ. 2, էջ 147), վայրէջք-վերելք (ԸԵ, հ. 2, էջ 156), տեր-ծառա (ԸԵ, հ. 4, էջ 96), խնդան-լացեն (ԸԵ, հ. 4, էջ 98), գիշեր-տիվ (ԸԵ, հ. 4, էջ), նուրբ ու քնքշասիրտ-առնացի (ԸԵ, հ. 4, էջ 115), կորցրածն-գտածն (ԸԵ, հ. 4, էջ 117), պապեր-մանուկներ (ԸԵ, հ. 4, էջ 121) և այլն:

Բերված օրինակներում հականշային կապերի մեջ գտնվող բառերը կարևոր դեր են կատարում բանաստեղծական հոլովի և ապրումի շեշտադրման գործում՝ ընդգծելով նաև բանաստեղծի մտածողության ինքնատիպությունն ու ցայտուն դարձնելով նրա ասելիքը:

Հականիշների դերը մեջ է ոչ միայն հակոտնյա իրողությունները գնահատելու, այև մինույն երևույթի, իրողության նկատմամբ հակասական վերաբերմունք արտահայտելու, քնարական հերոսի ապրումների երկվությունը ներկայացնելու գործում: Այս առումով հատկապես առանձնանում են բայի դրական և ժխտական խոնարհման ձևերով կազմված հակադրությունները, որոնք ոճավորում են գեղարվեստական խոսքն ընդգծված արտահայտչականությամբ՝ երթեմն լուծելով նաև տաղաչափական խնդիրներ: Ասի օրինակներ՝ կլինի-չի լինի (ԸԵ, հ. 3, էջ 165), կա (ԸԵ, հ. 2, էջ 160) - չկա (ԸԵ, հ. 2, էջ 161):

Պետք է նկատել, որ Խանյանի չափած խոսքում հականիշ բառերը հիմնականում հանդես են զալիս հակադրություններում: Հակադրությունը կամ հակադրույթը (անտիթեզ) ոճական այն հնարանքն է, երբ հակառակ նշանակություն ունեցող բառերի գործածությամբ հակադրվում են հասկացություններ, երևույթներ՝ դրանով իսկ ավելի ցայտուն դարձնելով հեղինակի վերաբերմունքն ու գնահատականը նշված առարկաների, երևույթների և հատկանիշների նկատմամբ⁴⁶: Հակադրությունները հանդես են զալիս միևնույն համատեքս-

⁴⁶ Եղեկյան Լ., Ղայոց լեզվի ոճագիտություն, էջ 235, Էլոյան Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, էջ 164:

տում և արտահայտչական լայն հնարավորություններ ունեն, քանի որ կարող են հակադրությամբ կապակցել ոչ միայն տարբեր առարկաներ ու երևույթներ, այլև միևնույն առարկայի, երևույթի տարբեր կողմերն ու հատկանիշները:

Բացի բառային հականիշներից՝ Խանյանի բանաստեղծական խոսքում գործածական են նաև անհատական (հաճատեքստային) հականիշները: Ի տարբերություն լեզվական հականիշների՝ անհատական հականիշների հակադրական իմաստը կառուցվում է խոսքային տվյալ միջավայրում: Ասել է թե՝ դրանք, առանձին վերցրած, լեզվական մակարդակում իրար հակադրի իմաստներ չունեն, բայց որոշ կիրառություններում ձեռք են բերում հակադրական հարաբերություններ, ինչպես օրինակ՝ Աստվածն է, էլի՛, Մի տեղից կտրում, մի տեղ է դնում... (ԸԵ, հ. 2, էջ 126), **Ծաղիկը** դու ես, **Թարափը** ես եմ, **Ծաղիկը** դու ես, **Ծովափը** ես եմ... **Անձրկը** դու ես, **Ծարավը** ես եմ (ԸԵ, հ. 2, էջ 185):

Դիտարկված օրինակներում **կտրել** ու **դնել**, **ծաղիկ** ու **թարափ**, **շաղիկ** ու **ծովափ**, **անձրկ** ու **ծարավ** բառերը խոսքից դուրս իրար հետ հակադրական իմաստով կապ չունեն, իմաստային այդպիսի հակադրություն են ձեռք բերում գործածության մեջ փոխաբերական գործածությունների շնորհիվ: Անհատական հակադրությունները մեծ մասամբ չեն դառնում բացարձակ հականիշներ, բայց նշանական դերը: Դիտարկենք մի հատված Խանյանի «Ազգային հարց» բանաստեղծությունից, որտեղ որպես հեղինակային հականիշներ հանդես են գալիս **երգ-կոինչ** և **սոխակ-ագրակ** բառերը, որոնք, համատեքստից դուրս հականիշային գույգեր չեն կազմում.

Ի՞նը երգ է նույր սոխակի,

Քոնն ագրակի կոինչ է լուկ: (ԸԵ, հ. 3, էջ 100)

Բերենք այլ օրինակ.

...Արտեր երգեց, ասին՝ լոր է,

ճարահատյալ

Թուղթ ու մատիտ մի կողմ դրեց,

Ասին՝ ափսոս, ինչո՞ւ լուց: (ԸԵ, հ. 3, էջ 450)

Երգել բառը **լոել**-ի հականիշ է դիտվել բերված բանաստեղծական խոսքում, այնինչ խոսքային կոնտեքստից դուրս **լոել** բառը հականիշ է **խոսել-ին**:

Հարանուններ

Ժամանակակից գրական հայերենի իմաստաձևային խմբին պատկանող լեզվական միավորներ են նաև հարանունները:

Հանգավորման ու ներքին ռիթմի ստեղծնան համար Խանյանը հաճախ է դիմում **հարանունների** ոճական կիրառություններին: Վրտասանական նմանության շնորհիվ հարանունները բանաստեղծական խոսքում ունեն հարաբերակցվելու անսպաս հնարավորություններ և նպաստում են բանատողերի ներդաշնակությանն ու բարեհնչությանը: Դրանք կարող են հանդես գալ բանատողների ցանկացած հաստածում՝ սկզբում, վերջում կամ տողի ներսում: Օրինակ՝

Ուսած բույրը ժաղիկմերի,

Ջուսած բույրը շաղիկմերի... (ԸԵ, հ. 1, էջ 96)

Նույն բանաստեղծության մեջ հանդիպում ենք՝

Շառաչում եմ նրա սիրով,

Շառաչում եմ նրա սիրով... (ԸԵ, հ. 1, էջ 96)

Կամ՝

Նրանց զենքն էր հոլոր ու սուրը... (ԸԵ, հ. 2, էջ 76)

Խանյանի խոսքում հարանունների ամենատարածված ձևը տողավերջում հանգաբառներ ստեղծելու է: Բերենք օրինակներ.

Եվ զնգում են զանգերող զիլ,

Եվ ժպտում են աչքերող բիլ... (ԸԵ, հ. 2, էջ 111)

Իմ Անարասի դռանը խաչվեմ,

Իմ կրակի մեջ թողեք ես խաշվեմ... (ԸԵ, հ. 2, էջ 83)

Եկան ու կիսեցին հողերը,

Սակայն մեզ զրկեցին մեր հողից,

Վարեցին լոկ հույսի շողերը,

Սակայն մեզ զրկեցին մեր շողից: (ԸԵ, հ. 2, էջ 86)

Ինչպես արդեն նշեցինք, որանք կարող են հանդես գալ նաև տողի ներսում, օրինակ՝

Թե քնած լինես,

Դեմքդ կշոյեն հովերի նման,

Թե քրտմած լինես,

Քեզ կիայփայեմ զովերի նման... (ԸԵ, հ. 1, էջ 108)

Խոսքին երաժշտականություն հաղորդելու համար բանաստեղծը ոչ միայն գտնում է նմանահունչ բառեր, այլև լեզվական նշված միավորներին տալիս է այնպիսի հնչյունական տեսք, որը լիովին ներդաշնակում է դրանց իմաստներին: Բանատողերի ներսում հանդես եկող հարանուններն առավելապես նպաստում են ոչ թե տաղաչափական խնդիրների լուծմանը, այլ բանաստեղծական խոսքի ներդաշնակությանը, սահունությանը, ինչպես՝

Ծուռվիզ ուղտմ ի՞նչ ունի երգում,

Անբույր սոուղտմ ի՞նչ ունի երգում... (ԸԵ, հ. 3, էջ 450)

Որոշ դեպքերում բանաստեղծը խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու համար բանատողերը կառուցում է այնպես, որ հարանուները հանդիս են զալիս և տողի սկզբում, և տողի վերջում, օրինակ՝

Արտեր երգեց, ասին՝ չոր է,

Արտեր երգեց, ասին՝ լոր է... (ԸԵ, հ. 3, էջ 450)

Խանյանի չափածո խոսքում հարանուները ծառայում են որպես հանգակերտման հիմնական միջոց, նպաստում են հնչակրկնությունների առաջացմանը, բարեհնչության ու երաժշտականության ապահովման կարևոր գործառույթ են կատարում:

Ամփոփելով բառապաշարային իրողությունների լեզվավոճական ուսումնասիրությունը՝ կարող ենք վստահաբար ասել, որ Խանյանն իր ինքնատիպ խոսքարվեստով հարստացրել ու ընդլայնել է հայ գրական լեզվի բառապաշարի և հմաստային, և ոճական ընդգրկումը: Խանյանի լեզվում յուրաքանչյուր բառ հանդիս է զալիս ներգործնան մեծ ուժով, ոճական ինքնատիպ արժեքով: Ինչպես նկատեցինք, համագործածական, նորաստեղծ, նույնիսկ ժողովրդական, բարեառային ու օտար բառերը բանաստեղծի խոսքարվեստում հոգեվիճակի, տրամադրության, հույզի և ապրումի արտացոլման յուրօրինակ միջոցներ են:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրողի խոսքարվեստի ուսումնասիրությունը ներառում է ինչպես հնչյունական, բառապաշտական, այնպես էլ քերականական յուրահատկությունների լեզվառճական քննություն, որի նպատակն է պարզել քերականական երևույթների ու ձևերի դերը գրողի լեզվական մշակույթի այս կամ այն խնդրի լուծման ասպարեզում:

Լեզվի քերականական օրենքներին հարազատ մնալը ամենակին էլ չի նշանակում, թե գրողն ընդհանրապես իրավունք չունի ընդունված ձևերից ու կանոններից որևէ շեղում կատարելու, և կամ՝ մայրենի լեզվի քերականությունը միևնույն անփոփոխ ձևով արտացոլվում է տարբեր գրողների ստեղծագործություններում:

Ստեղծագործական գործներացում հեղինակները երեմն խախտում են լեզվի ընդունված քերականական կանոնները, որոնք, անշուշտ, պետք է ուսումնասիրել և ցույց տալ դրանց տեղը գրողի լեզվի ընդհանուր համակարգում: Սակայն գրողի լեզվի մեջ եղած քերականական մասնակի շեղումները դեռ չեն կարող նսեմացնել նրա լեզուն, եթե նրանում հիմնականում ճիշտ են արտացոլված գրական լեզվի արանձնահատկությունները, և գրողն ինքը հավատարիմ է մնացել մայրենի լեզվի ընդհանուր ոգուն: Գրողի ստեղծագործություններում եղած լեզվական-քերականական շեղումներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընդհանուր կանոններից եղած ոչ բոլոր շեղումներն են սխալ: Պետք է որոշակիորեն տարբերել հեղինակի մասնավոր գործածության դեպքերը այնպիսի շեղումներից, որոնք ընդունված օրինաչափությունների խախտումներ են: Կան և այնպիսի շեղումներ, որոնք լեզվի զարգացման տվյալ շրջանում դիտվում են որպես այդպիսիք, բայց դրանք չպետք է համարել լեզվական սխալներ (օր՝՝ մահվան-մահի, գիշերի-գիշերվա):

Հայտնի է, որ լեզվական միևնույն իրողությունը հաճախ դրսնորման տարբեր ձևեր է ունենում, օրինակ, որոշ բայեր անցյալ կատարյալ ժամանակում համուս են բերում զուգահեռ ձևեր, ինչպես՝ ասի-ասացի, դրի-դրեցի, բերի-բերեցի, բողի-բողեցի և այլն: Այս զուգահեռ ձևերից որն էլ գործածի հեղինակը, մենք չենք կարող նրան մեղադրել դրա համար: Այդ զուգահեռ ձևերի ընտրության կամ գործածության մեջ համուս է գալիս միայն գրողի նախասիրությունը քերականական տարբեր ձևերի նկատմամբ, հետևաբար, եթե խոսում ենք գրողի բոլոր տվյալ լեզվական սխալների մասին, պետք է նկատի ունենանք ընդունված, օրինականություն ստացած և նորմավորված քերականական կանոնների կամայական խախտումները, որոնք աղավաղում են լեզուն և հակասում մեր լեզվի ներքին օրինաչափություններին: Գրողի լեզվի մեջ հետաքր-

րություն կարող են ներկայացնել հատկապես քերականական այն իրողությունները, որոնք առավել ցայտուն դրսնորում են գտել նրա ստեղծագործությունների լեզվի մեջ:

Զևարանական իրողություններ

Ի տարբերություն բառապաշարային և շարակիուսական իրողությունների՝ ձևաբանական կարգերի ոճական հնարավորություններն ավելի սահմանափակ են՝ պայմանավորված գրական լեզվի նորմայի պահանջներով: Ձևաբանական մակարդակում արտահայտչականությունը հիմնականում ստեղծվում է տարբեր խոսքի մասերի միջոցով, որոնցից ամենարդյունավետը, ինչպես նկատում է Ռ. Սկրտչյանը, ձևաբանական միավորների իրավիճակային կիրառություններն են: «Տարբերությունը գործում է լեզվաբանը.- մեծ մասամբ կատարվում է տվյալ խոսքի մասին բնորոշ արժույթային կապերի խախտում, որը և հնարավորություն է տալիս խոսողին արտահայտել իր հովաքերը և վերաբերմունքը»⁴⁷: Ասել է թե՝ ձևաբանական իրակությունը ծեռք է բերում ոչ սովորական կիրառություն՝ միաժամանակ ստանալով ոճական արժեք:

Ելնելով հայ գրական լեզվի, նրա քերականական օրինաչափությունների ու կանոնների մշակման ընդհանուր անհրաժեշտությունից՝ Խանյանն իր ստեղծագործություններում հիմնականում ճիշտ է արտացոլել հայ գրական լեզվի հոլովնան համակարգի առանձնահատկությունները: Նրա ստեղծագործություններում համարյա չենք հանդիպում հոլովական անկանոնությունների ու կամայական խախտումների: Գոյականների հոլովումը լիովին համապատասխանում է հայ գրական լեզվի հոլովնան համակարգին: Բնականաբար գերիշխողը **ի** հոլովումն է, քանի որ ժամանակակից հայերենի հոլովնան համակարգում ամենատարածված հոլովումը **ի** հոլովումն է:

Խանյանի ստեղծագործությունների լեզվում եղած հոլովական անկանոնությունները, հնացած ու բարբառային ծերը շատ քիչ են:

Հանդիպում են նաև գրաբարյան կամ միջինհայերենյան հոլովածների գործածություններ, բայց դրանք նույնպես որակ չեն կազմում:

Գրաբարյան կամ միջինհայերենյան հոլովածների մի մասը հատուկ անուններ են, իմշպես՝ Ռուսիո (ԸԵ, հ. 3, էջ 233), Թուրքիո (ԸԵ, հ. 3, էջ 233), Ալավկա (ԸԵ, հ. 3, էջ 237), Արցախ (ԸԵ, հ. 3, էջ 240), իսկ մյուս մասը տարբեր գոյականների հոլովածներ են՝ գրոց (ԸԵ, հ. 2, էջ 102), լուսոն (ԸԵ, հ. 2, էջ 103), մանկանց (ԸԵ, հ. 2, էջ 103), հուսոն (ԸԵ, հ. 2, էջ 139), զավակաց (ԸԵ, հ. 2, էջ 155), կենաց (ԸԵ, հ. 4, էջ 112), աստծոն (ԸԵ, հ. 4, էջ 193):

Խանյանը հմտորեն է օգտվել թվի քերականական կարգի ընձեռած ոճա-

⁴⁷ Սկրտչյան Ռ., ժամանակակից հայերենի ձևաբանական ոճարանություն, էջ 55:

կան հնարավորություններից: Յետաքրքրական է նկատել, որ բանաստեղծը շատ հաճախ ոճական տարրեր նպատակներով ժամանակակից հայերենում հոգնակի թիվ չունեցող գոյականները գործածում է հոգնակի ձևով՝ նրանց մեջ իմաստային և ոճական նրբություններ մտցնելով: Գոյականի թվի նման կիրառություններն ուղեկցվում են լրացուցիչ իմաստային, արտահայտչական երանգներով: Իհարկե, ընդհանուր առնամբ, գոյականների հոգնակի թվը բառական-քերականական իմաստով չի տարբերվում նույն գոյականների եզակի թվից, միայն պետք է նկատել, որ սովորաբար հոգնակի թվով հանդես չեկող գոյականների մեջ մասը, երբ հոգնակի ձևով է գործածվում, եզակի թվի համեմատությամբ ծեռք է բերում լրացուցիչ իմաստային երանգներ: Լրացուցիչ իմաստային այդ երանգները սովորաբար պայմանավորված են լինում առարկայի հոգնակիրթյան քերականական իմաստներով, կապվում նրա բազմակիրթյան պատկերացման հետ: Սոլիրատ Խանյանի ստեղծագործություններում անհոգնակի գոյականների հոգնակի թվով գործածության դեպքերն այնքան էլ շատ չեն: Նման գործածություններով բանաստեղծն ընդլայնում է հոգնակիրթյան լրացուցիչ իմաստային երանգները, ոճական ու արտահայտչական հնարավորությունների շրջանակները: Այսպես օրինակ՝ տիեզերքներ (ԸԵ, հ. 1, էջ 62), արևներ (ԸԵ, հ. 1, էջ 63), երկինքներ (ԸԵ, հ. 2, էջ 150), կարուսներ (ԸԵ, հ. 4, էջ 62) և նման բազմաթիվ բառեր ժամանակակից հայերենում սովորաբար հոգնակի թվով հանդես չեն գալիս, բայց Խանյանը գործածում է հոգնակի՝ նրանց մեջ իմաստային զանազան նրբերանգներ մտցնելով:

Օրինակ՝

...Քո նազելին,

Որ մի ժպտով

Քեզ արևներ կպարզկի... (ԸԵ, հ. 4, էջ 67)

Պարզ է, որ բերված օրինակում **արևներ** ձևը չի կարելի դարձնել եզակի, որովհետև այն կոնկրետ չի կապվում **արևի** հետ և այդ բառի համեմատությամբ արտահայտում է ավելի ընդհանուր, վերացական իմաստ, դեռ ավելին, այստեղ մենք գործ ունենք թվի քերականական կարգի մետաֆորային գործածության հետ: Վերցնենք մի այլ օրինակ՝

Կարոտներս պիտի ժաղկեն նրանց հույսով... (ԸԵ, հ. 4, էջ 62)

Այստեղ նույնական կարոտ բառի հոգնակիրթյան լրացուցիչ իմաստային երանգը կապված է այդ իսկ առարկայի շատության պատկերացման հետ և արտահայտում է բազմակիրթյուն: Եզակի թվի համեմատությամբ յուրահատուկ իմաստային երանգ է արտահայտում **կյանք** բառի հոգնակին՝ **կյանքեր**, որ առդեն նշանակում է ոչ թե կյանք ընդհանրապես, այլ նրա մի կոնկրետ արտահայտությունը:

Օրինակ՝

Քո մեջ թող ժպտան կյանքերը բոլոր... (ԸԵ, հ. 4, էջ 120)

Ոճական հատուկ նպատակով Խանյանն օգտվում է գոյականների քերա-

կանական մի այլ հատկությունից: Դասարակ գոյականները հաճախ գրում է մեծատառով և դրանով իսկ ընթերցողի ուշադրությունն է հրավիրում այս կամ այն բառի արտահայտած իմաստային ու ոճական նրբությունների վրա: Նման ձևերի մեջ արտահայտվում է բանաստեղծի դրական կամ բացասական վերաբերմունքը նկարագրվող երևույթի նկատմամբ: Դրանք բանաստեղծի մտքի իմաստային նրբությունները դրսնորող քերականական միջոցներ են: Դիտարկեմք օրինակներ:

«Ափսոսանք» բանաստեղծության մեջ Խանյանը գրում է.

Իմ առաջին Երազ- Սիրո

Ձերմ համբույրը լիներ հիմա: (ԸԵ, հ. 1, էջ 470)

Երազ-Սեր հարադրական բարդության երկու բաղադրիչներն ել բանաստեղծը գրում է մեծատառով՝ դրանով իսկ այս բառին տալով առանձնահատուկ նշանակություն և կարևորություն: Երբեմն պատահում է, որ հեղինակն ամբողջ բառն է գրում մեծատաերով՝ ցանկանալով ընդգծել տվյալ բառի և նրա մեջ ամփոփված բարիմաստի կարևորությունը: Ահա այդպիսի մի օրինակ.՝

Արժանի ես, որ դու կոչվես ԱՌԾՎԱԾԵՆ: (ԸԵ, հ. 1, էջ 468)

Բերենք այլ օրինակներ՝ ՆԱ (ԸԵ, հ. 2, էջ 152), ՆՐԱՆ (ԸԵ, հ. 2, էջ 152), ՍԵ-ՌՈ (ԸԵ, հ. 2, էջ 174), ՍԱՐՈ (ԸԵ, հ. 4, էջ 409), ԼԻՆԵԼԾ (ԸԵ, հ. 4, էջ 119), Դիցուհին (ԸԵ, հ. 4, էջ 133), ՈՐԻՒ (ԸԵ, հ. 4, էջ 135), Վարտւնամյա (ԸԵ, հ. 4, էջ 251), ԴԻԳՆ (ԸԵ, հ. 4, էջ 238), ՏԱՏՈՆ (ԸԵ, հ. 4, էջ 156), ՊԱՎՈՐ (ԸԵ, հ. 4, էջ 156), ՔՈ (ԸԵ, հ. 3, էջ 112), ՔԵԼ (ԸԵ, հ. 3, էջ 113), ԴՈՒ (ԸԵ, հ. 3, էջ 114), ՅՈՒՆԻՒ (ԸԵ, հ. 3, էջ 94), ԴԱՅՐԵՆԻՔ (ԸԵ, հ. 1, էջ 39), ԴԱՂԹԱՆԱԿԻ (ԸԵ, հ. 1, էջ 115), ԿԻՆ-ԱՍՎԱԾ(ԸԵ, հ. 4, էջ 119) և այլն:

Բայական իրողությունների մեջ ուշադրության արժանի են բայական դեմքի ոճական կիրառությունները: Գեղարվեստական խոսքում և ընդհանրապես հայերենում հաճախ բայի դիմավոր ձևով արտահայտվող գործողությունը չի կոնկրետանում, չի նաև ավորվում և իր իմաստով կամ մնում է անորոշ, կամ այդ գործողությունը հնարավոր է լինում վերագրել բոլոր դեմքերին.

Ինչե՞ր ասես, որ քո ճամփին

Չեմ պատահում...

Սակայն լավ է, որ քո հոգուն

Երբեք մուժ ու ամապ չեմ չոքում,

Քայլում ես միշտ բարու հույսով

Եվ քո շուրջը լցնում լույսով: (ԸԵ, հ. 1, էջ 392)

Այս օրինակներում ընդգծված բայաձևերով արտահայտված գործողություններն արտահայտում են ընդհանուր դիմային նշանակություն. դրանով Խանյանն իր խոսքն ուղղում է բոլորին, այդ թվում և իրեն:

Խանյանի բանաստեղծական խոսքում եղանակավորող բառերի ու ձայնարկությունների նրբիմաստները մեծապես նպաստում են ճարտասանական բացականչությունների, հարցումների ոճական լիցքին և խոսքը դարձնում հու-

զական ու ներգործուն: Ինչպես օրինակ՝
Իսկ դարի Տերը, օ՛, Տեր,
Պնդում է՝ թե ի՞նչ խուժան,
Որ իբր բանակը մեր
Ուշացավ լոկ երեք ժամ: (ԸԵ, հ. 2, էջ 350)

ԴԵՐ, այն ո՞վ է քմել համգիստ... (ԸԵ, հ. 2, էջ 360)

...Բայց, ավա՞ղ, չկաս,
Մենք քսանամյա քո մահն ենք հիշում... (ԸԵ, հ. 1, էջ 99)

Ես չեմ վիճում քեզ հետ, այո՞՛,
Բարձր է սարն այս աստեղնամուտ... (ԸԵ, հ. 1, էջ 385)

Ակնհայտ է՝ խոսքը ոճավորելու հարցում ձևաբանական իրողություններն ունեն առաջնակարգ դեր: Շատ անգամ հենց դրանցով էլ պայմանավորված են խոսքի հարստությունը, սեղմությունը, պարզությունը և այլ հատկանիշներ:

Եթե նկատի ունենանք, որ քերականական այս կամ այն ձևի ընտրության ու գործածության մեջ անչափ կարևոր դեր են խաղում հանգավորման, տաղաչափական և այլ գործոններ, ապա պարզ կդառնա, թե ինչու բանաստեղծը այս կամ այն ձևին է դիմում:

Այսպիսով, Խամյանը հմտորեն է օգտվել մեր լեզվի ընձեռած ձևաբանական կարգի ոճական հնարավորություններից և միաժամանակ նպաստել դրանց արտահայտչական կողմի ընդարձակմանը:

Չարահյուսական իրողություններ

Գրողի ինքնատիպությունը, լեզվական առանձնահատկությունները հանդես են զալիս նաև շարահյուսության մեջ, առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են տվյալ գրողի լեզվական մտածողությամբ: Գրողը գեղարվեստական-ոճական խնդիրների կարող է ենթարկել ոչ միայն լեզվի ձևաբանական, այլև շարահյուսական միջոցները և լեզվական կոլորիտ ստեղծել շարահյուսական իրողությունների միջոցով:

Խանյանի ստեղծագործություններն ընթերցելիս ակնհայտ է դառնում, որ բանաստեղծի լեզվական համակարգում կառուցվածքային, իմաստային և ոճական կարևորագույն բաղադրիչներ են հարցական, բացականչական ու հրամայական նախադասությունները: Բանաստեղծի խոսքում երբեմն հանդիպում են հարցում արտահայտող նախադասություններ, որոնց մի դրսնորում է ճարտասանական (իռետորական) հարցը՝ իր հաստատական ու ժխտական տարատեսակներով: ճարտասանական-հաստատական նախադասություն-

Յերն արտահայտում են որևէ իրողության, մտքի հաստատում և կազմվում են մեծ մասամբ ժխտական խոնարհնան բայց ձերով։ Դարցական հնչերանգը նշված կառուցներում հուզարտահայտչական որոշակի երանգավորում ունեցող ոճական հնքնատիպ հնարանք է, որ պատկերավոր ու ներգործուն է դարձնում բանաստեղծական խոսքը, օրինակ՝ Երբ ճամփիս այսքան վարդեր ես ցանել, Ասա՛, այդ սերը ո՞նց փառաքանել (ԸԵ, հ. 1, էջ 78), Դու չե՞ս կարող, օրորոց իմ, Մանուկ դարձնել իմձ կրկին (ԸԵ, հ. 1, էջ 193)։ Ավելայտ է, որ ժխտումը դաշնում է մտքի հաստատման յուրահատուկ ձև և ոճական որոշակի երանգավորում է հաղորդում խոսքին։ Կարևորվում է այն հուզզը կամ ապրումը, որը տվյալ պահին համակել է քնարական հերոսին։ Իսկ ճարտասանական-ժխտական նախադասություններում հնչերանգի միջոցով նախադասության դրական կառուցվածքը վերածվում է ժխտական խնաստի, օրինակ՝ Մի՞թե քիչ եմ բացականչում, Որ Արցախը մերն ե։ (ԸԵ, հ. 3, էջ 452), Սիրո ուղին ե՞րբ է եղել հարթված... (ԸԵ, հ. 1, էջ 339)։

Հուզական տարրեր երանգավորումներ արատահայտելու համար Խանյանը գործածում է նաև հարցական նախադասությունների մի այլ տեսակ՝ բազմահարցությունը, որին դիմում է հիմնականում դժգոհություն, խնդրանք կամ զարմանք արտահայտելու համար, ինչպես ներքոհիշյալ բանատողերում։

Որտեղի՞ց ես եկել արդյոք,

Ո՞վ ունես դու աշխարհում,

Տեսմես ո՞վ է սիրակարուտ

Դարձի ճամփան քո պահում։ (ԸԵ, հ. 1, էջ 84)

Չատ հաճախ Խանյանը ողջ բանաստեղծության հիմքում է դնում բազմահարցությունը՝ դրանով բանատողերին հաղորդելով առավել մեծ հուզական երանգ և ներգործուն բնույթ։ Անհասկի՝

...ժախտներդ ո՞ւր գնացին,

Թևեցին ո՞ւր,

Ասա, մայրիկ, ո՞ւր մնացին

Երգերդ հուր,

Նահատակված որդի՞ն տարավ,

Թե՞ եղբայրդ,

Կյանքի ծամրությո՞ւնը առավ,

Պանդուխտ հա՞յրդ,

Իմ դպրոցի ճամփի՞ն քողիր,

Թե՞ իմ որդու,

Ախ, ո՞նց էիր մեզ փայփայում

Սիրով հորդում։ (ԸԵ, հ. 1, էջ 191)

Խոսողի դրական կամ բացասական վերաբերմունքի զանազան դրսևորումներն արտահայտվում են բացականչական բնույթի նախադասություններում, որոնք, ունենալով իմաստային հետաքրքիր նրբերանգմեր, գործածվում են

քնարական հերոսի ապրումն ու հույզն առավել ցայտում արտացոլելու նպատակով.

Օ՛, ինչքան տենչ կա ջահել սրտիդ մեծ... (ԸԵ, հ. 1, էջ 39)

Ի՞նչ հածելի է բուրում այս վարդը... (ԸԵ, հ. 1, էջ 50)

Քանի՛ սրբազն գալտնիքներ ունեմ... (ԸԵ, հ. 1, էջ 128)

Ո՞վ է գալիս, ո՞վ է գնում,

Աշխարհին ի՞նչ, կյամքին ի՞նչ... (ԸԵ, հ. 1, էջ 123)

Ի՞նչ գեղեցիկ ես, հայրենի Դադրութ,

Լեռներդ ինչքան վեհ են, երազում... (ԸԵ, հ. 4, էջ 57)

Հայրենի՛ք, հայրենի՛ք,

Փա՛ռք քեզ, հայրենիք...

Մեր աստղամե՞րձ, բարձր սարե՛ր,

Փառավորվե՞նք դար ու դարե՛ր... (ԸԵ, հ. 4, էջ 95)

Դրամայական նախադասությունները, ինչպես նշվում է, «մեծ նասամբ կամային բնույթ ունեն և ծառայում են խոսողի կամքի արտահայտմանը»⁴⁸: Խանյանի խոսքարվեստում հրամայական նախադասությունները դրսկորում են ամենաբազմազան նրբիմաստներ՝ հրաման, ցանկություն, խնդրանք: Երբեմն նախադասություններում գործածված հրամայական եղանակի բայաձևերը շեշտ չեն կրում: Այդ կերպ բանաստեղծը կարծես ցանկանում է դրանց հաղորդել ոչ հրամայական նրբիմաստ:

Խանյանի ստեղծագործության լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանաստեղծը հիմնականում հարազատ է մնացել հայ գրական լեզվի շարահյուսական կանոններին: Միայն մի քանի դեպքերում հանդիպում ենք ստորոգյալի և ենթակայի անհամաձայնության:

Եվ խորհուրդներդ ջերմ, հոգեհմա,

Քո ինաստության խորքից է բխում: (ԸԵ, հ. 2, էջ 155)

-Ծիրազը իւլված սարեր են,- ասում են,

-Ծիրազը փրկված դարեր են,- ասում են: (ԸԵ, հ. 4, էջ 46)

Բազմակի ենթականների հետ դրվել է եզակի թվով ստորոգյալ.

Թեզ ընծա լինի իմ սիրտն էլ, երգն էլ: (ԸԵ, հ. 4, էջ 51)

Խանյանի ստեղծագործությունների լեզվում արտացոլվել են ժամանակակից գրական հայերենի քերականական օրինաչափությունների կենսունակ միտումները: Գեղարվեստական խոսքի լեզվաբարտահայտչական կարևոր միջոցներից է շրջուն շարադասությունը: Օգտվելով մեր լեզվի շարադասական ճկուն հնարավորություններից՝ Խանյանը մեծ վարպետությամբ սովորական շարա-

⁴⁸ Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 462:

դասությանը զուգընթաց օգտագործել է շրջուն շարադասություն (ինվերսիա):

Շրջուն շարադասությամբ ավելի հաճախ գործածում է որոշիչն ու հատկացուցիչը, համեմատաբար ավելի քիչ՝ ենթական: Շրջուն շարադասությամբ գործածված անդամները հուզապահայտչական ավելի մեծ լիցք են ստանում:

Օրինակ.

Ով իր կյամքով և գործով իր... (ԸԵ, հ. 1, էջ 325) - շրջուն հատկացուցիչ

Խրախճանը արնածիր... (ԸԵ, հ. 2, էջ 107) - շրջուն որոշիչ

Քայլում եմ ես... (ԸԵ, հ. 1, էջ 87) - շրջուն ենթակա

Խանյանի ստեղծագործության լեզվին լիրիզմ են հաղորդում բազմակի որոշիչների հետադաս գործածությունները.

Խաղողենու մի վազ՝ երկար ու դալարում... (ԸԵ, հ. 1, էջ 308)

Դայացքով՝ նրբին, հմայող... (ԸԵ, հ. 1, էջ 376)

Դարսեր ունեցա՝ խելոք, ուսեւվարս... (ԸԵ, հ. 2, էջ 394)

Մռովի խոսք՝ սրտարուխ ու վառ... (ԸԵ, հ. 3, էջ 286)

Խանյանը հաճախ հետադաս բազմակի որոշիչների նման նույն շարադասությամբ գործածում է նաև բազմակի ածականներ՝ պարագայական կիրառությամբ.

Օրինակ՝

...Դու չես մարտնչել խիստ ու աններում... (ԸԵ, հ. 4, էջ 248)

Վառվում է, սպասում ճամփիդ,

Որ կզաս ժպտադեմ ու ժիր... (ԸԵ, հ. 4, էջ 303)

Միակազմ նախադասություններ

Գեղարվեստական խոսքում՝ մասնավորապես չափածոյում, նախադասությունների կառուցման քերականական պահանջներից բացի, անհրաժեշտ են արտաքերման ելևծները, նախադասության անդամների համաչափ տեղադրումը, հանգավորումը, որոնք չեն կարող որոշ յուրահատկություններ չնոցնել նախադասությունների կառուցման սովորական ձևերի մեջ: Մյուս կողմից նախադասության մեջ արտահայտվում է խոսող կամ գրող անհատի վերաբերունքը նախադասությամբ արտահայտված մտքի նկատմամբ: Պատահական չեն, որ նախադասության տարբեր տիպերի դասակարգումը հաճախ կատարվում է ըստ խոսողի նպատակի:

Հետևաբար, խոսքի միավոր հանդիսացող նախադասությունների մեջ ոչ միայն արտահայտվում են չափածոյի գեղարվեստական առանձնահատկություններով պայմանավորված որոշ իրողություններ, այլև գրող-անհատի վերաբերմունքն իր նկարագրած իրականության նկատմամբ, որով և, վերջին

հաշվով, պայմանավորված են նախադասության տարբեր տիպերի գործածություններում:

Խանյան իր ստեղծագործություններում գործածել է ժամանակակից հայ գրական լեզվի մեջ գործածվող նախադասությունների բոլոր տիպերը՝ տարբեր համանանությամբ: Ընդհանրապես պիտի ասել, որ Խանյանի չափածոյի շարահյուսությանը բնորոշ չէ երկարաշունչ, բազմաբարդ նախադասությունների գործածությունը: Գրողը հիմնականում գրում է սեղմ նախադասություններով, պարզ ու հասկանալի՝ առանց ավելորդ խճողումների ու խոսքի բովանդակությունը մթագնող արտահայտությունների:

Տարբեր տիպերի ու տարբեր կառուցվածքների նախադասությունների գործածությունը Խանյանի ստեղծագործություններում պայմանավորված է ինչպես գրվածքի բովանդակությամբ, իրականության արտացոլման բնույթով, այնպես էլ իր՝ բանատեղի գեղարվեստական մտածողության առանձնահատկություններով:

Վաղ շրջանի գործերում և հատկապես լիրիկական բանաստեղծություններում գերակշռում է տարբեր բնույթի շարահյուսական պարզ կառուցվածքի նախադասությունների գործածությունը՝ տեղ-տեղ բարդ (շաղկապավոր և անշաղկապավոր), բայց կարճ նախադասությունների գուգորդմամբ: Օրինակ՝

Սարերը շնչում են ինձ հետ,

Գետերը՝ խոսում մտերիմ,

Ասողերը ծորում են մեկ-մեկ

Ու ծոլվում սրտիս ծալքերին: (ԸԵ, հ. 1, էջ 238)

Խանյանի ստեղծագործություններում երբեմն հանդիպում են միակազմ նախադասություններ: Դրանք այնպիսի կառուցյաներ են, որոնք առանց ստորոգման, համապատասխան հնչերանգի միջոցով արտահայտում են ավարտուն նախադասության իմաստ: Այս առանձնահատկությունն էլ, ինչպես նշվում է, միակազմ նախադասությունների գործածությունը դարձնում է ոճական⁴⁹: Յուզապատահայտչական երանգավորմամբ օժտված անվանական միակազմ նախադասությունները բանաստեղծական խոսքում տրամադրությունների արտահայտման գեղարվեստական հնարամքներ են, ինչպես՝ Վիլնյուս... Երեկո... ռեստորան... (ԸԵ, հ. 2, էջ 341), Ազգային հարց... (ԸԵ, հ. 3, էջ 99), Սեպտեմբեր... աշուն... ճանապարհներ գոյն... (ԸԵ, հ. 3, էջ 224), Եվ վերջապես... (ԸԵ, հ. 2, էջ 259):

Բայական միակազմ նախադասություններում բացակայում է ենթական, և այն հնարավոր չէ վերականգնել: Այսպես՝ Գարուն է... (ԸԵ, հ. 1, էջ 51), Մայրամուտ է... (ԸԵ, հ. 1, էջ 107), Գարուն է, արև... (ԸԵ, հ. 1, էջ 112), Ամառ է: Յունիս... (ԸԵ, հ. 1, էջ 115), Զմեռ է... (ԸԵ, հ. 2, էջ 246) և այլն:

⁴⁹ Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Եր., 1986, էջ 169:

Կառուցվածքային տեսակետից ինքնատիպ կազմություններ են նաև բաղդրյալ ստորոգյալի հանգույցի գեղջումնվ նախադասությունները, որոնք բանաստեղծը գործածում է խոսքը հակիրճ, սեղմ դարձնելու նպատակով, ինչպես օրինակ՝

Դու՝ իմ թիկունքին բուրավետ մի սար... (ԸԵ, հ. 1, էջ 198)

Կամ՝

Եվ ծիածանում իմ բախտի մերկան ու իմ ապագան... (ԸԵ, հ. 1, էջ 199)
Սեկ այլ տեղ՝

Ուր ոտք ես դնում՝ գրուց սնամեց,

Ում բարևում ես՝ մտքերը խորիվ... (ԸԵ, հ. 2, էջ 104)

Իսկ պոեմներում շատ հաճախ գործածում է բարդ նախադասության տարբեր տեսակներ՝ դարձյալ խուսափելով երկարաշունչ բազմաբարդ նախադասություններից: Այստեղ, որտեղ բանաստեղծն էակական հանդարտությանը սկսում է պատմել, և երկի մեջ իշխում է պատմողական տարրը, գործածում է շաղկապավոր կամ անշաղկապ բարդ հանդարտական նախադասություններ՝ ստորադասականների գուգորդմամբ, հաճախ նոյնիսկ կրկնելով շաղկապները, որոնք հանապատասխանում են գրվածքի էակական ընթացքին:

Անշուշտ չի կարելի մտածել, թե Խանյանը մի ստեղծագործության մեջ գործածում է անպայման պարզ կամ բարդ հանդարտական, իսկ մի այլ տեղում միայն ստորադասական նախադասություններ:

Սույն ստեղծագործության մեջ մենք հանդիպում ենք տարբեր բնույթի ու կառուցվածքի նախադասությունների գուգահեռ գործածությունների: Այնպես որ, երբ խոսում ենք դրանցից մեկի կամ մյուսի մասին, ապա նկատի ունենք մեկնումնեկի գերակշռությունն այս կամ այն ստեղծագործության մեջ:

Բարդ նախադասությունների գործածության հարցում Խանյանը նախապատվությունը տալիս է շաղկապավոր և անշաղկապ ոչ ծավալուն նախադասությունների գործածությանը: Նրա չափածո ստեղծագործություններում լայն կիրառություն ունեն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնք մեծ չափով նպաստում են խոսքի արագ ընթացքին և հնարավորություն տալիս մի տողից արագ անցում կատարելու մյուս տողը, խոսքը դարձնում ռիթմիկ ու շարժուն: Անշաղկապ բարդ նախադասությունների գործածությունները մեծ մասմբ պայմանավորված են բանաստեղծական չափը, տողերի համաչափ կառուցվածքը պահպանելու և այլ պահանջներով: Խանյանը գործածել է տարբեր տեսակի բարդ նախադասություններ՝ անշաղկապ կապակցությամբ:

Օրինակ.

Իմ սիրելի, կրկին անցա ձեր տան մոտով,

Սիրտս վառվեց անմարելի մի կարոտով: (ԸԵ, հ. 1, էջ 110)

Կամ՝

ճանապարհս ինձ տանում է

Արևսարի լամշերն ի վար,

*Մրտիս խորքում արթնանում են
Պատանեկան տենչերս վառ: (ԸԵ, հ. 4, էջ 117)*

Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների կազմի մեջ մտնող պարզ նախադասությունների միջև եղած ինաստային կապի բազմազան նրբերանգներն առավել ցայտուն ու որոշակի են դառնում հատկապես շաղկապական կապակցությունների մեջ: Օրինակ՝

*Բայց ամենից շատ, հայրենի լեռներ,
Ես գագաթներն եմ սիրում ձեր հպարտ
Եվ այն պահը թեժ, երբ անթիվ հողմեր
Գալիս, պարտվում են ձեր ոտքերի տակ: (ԸԵ, հ. 1, էջ 33)*

Խանճանը հաճախ համազոր նախադասությունները միացնում է ոչ թե Ա, այլ ու շաղկապով և դրանով ավելի է ընդգծում նրանց միասնությունը, միավորից բնույթը:

Օրինակ՝

*Աչքերիդ մեջ աստղեր տեսա,
Նրանց լույսը եկավ փունջ-փունջ
Ու շաղախվեց իմ արյանը,
Քո իսկ լույսով հոգուդ հասա
Ու փարվեցի քեզ լուռ ու մունջ... (ԸԵ, հ. 1, էջ 449)*

Նկատելի է, որ ու շաղկապով կապակցում է մեծ մասամբ նույն ենթականերն ունեցող միավորյալ նախադասությունները, երբեմն էլ դեպքերի հաջորդականություն արտահայտող համազոր նախադասությունները:

Ինչպես օրինակ՝

*Եվ ցավերից այդ ծով հնչեց ծիչը ցասման,
Ու ցասումը դարձավ վառող կրակ,
Ու վրեժը անհուն ճեղքեց ամեն սահման,
Ու ծնվեցին քանի՛ քաջեր իրակ: (ԸԵ, հ. 3, էջ 265)*

Ինչպես երևում է բերված օրինակներից, շաղկապավոր բարդ նախադասությունների գործածությունը պայմանավորված է խոսքի բովանդակային, ոճական ու արտահայտչական ներքին պահանջներով:

Բազմաբարդ նախադասությունների կապակցության՝ պարբերույթի միջոցով բանաստեղծն արտահայտում է այս կամ այն միտքը, տվյալ երևույթի ամբողջական ու լրիվ նկարագրությունը: Օրինակ՝

*Եթե մերժես, ողջ երկիրդ պիտի վարեմ,
Մեծ ու փոքրիմ կուրացնելով գերեվառեմ
Թուր ու սրի հարվածներով մինչև Սամառ
Պարեցնեմ ու երգել տամ ծմեռ-ամառ,
Շուշանիկիդ նստեցնեմ հենց քո ձիուն,
Ասեմ՝ ես քո արեգակն եմ, հայի սիրուն,
Քո արժիվը ու սերը քո ես եմ հիմա,*

Քո Եսայը մի ուրու էր ու մի հիմար,
Քո Եսայի հոգին արդեն քռավ-զնաց,
Դիշատակը գանգի կաշին միայն մնաց,
Քո Եսայը խաբում է քեզ, որ արծիվ է,
Ես եմ արծիվ, նա իմ նետից ընկած ցին էր: (ԸԵ, հ. 3, էջ 196)

Սակայն այս կարգի նախադասությունների գործածությունը, ինչպես արդեն ասել ենք, բնորոշ չէ խանյամի ստեղծագործության լեզվի շարահյուսությանը:

Մեր դասականների գործերում, իհարկե, կան հաջող պարբերույթի, բազմաբարդ նախադասությունների օգտագործման բազմաթիվ օրինակներ, բայց այդ կարգի նախադասությունների գործածությունն ընդհանրապես բանաստեղծական խոսքին հատուկ չէ, որովհետև դրանք թուլացնում են խոսքի արտահայտչականությունը և դժվար են ընկալվում, մանավանդ երբ խախտվում են նրանց մասերի միջև եղած փոխադարձ հարաբերություններն ու շարահյուսական կապակցությունը:

Այսպիսով, օգտագործելով շարահյուսական տարբեր կառուցվածքի նախադասություններ, հմտորեն ու ճիշտ կառուցելով իր խոսքը՝ Խանյանը հարազատորեն է դրսկորել մեր գրական լեզվի շարահյուսության հիմնական օրինաչափությունները: Օգտվելով քերականության ընձեռած ոճական հնարավորություններից՝ բանաստեղծը ձևաբանական ու շարահյուսական անհրաժեշտ միջոցների ընտրությամբ ու դրանց ոճական նրբիմաստմների նպատակային կիրառությամբ պատկերավորություն, ներգործություն է հաղորդել իր լեզվին՝ միաժամանակ արտացոլելով գրական հայերենի քերականական օրինաչափությունների կենսունակ միտունմերը:

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՐԱՅԵՑՉԱԿԱՆ ԴԱՄԱԿԱՐԳԸ

Պատկերավորությունը բանաստեղծական խոսքի ամենաբնորոշ կողմն է, նրա լեզվի հիմնական առանձնահատկությունը: Այս իմաստով լեզվում հատուկ կարևորություն են ստանում պատկերավորման այն միջոցները, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում առավել գունեղ ներկայացնել պատկերվող կյանքի առարկաներն ու երևույթները: Ամեն մի իսկական բանաստեղծի ուժը «պատկերավոր մտածելու, աշխարհի իրերին, ամեն ինչին բանաստեղծական տեսանկյունից նայելու մեջ է»⁵⁰,- փաստում է հանճարեղ բանաստեղծ Պ. Սևակը:

Խանյանի գեղարվեստական մտածողությունը լավագույն ձևով արտահայտվել է ոչ միայն բառապաշտարային ու քերականական իրողությունների յուրօրինակ իրացունով, այլև պատկերավորման միջոցների հնքնատիպ դրսնորմանք: Խանյանն այն բանաստեղծներից է, ում քնարը հնչում է ժամանակի ոգուն համահունչ, նա որոնեց ու գտավ իր ստեղծագործության թեմաներին ներդաշնակ, համահնչյուն պատկերներ և համեմատություններ, արտահայտչական յուրօրինակ ձևեր ու հնարանքներ, որոնք թարմություն ու բազմերանգություն հաղորդեցին նրա բանաստեղծական խոսքին:

Օգտագործելով մեր դասական գրականության պատկերավորման համակարգ՝ Խանյանն այն հարստացրեց նոր ժամանակների ոգուն հանապատասխան արտահայտչամիջոցներով, քանի որ անհնար է պատկերացնել նոր ժամանակների քնարերգությունը հին բանաստեղծական ձևերով. նոր ժամանակաշրջանը բերում է նաև նոր վերաբերունք պատկերավորման միջոցների նկատմամբ:

Լեզվի պատկերավորման միջոցները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ այլաբերություններ (տրոյա) և բանադարձումներ (ֆիգուրա): «Այլաբերությունները բառային միավորներ են, որոնք կառուցվում են բառերի ու բառակապակցությունների միջոցով, իսկ բանադարձումներն ավելի շատ հենվում են շարակիուսական տարրեր կառուցվուների վրա»⁵¹: Պատկերավորությունը պայմանավորված է լեզվական միջոցների՝ խոսքի բովանդակության նկատմամբ ունեցած հարաբերությամբ: Ասել է թե՝ ոչ միայն պատկերավորման միջոցները, այլև լեզվական բոլոր իրողությունները գնահատվում և արժևորվում են բռվանդակության ու դրա լեզվական արտահայտության հանապատասխանության հայեցակետով: Նետևաբար պատկերավորման միջոցների ուսումնասիրությունն ինքնանպատակ չէ. ուղղված է խոսքարվեստի էական կողմերը բացահայտելուն: Խանյանի խոսքարվեստում պատկերավորման միջոցները ծառայում են գեղարվեստական կոնկրետ խնդիրների և բանաստեղծի ոճը հատ-

⁵⁰ Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Եր., 1976, էջ 433:

⁵¹ Եղելյան Լ., Դայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 333:

կանշող լեզվական կարևոր միջոցներ են, որոնք ակտիվորոն մասնակցում են գեղարվեստական ներդաշնակության, հուզականության և քնարական ներդաշնակ մթնոլորտի ստեղծմանը:

Խանյանի բանաստեղծական խոսքը դիպուկ է, պարզ ու արտահայտիչ: Պարզությունը, պատկերների ու համեմատությունների առարկայական կոնկրետությունը խանյանի ոճի, նրա բանաստեղծական արվեստի ամենակարևոր հատկանիշներն են:

Նրա ստեղծագործության լեզվին խորթ են պատկերների ավելորդ կուտակումը, «պերճախոս» ոճը, մի հաճամանք, որը բանաստեղծական խոսքը դարձնում է արհեստական, մթագնում ստեղծագործության հիմնական իմաստը, խանգարում մտցի ճիշտ ընկալմանը: Ընթակառական, խանյանի բանաստեղծական խոսքը հստակ է, ասելիքը՝ պարզ՝ զերծ ավելորդ «պաճուճանքներից»:

Խանյանի բանաստեղծական խոսքի պատկերավորման բնույթի մասին խոսելիս ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա. բանաստեղծն ամեն ինչ բիտեցնում է ստեղծագործության բովանդակությունից, ենթարկում իր գաղափարական մտահոգմանը:

Խանյանի բանաստեղծական խոսքը հարուստ է լեզվաօճական ու արտահայտչական հնարքներով, նոր ու բարձ մակդիրներով, ինքնատիպ համեմատություններով ու փոխաբերություններով, բառային այլնայլ կրկնություններով:

Մակրիր

Խանյանի ստեղծագործության լեզվի պատկերավորման հիմնական միջոցներից մեկը մակդիրն է, որի նկատմանք բանաստեղծն առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերել: Մակդիրների նպատակային ընտրության միջոցով խանյանը ձգտել է վերստեղծել նկարագրվող երևույթի ճշմարտացի պատկերը, հասմել խոսքի պատկերավորության ու արտահայտչականության:

Խանյանի ստեղծագործության լեզվին բնորոշ է ամենատարբեր մակդիրների առատ գործածությունը:

Խոսելով խանյանի գործածած մակդիրների մասին՝ պետք է ասել, որ բանաստեղծը խուսափում է նախասիրած մակդիրների կրկնությունից և ձգտում է միշտ նոր ու բարձ մակդիրներ գործածել, մի բան, որ բանաստեղծական խոսքը դարձնում է արտահայտիչ և պատկերավոր: Մակդիրները խանյանի ստեղծագործության մեջ խոսքը գեղեցկացնելու, նրան արտաքին փայլ հաղորդելու ինքնանպատակ միջոցներ չեն: Դրանց գործածությունը խիստ պատճառաբանված է և բխում է նկարագրվող երևույթների էական հատկանիշները բացահայտելու անհրաժեշտությունից: Բանաստեղծը ամեն մի կոնկրետ դեպքում կարողանում է ընտրել այնպիսի մակդիրներ, որոնք աչքի են ընկնում իրենց պատկերավորությանք, դիպուկ են, արտահայտիչ:

Մակդիրներն ընտրելիս խանյանն առաջին հերթին նկատի է ունենում նրանց հմաստային խորությունն ու բազմազանությունը, նկարագրվող երևույ-

թի բնորոշ կողմերն արտահայտելու հատկությունը: Խանյանի ստեղծագործություններում ընթերցողը կարող է հանդիպել բազմաթիվ նոր ու թարմ մակդիրների: Այդ մակդիրները հետաքրքրական են ոչ միայն իրենց կիրառական-ոճական առանձնահատկություններով, այլև նրանով, որ արտահայտում են բանաստեղծի հայացքն ու հուզական, գաղափարական վերաբերմունքը նկարագրվող երևույթների նկատմամբ: Իր ցանկացած միտքը պատկերավոր ու ճշշտ արտահայտելու համար Խանյանը կարողանում է ընտրել այնպիսի բովանդակալից մակդիրներ, որոնք վառ ու տպավորիչ կերպով բացահայտում են նկարագրվող երևույթի բնորոշ հատկանիշները: Բերենք օրինակներ՝ աստղաժամանակները (ԸԵ, հ. 2, էջ 172), գարնանահոտ երազ (ԸԵ, հ. 2, էջ 173), բուլս արև (ԸԵ, հ. 2, էջ 173), իրե տենչեր (ԸԵ, հ. 2, էջ 173), լուսածին մայր (ԸԵ, հ. 2, էջ 177), ցողաբաց ամայ (ԸԵ, հ. 2, էջ 179), լուսե հայացք (ԸԵ, հ. 2, էջ 178), աստղաառէց հրայրը (ԸԵ, հ. 2, էջ 181), աստղալույս հույս (ԸԵ, հ. 2, էջ 182), աստղահյուս երգ (ԸԵ, հ. 2, էջ 182), աստղաժամիտ աղջիկներ (ԸԵ, հ. 2, էջ 182), լուսափայլ շարքեր (ԸԵ, հ. 2, էջ 182), աստղածային ծաղիկ (ԸԵ, հ. 2, էջ 182), հոգեհմա բույրեր (ԸԵ, հ. 2, էջ 182), հոգեպարար տաղիկ (ԸԵ, հ. 2, էջ 182), վերծիզ ծամփա (ԸԵ, հ. 2, էջ 75), հրածին Արցախ (ԸԵ, հ. 2, էջ 76), հայածին դարեր (ԸԵ, հ. 2, էջ 78), արևահունց բերդ (ԸԵ, հ. 2, էջ 80), սև ծեռք (ԸԵ, հ. 2, էջ 89), աստղածին լեռներ (ԸԵ, հ. 2, էջ 90), արթուն հորդոր (ԸԵ, հ. 2, էջ 96), նորեններկ խիղճ (ԸԵ, հ. 2, էջ 97), լուսանուն կոկոն (ԸԵ, հ. 1, էջ 59), արեգակնափայլ տիվ (ԸԵ, հ. 2, էջ 110) և այլն:

Խանյանը ոչ միայն կարողանում է նկարագրվող առարկան կամ երևույթը ճիշտ բնութագրել թարմ մակդիրներով, այլև ընտրել տվյալ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան մակդիրներ, որոնք ոճական տեսակետից ներդաշնակում են իրար և դառնում բանաստեղծի հույզերն ու տրամադրություններն արտահայտելու միջոց: Օրինակ՝

Սիրո մի աղբյուր երգեց կրծքիս տակ.

Ծողոս, աստղածին... (ԸԵ, հ. 2, էջ 184)

Դու իմ խոհերի

Թևավիր թռչում,

Կապույտ ծովերի

Շառաչ ու հնչում,

Իմ երազների անմարում տաղիկ... (ԸԵ, հ. 2, էջ 186)

Խանյանն իր բանաստեղծական խոսքին թարմություն է հաղորդում ոչ միայն նոր մակդիրներով ու դրանց հմուտ ընտրությամբ, այլև նույն մակդիրի տարբեր ու բազմազան գուգորդություններով: Այսպես, մի գոյականի համար հատկանշական մակդիրը նա դնում է տարբեր գոյականների վրա: Դա պայմանավորված է ինչպես տվյալ ստեղծագործության գաղափարական միտուններով, նրա բովանդակությամբ, այնպես էլ ոճական ընդիհանուր առանձնահատկություններով: Այսպես.

Լույս ծով (ԸԵ, հ. 2, էջ 141), լույս թևեր (ԸԵ, հ. 2, էջ 134), լույս պատկեր (ԸԵ, հ. 2, էջ 114), լույս թրթոց (ԸԵ, հ. 2, էջ 151), լույս աչք-ունքեր (ԸԵ, հ. 2, էջ 179),

լուս հոգիներ (ԸԵ, հ. 2, էջ 78), լուս ոգի (ԸԵ, հ. 2, էջ 88), լուս բարձունք (ԸԵ, հ. 1, էջ 32):

Ծով վիշտ (ԸԵ, հ. 2, էջ 97), ծով սիրտ (ԸԵ, հ. 2, էջ 127), ծով հույսեր (ԸԵ, հ. 2, էջ 129), ծով թախիչ (ԸԵ, հ. 2, էջ 92):

Անուշ խոսքեր (ԸԵ, հ. 2, էջ 134), անուշ ծափեր (ԸԵ, հ. 2, էջ 135):

Քաղցր բառ (ԸԵ, հ. 2, էջ 145), քաղցր սեր (ԸԵ, հ. 2, էջ 146), քաղցր համբույր (ԸԵ, հ. 2, էջ 160), քաղցր հանդիպում (ԸԵ, հ. 2, էջ 188):

Վարդե համբույր (ԸԵ, հ. 2, էջ 113), վարդե գիրկ (ԸԵ, հ. 2, էջ 113):

Արցախական հող (ԸԵ, հ. 2, էջ 103), արցախական հոգի (ԸԵ, հ. 2, էջ 103):

Կապույտ հայացը (ԸԵ, հ. 1, էջ 240), կապույտ երկինք (ԸԵ, հ. 2, էջ 183), կապույտ աչքեր (ԸԵ, հ. 2, էջ 183), կապույտ ծով (ԸԵ, հ. 2, էջ 183), կապույտ երազ (ԸԵ, հ. 2, էջ 183), կապույտ մուրազ (ԸԵ, հ. 2, էջ 183), կապույտ ծաղիկ (ԸԵ, հ. 2, էջ 183), կապույտ ծիծաղ (ԸԵ, հ. 2, էջ 183), կապույտ համբույրներ (ԸԵ, հ. 2, էջ 184):

Նույն հատկանիշն արտահայտող միևնույն մակդիրի տարրեր գուգորդություններն առաջ են բերում բանաստեղծական խոսքի բազմերանգություն ու գումագեղություն:

Դետաքրքրական է նկատել, որ Խանյանն աշխատում է նույն գոյականը բնութագրել տարրեր ու բազմազան հատկանիշներով, գտնել այդ գոյականների նոր, անհայտ հատկանիշներ ու կողմեր. նման դեպքերում բանաստեղծը նույն գոյականի վրա դնում է բոլորովին տարրեր մակդիրներ: Եվ ամեն անգամ նույն գոյականի վրա դնելով բազմազան մակդիրներ՝ բացահայտում է տվյալ գոյականի մի նոր հատկանիշը, տարրեր տեսանկյունից բնութագրում այն: Այսպես օրինակ.

Գորշ սիրտ (ԸԵ, հ. 2, էջ 97), կրակ սիրտ (ԸԵ, հ. 2, էջ 109), ծով սիրտ (ԸԵ, հ. 2, էջ 127):

Սուրբ թեւեր (ԸԵ, հ. 2, էջ 96), լուս թեւեր (ԸԵ, հ. 2, էջ 134):

Քաղցր համբույր (ԸԵ, հ. 2, էջ 160), վարդե համբույր (ԸԵ, հ. 2, էջ 113):

Թխահեր արև (ԸԵ, հ. 2, էջ 161), բարկ արև (ԸԵ, հ. 2, էջ 161), նաիրյան արև (ԸԵ, հ. 2, էջ 129) և այլն:

Ոճական այս միջոցը թարմություն ու գումագեղություն է տալիս Խանյանի բանաստեղծական խոսքին:

Խանյանը հաճախ նույն տեղում կրկնվող գոյականի վրա ևս դնում է տարրեր մակդիրներ՝ արտահայտելով նրա տարրեր հատկանիշները: Օրինակ՝

Աշխարհ կա քո աշխարհ սրտում,

Աշխարհին տուր քո սիրտը խենք... (ԸԵ, հ. 1, էջ 485)

Ընդգծված մակդիրները տարրեր կողմերից են լրացնում սիրտ գոյականին: Կամ՝

Գնաս բարով, աղավնաթև

Իմ Աղավնի քաղցր մայրիկ,

Դողդ վրադ լինի թերև,

Մայրերի մեջ բարձր մայրիկ: (ԸԵ, հ. 4, էջ 211)

Մակդիրներն ըստ իրենց բովանդակության լինում են նկարագրական և հու-

զական: Նկարագրական մակդիրները, չնայած իրենց մեջ ևս ունեն հուզական տարր, բայց հիմնականում առարկաների էական հատկանիշները սեղմ ու պատկերավոր ձևով արտահայտող միջոցներ են, իսկ հուզական մակդիրներն արտահայտում են բանաստեղծի հուզական վերաբերնունքն ու գնահատական նկարագրվող երևույթների նկատմամբ:

Խանյանի խոսքարվեստում նույն հաճախականությամբ հանդիպում են հուզական և նկարագրական մակդիրները: Այս նկարագրական մակդիրների օրինակներ՝ արեգակավայլ տիկ (ԸԵ, հ. 2, էջ 110), երկերեսանի ուժ (ԸԵ, հ. 2, էջ 119), նորահյուս խաչքար (ԸԵ, հ. 2, էջ 124), մեղմածուկ օվկիան (ԸԵ, հ. 2, էջ 151), գայլաբարո թշնամի (ԸԵ, հ. 2, էջ 156), հուր ժպիտ (ԸԵ, հ. 2, էջ 161) և այլն:

Միանց գուգահեռ խանյանը գործածում է այնպիսի մակդիրներ, որոնք մատնաշուր են ոչ այնքան առարկաների և երևույթների արտաքին հատկանիշները, որքան նրանց ներքին կողմը: Դրանք հիմնականում հուզական բնույթի մակդիրներ են, որոնք նտային գուգորդությունների շնորհիվ ընթերցողի մեջ առաջ են բերում այս կամ այն զգացումը, հույզը: Օդինակ՝ աչքը թաց խավար (ԸԵ, հ. 2, էջ 97), բզկտված հող (ԸԵ, հ. 2, էջ 104), արնածին խրախճան (ԸԵ, հ. 2, էջ 107), արցունքոտ երկինք (ԸԵ, հ. 2, էջ 108), սգահար միտք (ԸԵ, հ. 2, էջ 108), քաղցր բար (ԸԵ, հ. 2, էջ 145), քաղցր տատի (ԸԵ, հ. 1, էջ 178), հպարտ կչկչոց (ԸԵ, հ. 2, էջ 246):

Այս կարգի մակդիրները ստեղծագործությանը տալիս են լիրիկական նույր երանգավորում:

Խանյանի ստեղծագործություններում հանդիպում են նաև կազմությամբ բարդ բառերով արտահայտված և բազմակի մակդիրներ: Դրանք սովորական մակդիրներից տարբերվում են նրանով, որ առարկան բնութագրում են բազմակողմաննիրեն, խոսքին տալիս վեհություն ու հանդիսավոր բնույթ:

Իմ հրաժին արմատ...

Անոն իմ փառավոր,

Իմ լուսածիր հավատ,

Օցախ իմ դարավոր:

Խոսքաշեմ իմ քանքար,

Իմ աստղաբեռ պատիվ,

Դայկազեն իմ պայքար... (ԸԵ, հ. 2, էջ 95)

Բերված այս հատվածից երևում է, որ կազմությամբ բարդ բառերով արտահայտված մակդիրներով բանաստեղծը ստեղծել է յուրահատուկ ոճական կոլորիտ: Ինչպես այս ստեղծագործության մեջ, այնպես էլ խանյանի մյուս գործում հաճախ ենք հանդիպում այդպիսի մակդիրների գործածության՝ աստղածին լեռներ (ԸԵ, հ. 2, էջ 90), արեգակավայլ տիկ (ԸԵ, հ. 2, էջ 110), աստեղնահյուս հեքիաթ (ԸԵ, հ. 2, էջ 121), հայրենախոս կրիվ (ԸԵ, հ. 3, էջ 225), մեսրոպատար շողեր (ԸԵ, հ. 3, էջ 223), վեհանիստ խորք (ԸԵ, հ. 1, էջ 458), ամենահաղթ թևեր (ԸԵ, հ. 1, էջ 459), հավերժահոս գեւ (ԸԵ, հ. 2, էջ 199), լուսաբեր խրատ (ԸԵ, հ. 2, էջ 243), աստղաբեռ բալիկ (ԸԵ, հ. 2, էջ 244), մատնարձակ չանչեր (ԸԵ, հ. 2, էջ 247), արևահունց հկք (ԸԵ, հ. 2, էջ 247), գարնանածուկ երգ (ԸԵ, հ. 2, էջ 247), կենսառաք բարեկամ (ԸԵ, հ. 2, էջ 247), ժայռածին աղբյուր (ԸԵ, հ. 2,

էջ 248), հեզահամբույր սեր (ԸԵ, հ. 2, էջ 248), հուսավառ երգ (ԸԵ, հ. 2, էջ 248):

Բարդ մակդիրներին գործահեռ խանյանը նույն գոյականի հետ գործածում է բազմակի մակդիրներ, որոնք տվյալ գոյականը բնութագրում են տարրեր կողմերից: Այդ պատճառով էլ բազմակի մակդիրների գործածությունը նույն գոյականի հետ ոճական ոչ մի ծանրություն չի ստեղծում, որովհետև յուրաքանչյուր մակդիր հանդես է գալիս իմաստային որոշ ծանրաբեռնվածությամբ: Այսպես օրինակ՝ խանյանը գրում է.

Աստվածային, շրայլաշող

Մի շնորհը կա քո արյան մեջ: (ԸԵ, հ. 2, էջ 151)

Յաղթաքազուկ, քրտնաջան ու հողարույր

Որդիմերիդ փառքը պիտի միշտ սուրա... (ԸԵ, հ. 1, էջ 468)

Բերված օրինակում **աստվածային և շրայլաշող** մակդիրները լրացնում են մեկը մյուսին, ապա բնութագրում **շնորհը** գոյականը՝ ստեղծելով նկարագրվող պատկերի լիարժեքություն, իսկ երկորդ օրինակում **հաղթաքազուկ, քրտնաջան և հողարույր** մակդիրներից յուրաքանչյուրը յուրովի է բնութագրում **որդիմերի** գոյականին:

Եվ քանի որ դրանք նույն առարկայի երկու կամ ավելի տարրեր հատկանիշներ են արտահայտում, ուստի նրանց գործածությունը միանգամայն տեղին է: Խանյանի ստեղծագործություններում քիչ են հանդիպում նույն գոյականի հետ բազմակի մակդիրների գործածության դեպքեր.

Ճամփա՛ զարդարված գործերով բազում,

Մանուշակարույր, աստղոտ, հրացայտ: (ԸԵ, հ. 3, էջ 286)

Երբեմն բազմակի մակդիրներից մեկը բանաստեղծը գործածում է նախադաս, իսկ մյուսը (կամ մյուսները)՝ հետադաս. օրինակ՝ **չխամրող** արևոց բարկ

(ԸԵ, հ. 2, էջ 161):

Խանյանի բանաստեղծական լեզվին առանձին գունագեղություն ու գեղեցկություն են տալիս փոխաբերական (մետաֆորային) մակդիրները: Սրանք սովորական մակդիրներից տարբերվում են նրանով, որ չեն ընկալվում իրենց ուղղակի նշանակություններով, և այդ հմաստով մետաֆորային մակդիրները յուրահատուկ փոխաբերություններ են: Այս դեպքում բանաստեղծը բնութագրվող առարկայի ու փոխաբերական իմաստով գործածված մակդիրի միջև ինչոր համեմատելի կամ ննան եզրեր է գտնում և առարկայի նկարագրությունը ցայտուն ու տպավորիչ դարձնելու համար գործածում է այսահին մակդիրներ: Այսպես օրինակ՝ իր պատճենական տունը նկարագրող ստեղծագործության մեջ խանյանը **հեքիափ** բարի հետ գործածում է **ոսկե** մակդիրը.

...Այդ ասել է՝ այստեղ առույգ մի գերդաստան

Յորիմում է ոսկե հեքիափ իր կյանքի: (ԸԵ, հ. 1, էջ 271)

Ոսկե բնութագրումը, իհարկե, չի բխում **հեքիափ** գոյականի հատկությունից, որովհետև այն ոսկի լինել չի կարող: Այստեղ փաստորեն կա թաքնված համեմատություն. հաճելին, հոգեբովը համեմատված են ոսկու հետ:

Մետաֆորային մակդիրները անհրաժեշտ տրամադրություն ստեղծելու, բանաստեղծին համակած ապրումներն արտահայտելու միջոց են: Այսպիսի

մակդիրների գործածությունը հաճախ պայմանավորված է լինում ստեղծագործության ընդհանուր տրամադրություններով: Այդ կարգի մակդիրներով բնութագրվող առարկան դառնում է ավելի ցայտուն, ընթերցողին մտածել տալիս դրանց կապի մասին: Այսպես օրինակ՝ արնածին խրախճան (ԸԵ, հ. 2, էջ 107) կամ սգահար միտք (ԸԵ, հ. 2, էջ 108) կապակցությունները մեզ ստիպում են մտածել, թե ինչու հատկապես այդ մակդիրներով են դրանք բնութագրված: Այդպիսիք են հետևյալ կապակցությունները. Վարդ աղջկ (ԸԵ, հ. 3, էջ 158), արևահունց բառ (ԸԵ, հ. 3, էջ 121), ոսկե երազ (ԸԵ, հ. 3, էջ 294), արյունախում ուժ (ԸԵ, հ. 2, էջ 251), ափաչափ երկիր (ԸԵ, հ. 2, էջ 253) և այլն:

Խոսքի պատկերավորությունն ու արտահայտչականությունն ուժեղացնելու նպատակով խանյանը երեմն գործածում է այնպիսի մակդիրներ, որոնք իմաստով խիստ հակադիր են բնութագրվող առարկային: Առարկան իմաստով իրեն հակադիր մակդիրով բնութագրելը ոճական այնպիսի միջոց է, որով բանաստեղծը կտրում, առանձնացնում է այդ առարկան իր սովորական հատկանիշներից և բնութագրում մի նոր, անսպասելի կողմնով: Նման դեպքերում առարկան բնութագրվում է իմաստով նրան բոլորովին հակառակ մակդիրով: Իրաք հակադիր հատկանիշների, նրանց ներքին իմաստային նրբությունների հակադրումն ու գուգակցումը ուժեղացնում է խոսքի արտահայտչականությունը: Ըստ Ս. Էլոյանի՝ «տրամագիծորեն հակադիր և անհամատեղելի հատկանիշներն իրենց անսպասելիությամբ առավել սուր ու շեշտակի են դարձնում ասելիքը, և ընդգծվող երևույթը ստանում է պատկերավորության մեջ ուժ ու արտահայտչականություն»⁵²: Ոճագիտության մեջ նշված հնարանքը հայտնի է օքսիմորոն (նրբարանություն) անվանումով. այն հիմնված է բնութագրվող առարկաների իմաստային հակադրության վրա:

Օքսիմորոնների յուրահատկությունն առարկաներն ու երևույթներն իրենց բնորոշ հատկանիշներից զրկելու է, որի հետևանքով ընթերցողի երևակայության մեջ առաջանում է ուժեղ լարում՝ մոտեցնելու իմաստային այն օրակաները, որոնք աննկատելի թելերով կապված են իրաք: Բառերի մեջ իմաստային ու հոլովական նոր նրբերանգներ գտնելու համար բանաստեղծը քանդում է բառակապակցությունների կաղապարները՝ ստեղծելով իր ոճին հասուկ գուգորդություններ:

Ղիտարկենք Սոկրատ Խանյանի չափածոյում հանդիպող օքսիմորոնի գործածության մի քանի օրինակ՝ քա՛ղցր-քա՛ղցր իմ տառապանք (ԸԵ, հ. 3, էջ 133), հանգած բոցեր (ԸԵ, հ. 2, էջ 96), ջերմ դող (ԸԵ, հ. 2, էջ 212):

Տառապանք գոյականի համար քաղցր մակդիրը բնորոշ չէ, որովհետև այդ բառերի հետ ընդգծված մակդիրը սովորաբար գործածվելու հատկություն չունի: Սակայն դրանց իմաստային հակադրությամբ էլ իրենց շեշտվում է այն, որ դա սովորական տառապանք չէ իր հսկական իմաստով, այլ բանաստեղծի հոգին ամոքող, ջերմացնող տիպություն ու տառապանք:

Նման մակդիրներով բանաստեղծը նկարագրվող առարկաներն օժտում է

⁵² Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 173:

բոլորովին նոր հատկություններով: Առարկաներն իրենց հակադիր իմաստներով բնութագրող մակդիրների, նրանց հատկանիշների մերժեցման ու համադրման միջոցով բանաստեղծն իր խոսքին տալիս է հուզական երանգավորում:

Գրականագիտության մեջ սովորաբար մակդիր են հաճարվել միայն գոյականի հետ կապակցվող գեղարվեստական որոշիչները: Մակդիրի նման ըմբռնումը խիստ սահմանափակում է պատկերավորման այդ միջոցի արտահայտչական հնարավորությունները: Սակայն ոճագիտական նորագույն գրականության մեջ մակդիրների շարքն են դասվում նաև առարկաների գործողությունները բնորոշող բառերը⁵³, որոնք իրենց քերականական դերով մոտենում են մակրայներին, իսկ շարահյուսական կիրառությամբ՝ ձևի պարագաներին: Այդպիսի մակդիրները քերականորեն համընկնում են ձևի պարագաների հետ, բայց անշուշտ տարբերվում են նրանցից: Լեզվական նշված իրողության վերաբերյալ Ա. Մարությանը գրում է. «Չնայած որ գործողությունը բնութագրող բառերն իրենց ոճական արտահայտչական դերով ընդհանուր կողմեր ունեն մակդիրների հետ, բայց դրանք նույնացնելը, մեր կարծիքով ճիշտ չէ»⁵⁴: Մեկ այլ աշխատության մեջ լեզվաբանը գրում է. «Բանաստեղծական խոսքի արտահայտչական կողմն ուժեղացնում են հատկապես առարկաների գործողությունները բնորոշող մակդիրները»⁵⁵: Որոշչի և ձևի պարագայի գործառույթները, անշուշտ, ակնհայտորեն տարբերվում են. մեկն առարկայի հատկանիշ է ցույց տալիս, մյուսը՝ գործողության, որոշիչը հիմնականում արատահայտվում է ածականով, իսկ ձևի պարագամ՝ մակրայով: Երկուսն էլ, սակայն, հատկանիշ են վերագրում, և փոխարեարար գործածվելու դեպքում նրանց ոճական արժեքը նույնանում է: Յանենատենք քննուչ մակդիրի կիրառությունները հետևյալ օրինակներում. քննուչ սամրել (Ըե, հ. 2, էջ 163) և քննուչ մայր (Ըե, հ. 1, էջ 265):

Նմանօրինակ մակդիրների առատ գործածությամբ բանաստեղծը ստեղծում է անհրաժեշտ ոճական երանգավորում: Օրինակ.

Խաղաղ հոգի (Ըե, հ. 3, էջ 91) - խաղաղ ծփալ (Ըե, հ. 2, էջ 191)
քաղցր համբույր (Ըե, հ. 2, էջ 160) - քաղցր ծիծառել (Ըե, հ. 2, էջ 160)
հպարտ լեռներ (Ըե, հ. 1, էջ 232) - հպարտ ապրել (Ըե, հ. 4, էջ 277)
հոգեհմա խորհուրդներ (Ըե, հ. 2, էջ 155) - հոգեհմա ապրել (Ըե, հ. 4, էջ 277)
Յեղինակի ստեղծագործություններում մակդիրների մեծ մասն արտահայտված է ածականներով: Սա միանգամայն բնական է, քանի որ ածականները, ինչպես նշում է Գ. Զահուկյանը, բնորոշվում են երկու գործառույթով՝ որոշչային և ստորոգելիական, որոնք սերտ կապված են և փոխադարձելի⁵⁶:

⁵³ Եղելյան Լ., Յայոց լեզվի ոճագիտություն, էջ 335:

⁵⁴ Մարության Ա., Յայոց լեզվի ոճարանություն, Եր., 2000, էջ 140:

⁵⁵ Մարության Ա., Ե. Զարենցի չափաժոյի լեզուն և ոճը, էջ 165:

⁵⁶ Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 85:

Խանյանի ոճի գոյացման բաղկացուցիչ տարրերից մեկն էլ մակդիրը գոյական-որոշչներով արտահայտելն է: Եթե ածականով կամ դերբայով արտահայտված մակդիրներն առարկան բնորոշում են միայն մեկ հատկանիշով, ապա գոյական-մակդիրները առարկան կամ երևույթը ներկայացնում են հատկանիշների մի ամբողջ խմբով և որպես հատկանշային խտացում ներկայացնող գոյականներ գեղարվեստական միջավայրից դուրս ևս պահպանում են իրենց իմաստային ուժգնությունն ու արտահայտչականությունը: Գոյականով արտահայտված մակդիրները նույնպես փոխարեւական իմաստ ունեն, որոնք առարկան բնութագրում են մակդիրի դերով հանդես եկող գոյականի գլխավոր հատկությամբ կամ նրա հատկություններից որևէ մեկով: Օրինակ՝ լույս ափ (ԸԵ, հ. 2, էջ 258), երազ Դիցուհի (ԸԵ, հ. 2, էջ 261), հրաշք աղջիկ (ԸԵ, հ. 2, էջ 262), նահատակ սաներ (ԸԵ, հ. 4, էջ 270), ոսկի ձկնիկ (ԸԵ, հ. 2, էջ 183), ցորեն հաց (ԸԵ, հ. 1, էջ 65), մայր բնություն (ԸԵ, հ. 1, էջ 90), գալիք դարեր (ԸԵ, հ. 1, էջ 165) և այլն:

Հարկ է նկատել, որ ամեն գոյական խոսքային միջավայրում չի կարող մակդիր դառնալ, այլ միայն նրանք, որոնք որոշ կապակցություններում կորցնում են գոյականական բովանդակությունը և ստանում իրենց իսկական եռլոյունը բնորոշող հատկանիշի գաղափար: Գոյականով արտահայտված մակդիրներն իրենց արտահայտչականությամբ չեն զիջում ածականով արտահայտված մակդիրներին: Դեռ ավելին, բնութագրի առարկայի կամ երևույթի հատկանիշը գոյական-մակդիրով ձեռք է բերում իմաստային ուժգնություն՝ ընդգծելով նաև բնութագրողի վերաբերմունքը: Հատկանշական են նաև մի շարք գոյական մակդիրների՝ գծիկով գրության ձևերը: Տվյալ դեպքում գրության ձևը պարզապես դառնում է մակդիր-մակադրյալի իմաստային անբաժանելիությունն ընդգծելու օժանդակ միջոց: Այս գոյական-մակդիրների կիրառության մի քանի օրինակներ բանաստեղծական խոսքում, հրաշք-գարուն (ԸԵ, հ. 2, էջ 234), երազ-ծիածան (ԸԵ, հ. 2, էջ 267), մետաքս-հով (ԸԵ, հ. 2, էջ 269), արև-սեր (ԸԵ, հ. 4, էջ 288), հույս-ընկեր (ԸԵ, հ. 4, էջ 288), շունչ-արփի (ԸԵ, հ. 4, էջ 280), հույս-հեքիափ (ԸԵ, հ. 4, էջ 280), հուշ-պատկեր (ԸԵ, հ. 2, էջ 215) և այլն:

Սակրոպային նմանօրինակ կապակցություններում հետին ալան է մղվում գոյական-մակդիրների առարկայական իմաստը, ուժեղանում է բանաստեղծական խոսքի հուզականությունը և շեշտադրվում է բանաստեղծի ընդգծված վերաբերմունքը:

Խոսքի կառուցման տարբեր միջոցներ կան, բայց բառընտրության դեպքում իրար փոխարինողներ չկան: Խանյանի գործածած մակդիրներն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ և գաղափար են տալիս բանաստեղծի լեզվանտածողության ինքնատիպության մասին:

Համեմատություն

Սովորատ Խանջյանի խոսքի պատկերավորման համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում համեմատությունները, որոնք բանաստեղծական խոսքը դարձնում են առավել հուզական ու ներգործուն, նպաստում են գեղարվեստական պատկերն ավելի խորությամբ ընկալելուն:

Ինչպես հայտնի է, համեմատությունը երկու տարբեր երևույթների զուգորդումն է նրանց որևէ նմանության հատկանիշի վրա: Դրանք առարկաների ու երևույթների ներքին կապակցություններն ու հատկանիշները հասկանալի, ճանաչելի դարձնելու կարևոր միջոցներ են: «Համեմատությունը.- ինչպես նշում է՝ Պողոսյանը,- տարբեր առարկաների կամ երևույթների միջև եղած ընդիանուր հատկանիշի հիման վրա առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու կամ նույնացնելու երևույթն է, որին դիմում ենք առարկային կարևորություն տալու, նրա գեղագիտական արժեքը բարձրացնելու (կամ ցածրացնելու) նպատակվ»⁵⁷: Հավելենք նաև, որ համեմատության հիմք կարող է դառնալ նմանեցվող երկու երևույթների նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, որի շնորհիվ կապ է ստեղծվում այդ առարկաների միջև: Համեմատության ժիշտ կառուցումը կախված է գրողի դիտողականությունից և պայմանավորված է նրա գեղարվեստական մտածողությամբ: Սովորաբար համեմատության ժամանակ անծանոթ կամ քիչ ժամոր առարկան համեմատվում է հաճրածանոթ առարկայի կամ երևույթի հետ՝ անծանոթ առարկայի նոր կողմերու ու հատկանիշները բացահայտելու նպատակվ: Պետք է ասել, որ Խանջյանը բոլորովին ինքնուրույն մոտեցում է ցուցաբերել համեմատությունների նկատմամբ. դրանք ավելի շատ արտահայտում են հեղինակային վերաբերմունքն ու գնահատականը նկարագրվող երևույթների նկատմամբ: Այդ պատճառով էլ Խանջյանի գործածած համեմատությունները կառուցված են ոչ այնքան համեմատվող երևույթների միջև եղած արտաքին նմանությունների, որքան հեղինակային վերաբերմունքի տեսակետից նրանց միջև եղած հնարավոր նմանությունների ու բնագրային հանգամանքներով պայմանավորված կողմերի վրա: Համեմատության ուժը նրա համոզիչ լինելու մեջ է: Այն ընթերցողի վրա կարող է ներգործել միայն այն դեպքում, եթե նոր է, անսպասելի, որովհետև նրա ուշադրությունը կենտրոնացնում է համեմատվող երևույթների այնպիսի կապակցությունների վրա, որոնք մինչ այդ չեն նկատվել, ստիպում է տեսմել նկարագրվող երևույթը նոր կապակցությունների ու նոր հաճրածանությունների մեջ: Հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկն էլ անսպասելիության, նորույթի, հնարամատության տարրն է: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր բանաստեղծ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության առումով: Ասվածի վառ ապացույցն են ներքոհիշյալ օրինակներում կիրառված համեմատությունները.

⁵⁷ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գ. 2, Էջ 10:

Քրոջ տաքուկ ափերի պես գուլպան փարվեց քաջի ոտքին,
Թևավորող կանչի նման երգը քռավ շրումքներին... (ԸԵ, հ. 2, էջ 134)

...Կնծռոտ դեմքի նման փոքրացել է հողս... (ԸԵ, հ. 2, էջ 106)

Ահա այսպիսի դիպուկ և յուրահատուկ համեմատությունների միջոցով
Խանյանին հաջողվում է բանաստեղծական խոսքը դարձնել տեսանելի և լի-
րիզմի նուրբ տարրեր հաղորդել իր խոսքին:

Ուշադրություն դարձնենք նաև կիրառված համեմատությունների կառուց-
վածքին՝ համեմատվող առարկա, համեմատության միջոց և ընդհանուր հատ-
կանիշ, որի հիմքով կատարվում է համեմատությունը: Սովորաբար այդ հատ-
կանիշի արտօնահայտման միջոց է դառնում մակրիդ-որոշիչը: Այսպես՝

Եվ թևավոր ես մեր երգերի պես... (ԸԵ, հ. 2, էջ 130)

Բերված օրինակում թևավոր հատկանիշը դառնում է ընդհանուր երգերի և
խոսակցի համար:

Խանյանական համեմատությունների գերակշիռ մասում, սակայն, բացա-
կայում է երկու առարկաները կամ երևույթներն իրար համադրող հիմքը՝ հատ-
կանիշը, ինչպես օրինակ՝

Արկի պես ժպտում ես,

Անպի նման մշուշպում...

Մերը բացվում ես վարդի պես...

Մերը լացում ես ցավիս պես... (ԸԵ, հ. 2, էջ 281)

Դիտարկված բանաստողերում գործածված համեմատություններում բացա-
կայում է երկու երևույթների համար ընդհանուր հատկանիշը, սակայն բանաս-
տեղծության բովանդակությունն ու քնարական հերոսի տրամադրությունը
նպաստում են այդ հատկանիշի դրսնորմանը: Այսպես սովորաբար լինում է այն
դեպքում, երբ առարկան կամ երևույթը բնորոշվում են միայն մեկ հիմնական
հատկանիշով, որն ընդհանրապես հատուկ է տվյալ առարկային կամ երևույ-
թին: Բերված օրինակի առաջն երկու նախադասություններում թեև բացակա-
յում է ընդհանուր հատկանիշը, սակայն միանգամայն պարզ է, որ հեղինակը
նկատի ունի պայծառ և մռայլ հատկանիշները: Այսպես.

Արկի պես (պայծառ) ժպտում ես,

(Մռայլ) ամպի նման մշուշպում...

Անկախ համեմատությունների լեզվաշինական բաղադրության կառույցնե-
րից՝ խանյանական դիպուկ ու ներգործուն համեմատությունները բանաստեղ-
ծական խոսքը վերածում են հոյսզի: Եվ հաճախ ամբողջ բանաս-
տեղծությունը կամ բանաստեղծության մեջ մասը կառուցված է համեմատու-
թյունների միջոցով: Այսպես, օրինակ՝

Սութի պես երազ բերող,

Լույսի պես ջերմ ու գերող,

Վարդի պես գարնանարույր,

Դույսի պես հավերժահող,

Դու այնպես մեղմ ես ժպտում... (ԸԵ, հ. 2, էջ 172)

Խանյանի չափանի ստեղծագործություններում իբրև լեզվի պատկերավոր-

ման միջոց գործածված համեմատություններն աչքի են ընկնում իրենց կառուցվածքային բազմազանությամբ, ինքնատիփ բնույթով ու գեղարվեստական համոզականությամբ: Բազմազան են բանաստեղծի խոսքարվեստում գործածված համեմատությունների կառուցման միջոցները: Այդ գործառույթով հանդես են գալիս կապերը, եղանակավորող բառերը, որոշ կապակցություններ, դերանուններ և ստորոգումը: Սակայն համեմատությունն իրուն լեզվի պատկերավորման միջոց խանյանի բանաստեղծական խոսքում տարածված կիրառություն չունի: Համեմատությունները չեն դառնում բանաստեղծի գեղարվեստական մտածողության, իրականության արտացոլման հիմնական միջոց և եղանակ: Համեմատությունների շնորհիվ բանաստեղծն ուժեղացնում է իր խոսքի հովական ներգործությունը և համեմատվող առարկաների ու երևույթների առանձնացվող հատկանիշների հիման վրա ավելի ցայտուն ու տպավորիչ է դարձնում նկարագրվող երևույթը: Համեմատությունները պատկերների ու համեմատվող երևույթների ընդգրկման տեսակետից լինում են երկու տեսակ՝ համառոտ և ծավալուն: Խանյանը հիմնականում կիրառում է ոչ ծավալուն, համառոտ համեմատություններ: Ըստ որում, նա համեմատությունները կառուցում է նմանության հատկանիշի ուղղակի բացահայտման միջոցով՝ պես, նման, նիշպես և այլ համեմատիչ բառերի օգնությամբ: Համեմատությունը սովորաբար բաղկացած է լինում երեք անդամից՝ համեմատվող առարկայի անունից, համեմատության օբյեկտից և համեմատության հիմքից:

Խանյանի ստեղծագործություններում բավական շատ են այնպիսի համեմատությունները, որոնցում անդամները կապված են համեմատիչ բառերով՝ նման, պես, կարծես, ոնց, ինչպես և այլն:

Օրինակ.

Մոմի նման թող հալվեմ... (ԸԵ, հ. 2, էջ 129)

Սարերն են գորդի պես կանգնել... (ԸԵ, հ. 2, էջ 85)

Արծիվը անհաս կատարին ժայռի,

Կարծես բազմել է արկի կողքին... (ԸԵ, հ. 2, էջ 86)

Կպաշտպանեմ ոնց որդի,

Կփայիայեմ ինչպես հայ: (ԸԵ, հ. 4, էջ 141)

Հաճախ խանյանը համեմատությունները կառուցում է այնպես, որ համեմատության անդամները կապվում են առանց համեմատիչ բառերի: Ելնելով նկարագրվող երևույթների բազմազան հատկություններից՝ բանաստեղծն առանձնացնում է այդ հատկանիշներից որևէ մեկը և դնում համեմատության հիմքում:

Առանց համեմատիչ բառերի կազմված համեմատությունների մեջ բանաստեղծը երբեմն մոտեցնում, համադրում է այնպիսի երևույթներ, որոնց մեջ, թվում է, թե որևէ նմանություն չկա: Նման դեպքերում բանաստեղծը ելնում է համեմատվող երևույթների այս կամ այն հատկանիշների հնարավոր նմանությունից:

Այսպես օրինակ՝

*Դադիվանքն իմ հրաշք՝
Խաչի պապիս հոգին,*

*Դարձել է մի երազ
Թեկուզ իմ տաճ կողքին: (ԸԵ, հ. 2, էջ 93)*

Այստեղ խաչի պապի հոգու և Դադիվանքի համեմատությունը հիմնված է ոչ նրանց արտաքին հատկանիշների նմանության վրա, այլ համեմատության երկու անդամների ընդհանուր հատկանիշի՝ սուրբ ու պաշտելի լինելու վրա:

Միշտ չէ, որ համեմատության ժամանակ պետք է ելնել համեմատվող առարկաների արտաքին նմանությունից, կարևոր է նաև դրանց ներքին բովանդակությունը, որով շատ անգամ պայմանավորված են լինում համեմատության անդամները:

Այս համեմատությունները հիմնականում ունեն նկարագրական բնույթ:

Համեմատվող առարկան համեմատության տարբեր շրաների մեջ մնցնելով՝ բանաստեղծն աշխատում է ամեն անգամ համեմատությունը դարձնել թարմ, ներդաշնակ ստեղծագործության ընդհանուր տրամադրություններին, բացահայտել համեմատվող առարկայի տարբեր կողմեր ու հատկանիշներ:

Օրինակ՝

*Մեր ամպի պես սփռվում եմ,
Մեր արևի նման շղողում,
Մեր առվի պես փրկորում եմ,
Մեր ուռենու նման դղողում: (ԸԵ, հ. 2, էջ 144)*

Եկավ որդու նման, Աստծո նման եկավ... (ԸԵ, հ. 2, էջ 103)

Նույն երևույթը տարբեր առարկաների հետ համեմատելը պայմանավորված է նրանով, որ բանաստեղծն ամեն անգամ տվյալ երևույթին մոտենում է տարբեր կողմից՝ նկատի ունենալով կոնկրետ պայմաններում այդ երևույթից ստացած իր տպավորությունները, և աշխատում է մի կողմից՝ տպավորիչ և պատկերավոր դարձնել նկարագրվող երևույթը, իսկ մյուս կողմից՝ այդ համեմատությանը արտահայտել այս կամ այն միտքը՝ ուղղակի կամ փոխարերաբար:

Սովորաբար համեմատության ժամանակ անծանոթ կամ քիչ ծանոթ առարկան համեմատվում է համրածանոթ առարկայի կամ երևույթի հետ՝ այն ավելի մատչելի դարձնելու համար: Սակայն համեմատությունը միշտ նրա համար չէ, որ ծանոթ առարկայի միջոցով անծանոթ առարկան բնութագրելիս համեմատության անդամների միջև եղած նմանություններն ու ընդհանրությունները ցույց տրվեն: Այս ավելի հաճախ կատարվում է գեղարվեստական խոսքն ավելի ներգործուն ու պատկերավոր դարձնելու համար և արտահայտում է հեղինակի վերաբերմունքն ու գնահատականը նկարագրվող երևույթների նկատմամբ, իսկ այդ վերաբերմունքը կարող է լինել երկու տեսակ՝ դրական և բացասական:

Դրական բնույթի համեմատությունների բանաստեղծը դիմում է հատկապես երևույթներն իդեալականացնելու կամ իդաբերովիկ (չափազանցված) պատկերներ ստեղծելու դեպքում: Այս կարգի համեմատությունների մեջ հաճախ դրսևով կարող է լինել երկու տեսակ՝ դրական և բացասական:

Իդեալականացման կամ չափազանցված երանգ ունեն, օրինակ, հետևյալ համեմատությունները.

Զահել կաղնու պես իշխան Եսայը

Ավիշ էր հյուսում երակմերի մեջ: (ԸԵ, հ. 3, էջ 160)

Արևի քույրն է Շուշանիկն ասես,

Չափաղ էր տալիս գարնան վարդի պես: (ԸԵ, հ. 3, էջ 162)

Սորեխի պես փուզել է հագարացոց գորքը չար... (ԸԵ, հ. 3, էջ 185)

Երբ բանաստեղծը ցանկանում է նկարագրվող նյութի նկատմամբ իր բացասական վերաբերմունքն արտահայտել, գործածում է այնպիսի համեմատություններ, որոնք բացասական երանգ ունեն:

Լուրջ հասել էր Արևելաց կողմ,

Որ կատաղել է Բուղան ինչպես հողմ...

...Արցախը ծառս էր եղել ալեկոծ,

Բուղան գալիս էր ինչպես բունստ օձ: (ԸԵ, հ. 3, էջ 173)

Իր սև նժոյգին Բուղան էր ճշում ինչպես լեշակեր... (ԸԵ, հ. 3, էջ 181)

Խանյանը հաճախ համեմատությունը կառուցում է այնպես, որ համեմատվող երևույթները, համեմատության երկու անդամներն ընթերցողին ծանոթ են լինում, սակայն համեմատության հիմքը, այսինքն՝ այն հատկանիշը, որի հիման վրա մերձեցվում, համեմատվում են այդ երկու երևույթները, բոլորովին նոր ու անսպասելի է լինում ընթերցողի համար, որի շնորհիվ ամբողջ համեմատությունը դառնում է թարմ ու թողնում է նոր տպավորություն: Այսպես օրինակ՝

Իսկ նրա սուրբ ոտքի տակ Տողասարը ինչպես բերդ,

Կանաչ շորեր է հագել՝ դարձած հավատ ու տքնանք: (ԸԵ, հ. 3, էջ 184)

Կամ՝

Իմ կարոտմերը անումներ ունեմ,

Դասցեմեր ունեմ իմ կարոտմերը,

Մեր սարերի պես հառնում են նրանք,

Կանչում՝ ինչպես մեր արոտները: (ԸԵ, հ. 1, էջ 320)

Այս համեմատությունները կառուցված են ոչ թե համեմատվող առարկաների արտաքին հատկանիշների նմանության վրա, այլ նրանց ներքին իմաստի: Յամեմատության հիմքը այս դեպքում համեմատվող երևույթների նկատմամբ բանաստեղծի մոտեցման ընդհանրությունն է, որի միջոցով նա կապ է ստեղծում նրանց միջև՝ նկարագրությունը տպավորիչ դարձնելու նպատակով: Խսկապես, վերը բերված օրինակներում համեմատվող անդամների միջև խսկական իմաստով որևէ նմանություն չկա, բայց բանաստեղծը դրանց միջև նմանություն, համեմատության եզր է գտել՝ ելնելով տվյալ ստեղծագործության գաղափարական հենքից: Խանյանը հետաքրքիր պատկեր է ստեղծել՝ համեմատության մեջ դմելով առաջին հայացքից միմյանց հետ բոլորովին ընդհան-

բություն չունեցող կարոտները և հաշոնող սարերն ու արոտները: Բանաստեղծին հաջողվում է ստեղծել այնպիսի յուրօրինակ համեմատություններ, որոնք ընթերցողին են փոխանցում հույզի և ապրումի նույր ելաչները:

Պատկերների և համեմատվող առարկաների ու երևույթների ընդգրկման տեսակետից խանյանի ստեղծագործություններում հաճախակի գործածական են երկանդամ համեմատությունները, սակայն հանդիպում են նաև ծավալուն համեմատություններ՝ ստեղծելով մի քանի համեմատությունից կազմված ամբողջական պատկեր: Այսպես, օրինակ, հետևյալ քառյակը կառուցված է ծավալուն համեմատության վրա.

Ուղիղ գնամ սլացքի պես,
Թևեր առնեմ ասքի պես,
Թե մայր հողին խոնարհվել կա,
Թող խոնարհվեմ հասկի պես: (ԸԵ, հ. 2, էջ 191)

Վերոհիշյալ բանաստեղծության հնայքը, անշուշտ, պայմանավորված է ոչ միայն ինքնատիպ բովանդակությամբ, այլև բազմակի համեմատությունների գործածությամբ: Տվյալ դեպքում ոճական հնարանքը հանդես է գալիս որպես բանաստեղծության կառուցման միջոց և մտքերի ու հույգերի ներգործունողակ ստեղծում:

Գինու կուժը ես առա ու նստեցի այգու մեջ,
Ասես կյանքի հուշն առա ու նստեցի այգու մեջ... (ԸԵ, հ. 2, էջ 189)

Արծիվը ամհաս կատարին ժայռի,
Կարծես բազմել է արևի կողքին... (ԸԵ, հ. 2, էջ 86)

Խաչեմ գետը շողում է հար,
Ոնց իմ պապի արծաք գոտին... (ԸԵ, հ. 2, էջ 90)

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը համեմատությունների կառուցման համար արտահայտության բազմազան միջոցներ է ընտրել՝ խուսափելով կրկնությունից և խոսքին հաղորդելով ներգործուն երանգներ:

Խանյանի ստեղծագործություններում հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որոնցում համեմատության միջոց է դառնում անվանաբայական ստորոգյալը, ինչպես օրինակ.

Առուն աղջկա սիրո շշունջն է,
Բարդին սլացքն է աղջկա սիրո,
Ուրին աղջկա սիրո տրտունջն է,
Վարդը հրաշքն է աղջկա սիրո: (ԸԵ, հ. 2, էջ 379)

Նմանօրինակ կառույցներում ստորոգյալն է ստեղծում համեմատություն և նմանեցվում, հավասարեցվում է ենթակային:

Որպես համեմատության եզրեր առավելապես հանդես են գալիս քնարական հերոսն ու բնության երևույթները: «Գեղարվեստական գրականության մեջ,- նկատում է Արտ. Պապոյանը,- հաճախ է պատահում, երբ անհատի բնավորության առանձին գծեր, հոգեկան խայտանքները կամ մարմնական արտա-

քին եզրերը ավելի պատկերավոր նկարագրելու համար զուգահեռ է անցկացվում դրանց և բնության համապատասխան երևույթների միջև՝⁵⁸: Խանյանը հաճախ է քափանցում քնարական հերոսի ներաշխարհ՝ նիաժամանակ ստեղծելով դիմառնության հրաշալի օրինակներ, ինչպես՝

Սուրբ ինձ մտերմացավ, բարդին դարձավ ինձ քույր,

Պարտեզը մայր դարձավ, ախ, ինձ՝ գծվածին,

Իմ շուրթերից առկված սուլոցը ոնց քոչուն.

Ճեղքեց դուռ ու դարպաս, հասավ սիրածիս: (ԸԵ, հ. 4, էջ 186)

Խանյանին հաջողվում է հայտնաբերել ապրումի պահի և բնության երևույթի անսպասելի ընդհանրությունը՝ միացնելով միմյանցից հեռու երևույթների նրաբեկերը: Անդրադառնալով արևանահայ բանաստեղծության լեզվում համեմատության այս տեսակին՝ Յու. Ավետիսյանը գրում է. «20-րդ դարասկզբի փորձով մեր ազգային բանաստեղծության մեջ ամրապնդվում է Նարեկացուց եկող և Դուրյանով նոր բանաստեղծության մեջ վերստեղծված համեմատության այն տեսակը, երբ բնության երևույթը, անշունչ առարկան է համեմատվում մարդու կամ մարդկային հատկանիշի հետ»⁵⁹:

Համեմատությունները խանյանի խոսքարվեստի կարևոր լեզվատարրերից են, որոնք աչքի են ընկնում իրենց ինքնաստիպությամբ և գաղափար են տալիս բանաստեղծի պատկերավոր մտածողության մասին:

Այլաբերություն

Լեզվի պատկերավորման միջոցներից է **այլաբերությունը**: Դա այնպիսի երևույթ է, երբ մի բառ փոխարկվում է մի այլ բառով նրանց հնաստերի որևէ նմանության կամ առնչության հիման վրա: Բառերը հաճախ կենդանի խոսքում, բնագրային կոնկրետ պայմաններում, մտնելով տարբեր կապակցությունների մեջ, ձեռք են բերում բոլորովին նոր իմաստներ, որպիսին առանձին գործածվելիս չեն արտահայտում: Այս դեպքում բարի հիմնական իմաստը հետին պլան է մղվում, և դրա փոխարեն ընդգծվում, ընկալվում է տվյալ բնագրում ձեռք բերած իմաստը, որն էլ դառնում է հիմնական խոսքային տվյալ միջավայրի համար:

Բանաստեղծին հատուկ է պատկերավոր մտածողությունը, որի հիմքում ընկած է բանաստեղծական լեզվի կարևոր հատկանիշներից մեկը՝ այլաբերությունը՝ իր տարբեր տեսակներով (փոխարերություն, փոխանունություն):

Փոխարերությունը խոսքի պատկերավորման ամենագործուն միջոցն է: Ոճական այս հնարանքի հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը, որի շնորհիվ գրողը նրանցից մեկի անունը փոխարինում է մյուսի անվանքը կամ նրան բնորոշ որևէ հատկանիշով: Բիշտ է նկատված՝ «գեղարվեստական մտածողության յուրահատկությունը թերևս ուրիշ ոչ մի միջո-

⁵⁸ Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի լեզվակամ արվեստը, Եր., 1970, էջ 241:

⁵⁹ Ավետիսյան Յու., Արևանահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 443:

ցով այնքան բնորոշ ու հարուստ արտահայտություն չի կարող ունենալ, որքան փոխարերության օգտագործումնով, մանավանդ որ բարի նման իմաստով գործածությունը իմբ է դառնում խոսքի պատկերավորության և արտահայտչական միջոցներից շատերի համար և զանազան ձևերով սերտորեն առնչվում է դրանց հետ»⁶⁰: Փոխարերությունների ճիշտ գործածությունը մեծ չափով կախված է գորդի հմտությունից, նրա վարպետությունից, իրականության զանազան երևույթների միջև եղած նմանությունները, կապերն ու հարաբերությունները տեսնելու, ընկալելու հատկությունից:

Խանյանի խոսքարվեստում բառերը, կապակցությունները, փոխելով իրենց խոսքային միջավայրը, արտաքին միևնույն ձևի տակ ստանում են միանգանայն նոր ու անսպասելի հմայքներ: Բանաստեղծի գրչի տակ մարդկային նույր զգացնումքներն ու նույրերը, Սեծարենցի խոսքով ասած, ավելի «ներույժ» արտահայտություն են ստանում: Չափանում փոխարերությունների շնորհիվ առարկաների ու երևույթների առարկայական պատկերների փոխարեն գերիշխում են հոյզերն ու զգացնումքները, տրանադրություններն ու ապրումները: Ամեն ինչ ստանում է հոգեբանական և զգացնումքային երանգ, իսկ բառերն ու պատկերները հասնում են հոյզի ու ներապետմի բառեղեն բարգնանությանը: Ահա օրինակներ՝ Կյանքն ինձ ժպուում է ամեն առավոտ (ԸԵ, հ. 1, էջ 56), Եվ գիտեմ, որ քայլելիս քրտինքս ծով կրաօնա (ԸԵ, հ. 1, էջ 57), Եվ ին քայլը հոսել է ճիշտ երազներիդ առատ հունով (ԸԵ, հ. 2, էջ 101), Գետը արյուն է թքում (ԸԵ, հ. 2, էջ 101), Ես՝ ք երգով բարուրվածս, օրորում եմ երգդ հինա (ԸԵ, հ. 2, էջ 100):

Ինչպես նկատում ենք, խոսքարում յուրաքանչյուր բառ պայմանավորում է մյուս բառերի փոխարերական կիրառությունները: Ստեղծվում են ծավալուն փոխարերություններ՝ պայմանավորված բայ-ստորոգյալների փոխարերական գործածությամբ: Նմանօրինակ փոխարերությունների միջոցով առարկայի, իրողության և դրանց հատկանիշների ընկալումը հասցվում է տեսանելիության ու շոշափելիության:

Փոխարերական գործածությունների շնորհիվ բառերը ծեռք են բերում արտահայտչականություն՝ դառնալով նկարագրվող երևույթների, իրողությունների արտացոլման լեզվական ներգործուն միավորներ:

Փոխարերական պատկերները ոճական խոշոր դեր են կատարում Խանյանի ստեղծագործության մեջ: Բառերի փոխարերական գործածություններով բանաստեղծը միմյանց է մոտենում ամենատարբե երևույթները, հատկանիշներն ու գործողությունները, ոճական հնարամքի արտահայտչականությունը օգտագործում իր բանաստեղծական մտածողության յուրահատկություններն ավելի ցայտուն դրսորելու համար, այսպես օրինակ՝ Ծո ժպիտը սրտիս կրակն է փայլող (ԸԵ, հ. 4, էջ 196), Ծաղկի առէջում իմ սիրո կեսն եմ, Սիրուս համբույրն եմ մեղվափերակում (ԸԵ, հ. 4, էջ 196) և այլն:

Պետք է նկատել նաև, որ փոխարերությունը ոչ միայն արտահայտչականություն է հաղորդում խանյանական խոսքին, այլև բազմազանություն է մտցնում

⁶⁰ Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճականության, Եր., 1984, էջ 93-94:

ոճական հնարանքների մեջ: Ս. Էլոյանը դիպուկ է նկատում, որ «բառի և փոխաբերական իմաստները, և փոխաբերական գործածությունները խոսքային մակարդակին բնորոշ երևույթներ են, և հենց խոսքի մեջ է, որ բառային տարրեր միջավայրում ունեցած բառի բաշխման ոլորտում համագործածական ամենասովորական բառերը (ոճարանորեն չնշույթավորված) հայտնվում են բազմաբարդ գուգորդությունների ոլորտում, և բացվում է բառի ոճարանական իրական բնութագիրը, բառի իմաստային համակարգի տարրողունակությունը...»⁶¹:

Բանաստեղծի չափածո խոսքում գործածված փոխաբերությունների մյուս կարևոր հատկանիշը մարդկային օգացումներն ու մտքերը առավել նուրբ ու ուժեղ արտահայտչականությամբ հնչեցնելն է, ինչպես օրինակ՝

Թո ժախոր սրտիս կրակն է փայլող,

Ռոպէ անգամ նա չի սարչում, չի մարում... (ԸԵ, հ. 4, էջ 196)

Ոճական նման հնարանքը դառնում է բանաստեղծության կառուցման միջոց, և բանաստեղծը ծավալվող իմաստային օպերացումների, ինչպես նաև երևույթների միջև նմանություններ տեսնելու սուլ դիտողականության շնորհիվ խտացնում է հույգերն ու ապրումները՝ ձևավորելով գեղարվեստական ինքնատիպ պատկերներ:

Խանյանի խոսքարվեստում փոխաբերությունը սոսկ պատկերավորման միջոց չէ, այն գեղարվեստական մտածողության ձև է, որ հուզական զանազան տեղաշարժերի հնարավորություն է տալիս:

Որքան գրողը ճիշտ կարողանա համադրել բառի ուղղակի նշանակությանը նրա փոխաբերական իմաստը՝ ելնելով դրանց միջև եղած կապից և բնութագրվող առարկաներին վերագրվող հատկանիշից, այնքան փոխաբերությունը վառ ու տպավորիչ կլինի:

Գրողը կամ բանաստեղծը բառերի մետաֆորային գործածության է դիմում ոչ միայն նրա համար, որ առարկաների, երևույթների միջև եղած ներքին նմանությունները ցույց տա, այլ որ բացահայտի, հայտնագործի նրանց մեջ նոր հատկանիշներ ու նմանություններ, պատկերավոր ու արտահայտիչ դարձնի իր բանաստեղծական խոսքը: Մետաֆորային գործածությունը ոչ միայն ընդարձակում է բառերի իմաստային կողմը, այլև ուղղակի և փոխաբերական իմաստների գուգորդությունների շնորհիվ բառերը ձեռք են բերում նոր արտահայտչականություն, պատկերավորություն, և այս առումով էլ փոխաբերական իմաստով գործածված բառերը հանդես են գալիս որպես նկարագրվող երևույթների բնութագրման լեզվական կարևոր միջոցներ:

Խանյանի իր ստեղծագործություններում գործածել է փոխաբերության բոլոր տեսակները՝ աշխատելով դրանք և ենթարկել կոնկրետ գեղարվեստական, գաղափարական խնդիրների:

Խանյանի ստեղծագործություններում գործածված այլարերություններն աչքի են ընկնում արտահայտչականությամբ, գեղարվեստական ներգործուն

⁶¹ Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճարանություն, էջ 71:

ուժով, իմաստային փոխադարձ կապերով ու նկարագրվող երևոյթների ներքին հատկանիշներն ու նմանություններն արտահայտելու բազմազանությամբ:

Բառերի մետաֆորային գործածություններով բանաստեղծն իրար է մոտեցնում ամենատարբեր երևոյթներ, հաճադրում նրանց բազմազան հատկանիշները՝ վառ ու տպավորիչ դարձնում նկարագրությունը:

Բերենք մի քանի օրինակ՝

Լեռնային մի ծաղիկ է,

Սայիսյան մի շաղիկ է,

Անմոռաց մի տաղիկ է

Սահդան, մեր Սահդան: (ԸԵ, հ. 4, էջ 249)

Երկու աստղ՝ իրար գտած,

Աստղերի լուս ծովը մտած,

Սեկմ արվեստի գուլալ մի գետ,

Սեկը՝ հղու արվեստագետ... (ԸԵ, հ. 2, էջ 141)

Խանյանն օգտագործում է փոխաբերության մի այլ տեսակ՝ **փոխանունությունը** (մետոնիմիա): Այս դեպքում մի առարկայի անվան փոխարինումը նյուտով հիմնվում է ոչ թե ընդիանուր նմանության, այլ դրանց նիշն եղած այս կամ այն կապի վրա: Փոխանունության դեպքում ասվում է մի այլ բան և հասկացվում է մի այլ բան: Այսպես՝

Սեկի դիմաց տասն է գալիս,

Տասին էլ զարկենք... (ԸԵ, հ. 2, էջ 158)

Տվյալ օրինակում գրված **տասը** թվականի փոխարեն ընթերցողը հասկանում է «տասը հոգի»: Այդպես նաև՝

Սոռացե՞լ ես միլիոնների շքերթի մեջ

Իմ առաջին համբույրն անշեց: (ԸԵ, հ. 2, էջ 146)

Փոխանունության մի այլ տեսակ է այն, երբ պարունակվող առարկայի անունն արտահայտում ենք պարունակողով, կամ մարդկանց, ժողովորի անվան փոխարեն գործածվում են այն վայրերի անունները, որտեղ նրանք բնակվում են: Օրինակ՝

Արցախ իմ, քայլիր հաղթության հունով... (ԸԵ, հ. 4, էջ 437)

Կամ՝

Խլացած աշխարհը նորից

Զի լուս օգնության կանչերս... (ԸԵ, հ. 2, էջ 99)

Խանյանը հաճախ փոխաբերական իմաստով գործածում է ոչ միայն առանձին բառեր, դարձվածքներ ու արտահայտություններ, այլև անբողջական պատկերներ: Փոխաբերական իմաստ ունի, օրինակ, հետևյալ պատկերը.

Օրվա ունքամիջից տիվրություն էր կաթում,

Փաթաթվել էր ամայը երկնի պարանոցին,

Մի կրակված կարոտ հղուս դրւոն էր թակում՝

Մոլորվածի նման ծեռքը դրած ծոցին: (ԸԵ, հ. 3, էջ 115)

Խանյանի ստեղծագործություններում, որպես գեղարվեստական պատկերավորման միջոց, օգտագործվում է նաև **անձնավորումը**, որը բառերի փոխաբերական գործածության մի առանձին տեսակ է: Անձնավորման ժամանակ բնության տարրեր երևույթներին, իրերին և կենդանիներին վերագրվում են մարդկային հատկություններ, գործողություններ: Եվ քանի որ անձնավորման ժամանակ մարդկային տարրեր գործողություններ են վերագրվում բնության երևույթներին, ուստի դրանք մեծ նաև արտահայտվում են բայերով: Խոսքի պատկերավորման այս միջոցը կապված է մարդկության հնագույն մտածողության հետ և իր դրսնորումն է գտել ինչպես հայ ժողովրդական բանահյուսության մեջ, այնպես էլ հայ գրականության տարրեր շրջաններում: Անձնավորումը խանյանի չափածոյի խոսքարվեստին բնորոշ ոճական հնարանը է: Գեղարվեստական ելակետն այս դեպքում բնությունն է՝ միջնորդավորված քնարական անհատի վերաբերմունքով, իսկ նպատակը՝ մարդու ներաշխարհի բացահայտումը, հոգևոր եռթյան արտացոլումը:

Անձնավորումը գեղարվեստական խոսքում բանաստեղծի հույգերի ու տրամադրությունների դրսնորման կարևոր միջոց է, որ խոսքին տալիս է շարժունակություն, պատկերը դարձնում է ավելի վառ ու տպավորիչ: Բանաստեղծը ոչ միայն շարժունակությունն է հաղորդում բնության երևույթներին, այլև օժտում մարդկային զգացմունքներով ու բնավորությամբ: Բնությունը խանյանի ստեղծագործություններում դառնում է շնչավորված-անձնավորված մի կերպար, բանաստեղծական ես-ի ինքնադրսնորման յուրօրինակ միջոց, ինչպես օրինակ՝ Գարնանային աման է լացում... (ԸԵ, հ. 1, էջ 157), Սարերը խոսում են իրար հետ... (ԸԵ, հ. 1, էջ 233), Դարերը սարերին գրկել են... (ԸԵ, հ. 1, էջ 233), Նահապետ կաղնին հաղթական ձեռքով Դիրիժորում է հովերի պարը: (ԸԵ, հ. 1, էջ 242), Ցավից ժայռերն են տնբում (ԸԵ, հ. 2, էջ 101), Շրջանակներում Մասիսն է շնչում (ԸԵ, հ. 2, էջ 131), Յողն էր խորհում բազմատենչ (ԸԵ, հ. 2, էջ 138), Երբ ծնվեց, մանկանը այն Աստղերը բարուրեցին (ԸԵ, հ. 2, էջ 150), Դաշնամուկն է քեզ հետ խոսում (ԸԵ, հ. 2, էջ 151), Զյունն վերմակով անտառները մերկ երազեթիք են հյուսում սրտերում: (ԸԵ, հ. 4, էջ 104), Յառաջում է միայն մի դուռ (ԸԵ, հ. 4, էջ 117):

Դիտարկված բանաստերում բնությունը նարմնավորում է քնարական հերոսի ներաշխարհը, նրա ապրումները: Բնանկարն ու քնարական հերոսի հոգեվիճակը ներդաշնակում են իրար:

Խանյանը շնչավորել է ծառը, աստղերը, անտառները, ժայռերը, սարերը, ամառ՝ դարձնելով իր զրուցակիցները, հույզի ու ապրումի անձնվեր կրողները:

Ոճագիտական գրականության մեջ ստվորաբար տարբերակվում է անձնավորման երեք տեսակ՝ «բարառնություն, երբ իրերն օժտվում են գործելու հատկությամբ, և կերպարառնություն, երբ անցյալի երևույթները կամ անգոյ հասկացությունները կերպարանավորվում են»⁶²: Խանյանի բանաստեղծական խոսքում գործած-

⁶² Խլղաթյան Ֆ., Ոճարանական տերմինների բառարան-տեղեկատու, Եր., 1976, էջ 9:

ված անձնավորման օրինակներն առավելապես դիմառնություններ են, որոնք դրսևորման բազմազան ձևեր ունեն: Յիմնականում գերակշռում է ստորոգալով անձնավորումը: Դիտարկենք օրինակներ:

Ժամանակն էլ մոլորդել է... (ԸԵ, հ. 1, էջ 252), Կարոտս ծնվում է քեզանից... (ԸԵ, հ. 1, էջ 252), ճամփան տնքում է... (ԸԵ, հ. 2, էջ 108), Այգին դեպի հնձ է գալիս... (ԸԵ, հ. 2, էջ 109), Երբ ամպերը պար բռնեն... (ԸԵ, հ. 4, էջ 128) և այլն:

Ստորոգալով ներով արտահայտված անձնավորումը անշարժ իրերի ու երևույթների և մարդկային կյանքի շարժման ներդաշնակ զգացողություն է առաջացնում: Բառային միավորները վերածվում են գեղարվեստական խոսուն պատկերների: Նշված հանգամանքը նկատի ունենալով՝ գրականագետ Ա. Զաքարյանը գրում է. «Հայոց նոր ժամանակների բանաստեղծության մեջ բնությունը պատկերվում է իրու շարժուն փոխազդեցություններով լի կյանք»⁶³:

Խանյանական խոսքում գործուն է նաև որոշչներով արտահայտված անձնավորումը: Ահա օրինակներ՝ արթուն հորդոր (ԸԵ, հ. 2, էջ 96), ծարավ հող (ԸԵ, հ. 1, էջ 101), քնած հող (ԸԵ, հ. 1, էջ 376), խենք երգ (ԸԵ, հ. 2, էջ 392), հեռացող հուշեր (ԸԵ, հ. 2, էջ 447):

Երբեմն էլ հատկացուցիչն է անձնավորվում իր բառային նշանակության մեջ անձին բնորոշ հասկացություն արտահայտող հատկացյալով, ինչպես՝ լեռան հոլով (ԸԵ, հ. 1, էջ 353), սարի ջանք (ԸԵ, հ. 1, էջ 353), լեռան հղձ (ԸԵ, հ. 1, էջ 353), լեռան հկը (ԸԵ, հ. 1, էջ 353), խոհերի գիրկը (ԸԵ, հ. 1, էջ 53), երկնքի արցունք (ԸԵ, հ. 1, էջ 49), արկի համբույր (ԸԵ, հ. 1, էջ 49), աշնան թևեր (ԸԵ, հ. 1, էջ 382), ամռան և աշնան գրկախառնում (ԸԵ, հ. 1, էջ 382), հողի կարոտ (ԸԵ, հ. 1, էջ 381), սարերի քայլվածք (ԸԵ, հ. 1, էջ 364), դարերի համբույր (ԸԵ, հ. 1, էջ 363), հողի շրթեր (ԸԵ, հ. 1, էջ 362) և այլն:

Հայրենի բնության սիրահար խանյանը հաճախ է իր հայացքն ուղղում արարիչ բնությանը: Աստղերի ցոլքի, ջողի կարկաչն ու թռչունների կանչի մեջ որսում է նուրբ ու հոգեպարար դաշնակներ: Դիմառնության հրաշագեղ պատկեր է բանաստեղծության ներքոհիշյալ հատվածը:

Ե՞ր էր, անտառ, հարսանիթիս թեժ պարեցիր,
Նվազի տակ քո հովեռով ինձ փարկեցիր,
Օրհնեցիր իմ քաղցր սերը...
Խորովածի փայտը տվիր,
Ցախը տվիր թարմ լավաշի,
Ուրախացար, երբ նատեցինք
Առավոտյան համով խաշի...
Սորացե՞լ ես, ե՞ր էր անտառ... (ԸԵ, հ. 2, էջ 146)

Անձնավորման միջոցով բանաստեղծը կարողանում է տարբեր տրամադրություններ ու հոգեվիճակներ արտահայտել՝ իր խոսքին հաղորդելով նուրբ երանգավորում:

⁶³ Զաքարյան Ա., ՀՀ դարի սկզբի հայոց բանաստեղծությունը: Ակումբները և զարգացման ուղիները, գ. 2, Երև., 1977, էջ 22:

Արևն այստեղ հյուրի պես է,
Սերթ ժպտում է, մերթ՝ տիսրում,
Այստեղ նրա սրտի կեսն է,
Ահա, ինչու է փիսրում: (ԸԵ, հ. 4, էջ 85)

Այս քառատողում գործածված փոխարերություններն ստեղծում են համապատասխան տրամադրություն՝ պատկերավոր կերպով ներկայացնելով օրվա փոփոխական եղանակը:

Ահա անձնավորման ևս մի գեղեցիկ օրինակ՝
Ամպը ամպ չէ, ճերմակ հարս է՝
Զուր է տանում արտերին,
Սիրողմերի նուրբ սրտերից
Դուր է տանում վարդերին: (ԸԵ, հ. 1, էջ 352)

Ս. Խանյանի վրձնի տակ շնչավորվում է արարիչ բնությունը, համայն տիեզերքը: Արցախի հրաշը բնությունը ոգեշնչում է բանաստեղծին ստեղծելու գեղարվեստական հրաշալի բնապատկերներ, որոնք հույզի ու ապրումի արտացոլման խոսուն վկաներ դարձան նրա խոսքարվեստում:

Փոխարերությանը բավական մոտ է շրջասույթը (աերիֆորազ), որն առարկայի նկարագրական անվանումն է, ուղղակի անվանման փոխարինումը նկարագրական արտահայտություններով, տվյալ երևույթը կամ առարկան ուղղակի անվանելու փոխարեն տրվում է նրա նկարագրական բնորոշումը, որը հիմնվում է փոխարինվող առարկայի էական հատկանիշների բացահայտման վրա: Առարկայի կամ երևույթի նկարագրական բնորոշումը ավելի պատկերավոր ու տպավորիչ է դարձնում գեղարվեստական խոսքը: Այսպես օրինակ՝ փոխանակ ասելու Աստված, բանաստեղծն ասում է Վերինը կամ բախս գրողը, օրինակ՝

Երկի թէ Վերինը հոգիները մեր պեղեց... (ԸԵ, հ. 2, էջ 107)

Բախտին ու բախս գրողին
Երախտիքն եմ իմ հայտնում... (ԸԵ, հ. 2, էջ 178)

Նկարագրական արտահայտությունների մեջ ևս հաճախ դրսերվում է հեղինակի վերաբերմունքն ու օճահատականը: Օրինակ, «Ապրիլի 24» բանաստեղծության մեջ, հիշելով հայ ժողովրդի ճակատագրի այդ ահասարսուռ օրը, նկատի ունենալով կյանքի՝ զարինուրելի տանջանքներով լի անցած այդ ճանապարհը, բանաստեղծն ասում է՝ Դու ճանապարհ չես, Գողգոթա ես մի... (ԸԵ, հ. 2, էջ 102)

Ինչպես երևում է բերված օրինակներից, շրջասույթները շատ հաճախ կարող են այլաբանական, փոխարերական իմաստներ ունենալ:

Երբեմն ամբողջ բանաստեղծությունը կառուցվում է այլաբանական սկզբունքով, և ընթերցողին է մնում կրահել նրա ներքին իմաստը, բովանդակությունը, որովհետև այլաբանական նկարագրությունը դառնում է միջոց՝ բանաստեղծության մեջ թաքնված ներքին իմաստը դրսերելու, արտահայտելու համար: Այդպիսին է, օրինակ, Խանյանի «Ներիար իրական» չափած դրամատիկական երկը, որն ամբողջովին այլաբանական իմաստ ունի: Այստեղ հանդես եկող բոլոր կերպարները՝ պառավ այծը, այծը, ուլը, ծաղկները, գայլերը, նե-

րին, արջ-Տոպտիգինը, գլխավոր առյուծը, Յուրիեր կորյունը, Սարսափածայն կորյունը, Արևաչ կորյունը և Վահագնակերպ կորյունը, այլաբանական կերպարներ են:

Ակնհայտ է, որ անմտություն կլիներ այս ստեղծագործությունն ուղղակիորեն հասկանալը:

Արտահայտչական միջոցների ոճական արժեքը

Գեղարվեստական խոսքի արտահայտչական գործառույթին նպաստում են շարահյուսական հաստուկ կառուցվածքները, որոնք կոչվում են ոճարանական ֆիգուրներ կամ բանադրձումներ: Ի տարբերություն այլաբերությունների, որոնց դեպքում առաջնայինը բառերի փոխարերական դրսևորումներն են, ոճական բանադրձումների դեպքում առաջնայինը ոչ թե բառի փոխարերական կամ այլաբանական կիրառությունն է, այլ յուրահատուկ հնչերանգը, արտասանական առօգանությունը: Արտահայտչական միջոցներն իրենց իմաստով ու կազմությամբ բազմազան են, ուստի նպատակահարմար ենք համարում անդրադառնալ այն բանադրձումներին, որոնք հաճախ են հանդիպում Խանյանի բանաստեղծական խոսքում:

Չափատու խոսքի մեջ մեծ դեր ունեն լեզվի արտահայտչական բազմազան միջոցները, մտքի տարբեր շեշտերը, որոնք բանաստեղծական խոսքին հաղորդում են հուզարտահայտչական երանգավորում, ուժեղացնում նրա հուզական լարվածությունը:

Լեզվի արտահայտչական միջոցներից Խանյանն օգտագործում է ճարտասանական հարցը, հռետորական բացականչությունը, հռետորական դիմումը, կրկնության տարբեր տեսակներ ու շարահյուսական այլ կառույցներ:

Հարցական-բացականչական բնույթի նախադասություններ

Խանյանի բանաստեղծական խոսքին բնորոշ են հարցական-բացականչական նախադասությունների գործածությունը, խոսքի տարբեր ու բազմազան կառույցներ: Նրա բանաստեղծական խոսքում գործածվող հռետորական կամ ճարտասանական հարցական նախադասությունները բարձրացնում են խոսքի հուզական շեշտվածությունը, նպաստում զգացնունքների ուժեղ դրսևորմանը: Դիտարկենք հետևյալ օրինակը.

Ասեք, ինչպե՞ս լրի սիրոս,
Երբ աշխարհի հոգով իմն է,
Զարերի դեմ ինչպե՞ս լրի,
Երբ բարության խոսքը իմն է:
Ինչպե՞ս մնամ ես անտարբեր

Այս հարածում եռքի դիմաց,
Սուրս ինչպե՞ս պատյան դնեմ
Կյանքն ավերող ծեռքի դիմաց:
(Ըե, հ. 1, էջ 409)

Ինչպես նկատում ենք, բանաստեղծության հիմնական ասելիքը Խանյանն արտահայտում է ճարտասանական հարցի միջոցով, ուշագրավ է, որ թեև բա-

նաստեղը դիմում է բոլորին՝ հորդորելով՝ «ասեք», այնուամենայնիվ հնչող հարցերը պատասխաններ չեն ակնկալում, այստեղ հնչող հարցերը իրականում իրենցից հարց չեն ներկայացնում, այլ բանաստեղի բուճ ասելիքը:

Յուտորական հարցը չպետք է շփոթել հարցական բնույթի նախադասությունների հետ ընդհանրապես, որովհետև հուտորական հարցումը միայն իր ձևով է հարցական և, շնորհիվ իր արտահայտչական բազմազանության, գործածվում է խոսքին հուզաբարտահայտչական բարձր լիցք հաղորդելու համար: Յուտորական հարցական նախադասությունն իր բնույթով հաստատական է, տրված հարցի մեջ արդեն պարունակվում է պատասխանը: Այսպես, օրինակ՝

Բայց ինչո՞ւ է իմաստնացած մարդն այսօր

Կյանքը դարձնում մահվան գգողց, դա՞ է ճիշտ: (ԸԵ, հ. 2, էջ 206)

Հարցում արտահայտող այդ նախադասությունների մեջ ենթադրվում է նրանց պատասխանը, որ տվյալ դեպքում ժխտական իմաստ ունի:

Յուտորական նախադասությունների միջոցով հաճախ բանաստեղծն արտահայտում է իր անորոշ ապրումները, հուզական տրամադրությունները: Տվյալ հարցի միջոցով դրսորված կամ ենթադրվելիք պատասխանը նրա համար դեռ պարզ չէ:

Օրինակ՝

*Ինչո՞ւ չեկար, ի՞նչ էր եղել,
Մրտիս ծայնը քեզ չէ՞ր հասնում,
Ճոգիս քո դեմ չէ՞ի պեղել,
Խիղճդ ոչ մի խոսք չէ՞ր ասում: (ԸԵ, հ. 3, էջ 129)*

Հաճախ բանաստեղը զուգորդում է հարցական և բացականչական երանգները, հարցադրման և դրանց իմաստից բխող կտրուկ անցումների, հակադրության միջոցով բարձրացնում խոսքի արտահայտչականությունը, նրան տալիս առանձնահասուկ ինտոնացիոն շեշտվածություն.

Ո՞վ է ասել, թե թոռը

Չի հիշում պապին,

Կկանաչի՞ նոր ճյուղը

Առանց արմատի... (ԸԵ, հ. 4, էջ 73)

Յուտորական հարցի և բացականչական երանգների զուգորդումը խոսքին հաղորդում է բարձր լիցք, ներքին թափ ու շարժունակություն.

Ի՞նչ են հուշում ճամփաները,

Քնած մուժում ճամփաները,

Միս, ամողոք ժամանակներ,

Ինձ չեն հիշում ճամփաները: (ԸԵ, հ. 2, էջ 190)

Ոճական յուրահատուկ արժեքով են օժտված ճարտասանական այն հարցերը, որոնցից հետո բանաստեղը որոշակի նպատակադրումն առաջադրում է նաև դրանց պատասխանները: Այդ դեպքում հարցը տրվում է խոսքի հուզական երանգն ուժեղացնելու համար, քանի որ ճարտասանական նմանօրինակ հարցերը լարում են ընթերցողի ուշադրությունը որևէ իրողության կամ երևոյթի նկատմամբ, ինչպես՝

Դայրենի գյուղ,

Ինչո՞ւ եմ ես քեզ այսքան սիրում.
Գուցե, գուցե նրա համար,
Որ քո գրկում ձմեռ-ամառ,
Դեռ մանկուց եմ քրտինք թափել... (ԸԵ, հ. 1, էջ 137)
Մեկ այլ տեղ՝
Ես առանց քեզ ի՞նչ եմ՝ ոչինչ: (ԸԵ, հ. 1, էջ 367)

Որպես հարցական հնչերանգի կրողներ հիմնականում հանդես են գալիս դերանուններն ու ստորոգալը, որոնց միջոցով էլ արտահայտվում են տարբեր զգացումներ ու ապրումներ:

Դուտորական դիմում, բացականչություն

Լեզվի արտահայտչական միջոցներից խանյանն օգտագործում է նաև հոետորական դիմումը, բացականչությունը: Վերջիններս ոճական-շարահյուսական դարձույթներ են, որոնց կիրառությամբ և բացականչական հատուկ հնչերանցի շնորհիվ խոսքին հաղողդվում է յուրահատուկ զգացմունքային երանգ, արտահայտչականություն⁶⁴, բերենք օրինակներ՝ Անհուն տիեզերք, Քո գաղտնիքների սիրահարն եմ ես... (ԸԵ, հ. 4, էջ 89) կամ՝ Սերգեյ Սերգեյիչ, Նախ կասկածում եմ՝ քո յոր-տաս տարին Դեռ չի լրացել... (ԸԵ, հ. 4, էջ 248): Նկատելի է, որ ճարտասանական կոչերի գործածությունները պայմանավորված են քնարական հերոսի տրամադրությամբ և վայրկենական տպավորության արդյունք են: Նշենք նաև, որ եթե հարցական հնչերանգի միջոցով բանաստեղծը հիմնականում արտացոլում է անորոշ հոգեվիճակ ու ապրումներ, ապա բացականչական հնչերանգը դառնում է կարոտի, ափսոսանքի ու հիացմունքի դրսւորման միջոց: Որպես բացականչական իմաստի կրողներ հանդես են գալիս ծայնարկություններն ու դերանունները, ինչպես նաև այլ խոսքի մասերին պատկանող բառեր:

Կենսական ազդակներ ունեցող բանաստեղծական խոսքի հնչեցմանն է նպաստում ճարտասանական դիմումի գործածությունը.

Ով իմ ժողովուրդ,
Քո որդին եմ ես,
Քո որդին եմ ես, քո հավատով եմ
Ապրում, ջերմանում... (ԸԵ, հ. 1, էջ 137)

Որդիական սիրով լի և երախտագիտությամբ համակված դիմումը հնչում է իրեւ յուրատեսակ սիրո խոստվանություն՝ ուղղված մայր ժողովրդին:

Խանյանն իր տարարնույթ զգացումներն ու հոգեկան ապրումներն արտահայտելու համար հաճախ է գործածում ճարտասանական դիմումը, որի հասցեատերեր առավել հաճախ դարնում են բնության երևույթները և մարդ արարածը.

Ծաղկունք հայրենի, ինչո՞ւ եք տրտում... (ԸԵ, հ. 1, էջ 102)
Կամ՝

⁶⁴ Եզեկյան Լ., Յայոց լեզվի ոճագիտություն, էջ 361:

Չնախատեք ինձ, մարդիկ, այն բանի համար,
Ղարաբաղս մասին որ ես շատ եմ խոսում... (ԸԵ, հ. 1, էջ 102)

Մարդիկ, բացել եմ սիրոս ծեր առաջ... (ԸԵ, հ. 1, էջ 136)

Սիրած էակի ու իր հոգեվիճակի ներքին դաշնը վավերացնելու համար բանաստեղծը երթեմն զուգորդում է ճարտասանական դարձույթների բոլոր տեսակները՝ և ճարտասանական հարցը, և դիմումը, և բացականչությունը: Ահա այդպիսի մի օրինակ՝

Քանի՞ օր է՝ բաժանվել ենք իրարից,
Քանի՞ օր է՝ հանդիպում ենք երազում,
Ո՞նց հավատամ, որ իմ կողքին է չկաս,
Որ քո անդարձ կարոտի երգն եմ ասում: (ԸԵ, հ. 4, էջ 180)

Նշված ոճական հնարանքները ոչ միայն բանաստեղծական այս հատվածի, այլև առհասարակ խանյանի չափածո խոսքի հուզական հագեցվածությանը նպաստող կարևոր արտահայտչամիջոցներ են, տրամադրության ու ապրումի յուրօրինակ դրսնորումներ:

Կրկնություն

Իբրև լեզվի արտահայտչական միջոց Խանյանը գործածում է բառական կրկնության վրա ինմնված բանադրումներ: Բառերի կրկնությունը նրանց ինաստային կողմն ընդգծող ոճական կարևոր միջոց է:

Նշված արտահայտչամիջոցը ոչ միայն նպաստում է ստեղծելու թեմայի, ոճի և արտահայտության այն ներքին միասնականությունը, որի շնորհիվ բանաստեղծությունն ընկալվում է իբրև մեկ ամբողջական և անբաժան տրամադրություն, գաղափարի ավարտուն մարմնավորում»⁶⁵: Կրկնությունների արմատները գալիս են դարերի խորքից և կապվում են ժողովրդական բանահյուսության հետ: Խանյանի ստեղծագործություններում կրկնությունները ինաստային և ոճական տարրեր նպատակներ են հետապնդում:

Հարահյուսական կառուցվածքի մեջ տվյալ բառը կրկնվելով՝ ուժեղացնում է խոսքի արտահայտչականությունը, չափածո խոսքում նպաստում նաև ոփրոքին, բանաստեղծական տողերի համաչափ կառուցվածքին: Կան բառական կրկնության տարբեր տեսակներ: Խանյանը շատ հաճախ նույն բառը կրկնում է տողերի սկզբում՝ ստեղծելով գեղեցիկ անաֆորա (հարակրկնություն): Ըստ Արտ. Պապոյանի՝ «կրկնության այս տեսակը բնորոշվում է նրանով, որ շարահյուսական որևէ միավոր՝ նախադասություն, բառ, տող և այլն, սկսվում է միևնույն բառով, բառակապակցությամբ»⁶⁶: Դիտարկենք օրինակներ.

⁶⁵ Զրբաշյան Է., Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Եր., 1995, էջ 117:

⁶⁶ Պապոյան Ա., Զափածոյի լեզվական արվեստի հարցեր, Եր., 1976, էջ 88:

Օրը մտավ իմ սիրտը, ճյուղավորվեց ծառի պես,
Օրն իմ սրտում թպրտաց երգ չմտած բառի պես,
Ընկերացավ իմ սրտում օրն առեղջված անհունին,
Օրն իմ սրտում ծավալվեց ինչպես հայոց անտունին... (ԸԵ, հ. 2, էջ 115)
Գրեթե բոլոր տողերի սկզբում կրկնվող «օր» բառն առավել ներգործուն է
դարձնում այդ բառի կարևորությունն ու արժեքը:
Հաճախ խանամն անբողջ բանաստեղծությունը կառուցում է անաֆորային
սկզբունքով.

<p>Ծառերն այս ունեն անուններ, Ծառերն այս ապրում են, շնչում, Ծառերն այս բացում են նոր հուներ՝ Եվ ըմբոստ պայքարի կոչում: Ծառերն այս հուշ են, հիշատակ,</p>	<p>Ծառերն այս թիկունք են ու թև, Ծառերն այս սրտեր ունեն տաք, Խոնարհվենք ծառերի արջեւ: (ԸԵ, հ. 4, էջ 271)</p>
---	---

Այստեղ **ծառեր** բառը, որ կրկնվում է յուրաքանչյուր տողի սկզբում, ուժեղացնում է զուգահեռ անդամների անբողջականությամբ արտահայտված բանաստեղծության միտքը՝ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով ընդգված բառի իմաստային կողմի վրա: Ծառերն այստեղ խորհրդանշում են պատերազմուն հերոսարար զոհված ուսանողների վերածնված հոգիները:

Հարակոկնության միջոցով բանաստեղծն իր խոսքի իմաստային կենտրոնում է պահում մի քանի բառեր և դրանցով սկսելով բանաստեղծական տողերը՝ ներկայացնում է ապրումի աստիճանական զարգացումը: Որպես հարակոկնության միավորներ հանդես են գալիս տարբեր բառեր ու բառակապակցություններ: Խոսքին առանձնահատուկ երանգ են հաղորդում հատկապես դերանունների, նաև այլ բառերի ու եղանակավորող բառերի տողասկզբի կրկնությունները, ինչպես օրինակ՝

Ես՝ սիրո համար ծնված,
Ես՝ սիրո հրով սնված,
Ես՝ սիրո Աստված ու տեր... (ԸԵ, հ. 2, էջ 173)

Չափածն խոսքում կրկնվել կարող են ոչ միայն առանձին բառեր, այլև բառակապակցություններ և նույնիսկ նախադասություններ ու բառատողեր: Խանյանը կիրառում է ոչ միայն բառային, այլև շարահյուսական անաֆորա: Այս դեպքում տողասկզբում կրկնվում են ոչ թե առանձին բառեր, այլ բառակապակցություններ ու նախադասություններ: Օրինակ՝

Հազար անգամ հեռվից փարվել եմ քեզ հոգով,
Հազար անգամ քեզնով սիրու է խնդացել: (ԸԵ, հ. 1, էջ 34)

Հարկ է նկատել, որ խանյանը հաճախ է դիմում տողասկզբում շարահյուսական անաֆորաների:

Իմ սիրտը ծառին տվի, ծառը բողբոջեց,
Իմ սիրտը առվին տվի, կարկաչեց առուն,
Իմ սիրտը հրին տվի, հուրը բորբոքվեց,

Իմ սրտով ծլարձակվեց մի հրաշք գարուն:
Իմ սիրտը տվի ճամփին, ճամփան թրռաց,
Իմ սրտով ծզվեց անվերջ, ծուլվեց գալիրին,
Իմ սիրտը երգին տվի, երգը խրտաց... (ԸԵ, հ. 2, էջ 116)

Տողասկզբուն կրկնվող բառերի կամ բառակապակցությունների միջոցով
բանաստեղծն առանձնացնում, ընդգծում է դրանք՝ ընթերցողի ուշադրությունը
կենտրոնացնելով նրանց արտահայտած իմաստային այս կամ այն կողմի վրա:
Ահա մեկ այլ օրինակ՝

Եվ ո՞ւմ չի տարել դեպի ջինջ բարձունք,
Եվ ո՞ւմ չի մղել դեպի թեժ պայքար,
Պետեֆու սիրտը՝ հույզերի ակունք,
Պետեֆու սիրտը՝ մի ամբողջ աշխարհ: (ԸԵ, հ. 1, էջ 83)

Բանաստեղծական խոսքի հանգավորմանը, հնչյունական հարստությանը և
պատկերավորությանը նպաստում են բանատողերի ներսում հանդես եկող
ներքին կրկնությունները.

Դրա համար գոհ եմ, գոհ եմ ես իմ բախտից...
Գոհ եմ քեզմից, սեր իմ, անչափ գոհ եմ... (ԸԵ, հ. 1, էջ 152)

Կրկնությունը մտքի արտացոլման միջոց է դառնում՝ շեշտադրելով տվյալ
բառը կամ արտահայտությունը:

Խոսքի արտահայտչականությունն ուժեղացնելու, առանձին հատվածների
միջև ներքին կապ ստեղծելու նպատակով խանյամն օգտվում է կրկնության
այլ ձևերից. հաջորդ քառատողի սկզբում կրկնում է նախորդ քառատողի վեր-
ջին տողը՝ կամ նոյնությամբ, կամ աննշան փոփոխություններով.

Գլխաշոր ուներ նա կանա՛չ-կանա՛չ,
Եվ կանա՛չ-կանա՛չ ժպիտներ ուներ... (ԸԵ, հ. 1, էջ 155)

Արև իշել է սարերին,
Սարերը խոսում են իրար հետ... (ԸԵ, հ. 1, էջ 233)

Երբեմն բանաստեղծը ամբողջ բանաստեղծությունն է կառուցում այս սկզ-
բունքով: Դրա վառ օրինակն է «Մորս ծննդյան օրն է» բանաստեղծությունը,
որից կրերենք մի քառատող.

Մորս ծննդյան օրն է, տաղիկներ,
Տաղիկներ, հնչեք մորս քնքշանքով,
Մորս ծննդյան օրն է, շաղիկներ,
Շաղիկներ, շնչեք մորս քնքշանքով: (ԸԵ, հ. 4, էջ 137)

Խանյանը կիրառում է նաև տողավերջում կրկնվող բառերի, առանձին ար-
տահայտությունների, նախադասությունների ոճական ձևերը՝ վերջույթ կամ
էպիֆորա, որը մեծ չափով նպաստում է բանաստեղծական խոսքի ոիթմին, ու-
ժեղացնում նրա արտահայտչականությունն ու հուզական ներգործությունը:

Վերջույթի օգտագործման լավագույն օրինակ է հետևյալ բանաստեղծու-
թյունը.

Բարակ առուն խոխոցում է՝ երգ է ասում,
Սառն աղբյուրը կարկաչում է՝ երգ է ասում,

*Որոտում է գծված գետը՝ երգ է ասում,
Ոլորում է քամին մեջքը՝ երգ է ասում,
Դսկա կաղնին սոսափում է՝ երգ է ասում,*

Աստղը հեռվից լուր թարթում է՝ երգ է ասում... (ԸԵ, հ. 1, էջ 100)

Վերջությաին կրկնության ոճական արժեքն ավելի է կարևորվում, եթե կրկնվում է կոչականը: Այդ դեպքում միաձուլվում են կոչականի՝ որպես խոսքի կենտրոնի ու կրկնվող բառի հմաստային ու արտահայտչական կարևոր դերերը: Դիտարկենք «Լեռներ» բանաստեղծությունը, որտեղ կոչականը կրկնվում է ինչպես բանատողերի վերջում, այնպես էլ սկզբում.

*Լեռներ, դուք ինձ ծնող լեռներ,
Լեռներ, դուք ինձ սնող լեռներ,*

*Դպարտ լեռներ,
Անպարտ լեռներ... (ԸԵ, հ. 1, էջ 232)*

Քնարական հերոսի ներքին ապրումներն ու գագառողությունները կարծես ամփոփված լինեն ընդամենը մեկ բառի մեջ՝ լեռներ: Կրկնվող կոչականը դաշնում է խոսքի կենտրոն՝ բանաստեղծական խոսքը հասցնելով առավելագույն ինչեղության:

Վերջութիւն դեպքում էլ կարող են կրկնվել ինչպես առանձին բառեր, այնպես էլ ամբողջական բառակապակցություններ ու նախադասություններ: Ըստ որում, դրանք կարող են կրկնվել կամ յուրաքանչյուր տողից հետո, կամ էլ ամեն մի երկուողի վերջին տողից հետո: Օրինակ՝ «Իմ Ղարաբաղ» բանաստեղծության մեջ (որը հեղինակը երգ է անվանում) յուրաքանչյուր բառատողից հետո կրկնվում է նույն երկուողը.

*Իմ Ղարաբաղը զայիքիս լուսն է,
Բայիկիս հոլյուն է իմ Ղարաբաղը: (ԸԵ, հ. 1, էջ 474)*

Սիևնոյն տողը ճշգրտորեն կրկնվում է յուրաքանչյուր բառատողի վերջում և արտահայտում քնարական հերոսի հոգեկիծակը: Կրկնության ոճական հնարանքը նաև համապատասխան ռիթմի ստեղծման միջոց է:

Դաճախ վերջութիւն միջոցով բանաստեղծն արտահայտում է տվյալ ստեղծագործության հիմնական տրամադրությունը, լիրիկական հերոսի հոլգական ապրումները: Օրինակ.

*Եթե լոել կա՝ մայր հողի նման,
Թևեր պարզել կա՝ մայր հողի նման,
Որդուն սիրել կա՝ մայր հողի նման,
Փառքի տիրել կա՝ մայր հողի նման: (ԸԵ, հ. 1, էջ 479)*

Խանյանը կիրառում է նաև բանաստեղծական ամբողջական տողերի, քառատողի կրկնություն (ռեֆրեն), կրկնվող տողերով ուժեղացնելով և ընդգծելով բանաստեղծական հիմնական տրամադրությունը: Այսպես՝

*Դու ծաղկունք շատ էիր սիրում.
Ծաղկել են արդեն ծառերը,
Դու ծաղկունք շատ էիր սիրում.
Ծաղկել են աղեն սարերը: (ԸԵ, հ. 1, էջ 934)*

Ղիտարկենք «Ղարաբաղ» բանաստեղծությունը, որն ամբողջությամբ չենք նեցրերում, սակայն նշենք, որ յուրաքանչյուր նոր քառատողից հետո կրկնվում է ընդգծված քառատողը, և այդպես՝ չորս անգամ.

Ուր գնացել եմ, սիրել եմ ես քեզ
Ու մնացել եմ միշտ ղարաբաղցի,
Ընկերներիս հետ ազնիվ եղբոր պես,
Իսկ աշխատանքում քաջ ու առնացի:
Ի՞մ ուժ ու ավյուն,
Ի՞մ սիրտ ու արյուն,
Դու իմ հաց ու աղ,
Ի՞մ մայր Ղարաբաղ: (ԸԵ, հ. 4, էջ 144)

Բանաստեղծի չափածոյում հանդիպում են նաև խառը և շրջադասված կրկնության օրինակներ, որոնք համաչափ դասավորություն չունեն, չեն ենթակվում որոշակի կաղապարների: Նմանօրինակ կրկնությունները ոչ միայն նպաստում են խոսքի արտահայտչականությանը, այլև բազմազանություն են մտցնում խոսքի մեջ, ինչպես օրինակ՝

Աշխարհը ծնվել է ջերմ սիրուց,
Սիրո խենթ ընթացք է ողջ կյանքը,
Եվ սերը լեզենդ է հինավորց
Քո սերմ է իմ անհուն բերկրանքը: (ԸԵ, հ. 2, էջ 285)

Խանյանի չափածոյում գործածական կրկնության բոլոր տեսակները նրա լեզվական արվեստը հատկանշող կարևոր տարրեր են: Առանձին բառերի, կապակցությունների, բանատողերի կրկնությունները ոչ միայն հոգեվիճակի դրսևորման ցայտուն միջոցներ են, որոնք նպաստում են տաղաչափական խնդիրների լուծմանը, այլև կարևոր գործառույթ են կատարում բանաստեղծական լեզվի ժողովրդականության ու մի շարք արժանիքների՝ երաժշտականության, ներդաշնակության, բազմազանության ապահովման գործում: Նշված ոճական հնարանքի տպավորությունն ու արժեքը պայմանավորված են կրկնության միավորների ճիշտ ընտրությամբ, ինչը դարձյալ փաստում է ինքնատիպ մտածողի անսպառ երևակայության ու յուրահատուկ աշխարհներկալման մասին:

Հակադրություն

Խանյանի գեղարվեստական պատկերներին հուզարտահայտչական երանգ հաղորդող ոճական հնարանք է հակադրությունը, որի միջոցով ավելի ակնառու են դաշնում իրերի ու երևույթների տարրերությունները, մարդու հոգեկան աշխարհի նրբությունները: Բանաստեղծը հատուկ նպատակադրումով համադրում է իմաստով հակադրի երևույթներ, առարկաներ՝ դրանով իսկ ցայտուն դարձնելով իր վերաբերմունքը նկարագրվող առարկաների, երևույթների և հատկանիշների նկատմամբ: Հակադրի հասկացությունների միաժամանակյա կիրառությանք Խանյանն ընդգույն է բանաստեղծական խոհի, ապրումի արտահայտչականության դրսորումը: Ահա մեկ հատված «Բայց արդեն ուշ է» բանաստեղծությունից:

Զահել հասակում,
Կյանքի հմայող, բարդ ծանապարհին,
Երք չեմ հասկացել
Իմ չարմ ու բարին,
Զգուել եմ ես միշտ քեզմից հեռանալ
Ու քեզ մոռանալ... (ԸԵ, հ. 1, էջ 105)

«Յայց լեզու» բանաստեղծության մեջ, ոիմելով մայրենի լեզվին, բանաստեղծն ասում է.

Դու իմ և ցավ, և դեղ... (ԸԵ, հ. 2, էջ 96)

Հակադրի հատկանիշների միջոցով ընթերցողի առջև բացվում են բանաստեղծի լայնեզր հոգու նույր ծալքերը, և նրա խոսքն իր անմիջական ներգործությունն է դրոշմում ընթերցողի հոգում: Այսպես՝ «Անց են կենում» բանաստեղծության մեջ, ի մի բերելով կյանքում ունեցած իր ձեռքբերումները, Խանյանը դրանք ամփոփում է հետևյալ կերպ՝ Կորցրածն շատ, գտածն քիչ... (ԸԵ, հ. 4, էջ 117)

Ոճականորեն առավել արտահայտիչ են խոսքային հականիշներով կազմված հակադրությունները: Այդ դեպքում հակադրական հարաբերություններ են արտահայտում հակադրի իմաստ չունեցող, երբեմն նույնիսկ իրար հետ որևէ առնչություն չունեցող բառերն ու բառակապակցությունները, ինչպես օդինակ՝

Դսկա եմ ես, բայց անկարող... (ԸԵ, հ. 2, էջ 99)

Երբեմն բանաստեղծը հակադրությունն արտահայտում է ոչ թե առանձին բառերի միջոցով, այլ ամբողջական նախադասությունների: Այդպիսի տողերը դառնում են յուրօրինակ բանաստեղծական հնարանք՝ գեղարվեստական խոսքը առավել խոսուն և արտահայտիչ կերպով ներկայացնելու համար: Այսպես՝

Դայը փրկում է օջախն իր արդար, պատիվն իր մաքուր,
Իսկ հագարացին կորցրել է ամոք, կորցրել է պատիվ,
Դայն իր դաշտերում երազի ափով առաքում է ջուր,
Իսկ հագարացին կրակ է ցանում և գիշեր, և տիվ:
Դայը իր որդու կյանքն է պաշտպանում, ապրուսոք նրա,
Իսկ հագարացին խլում է հացը անգամ փոքրերից,
Դայը իր միակ սերմ է նկարել իր սրտի վրա,

Իսկ հագարացին կանայք է խլում անգամ զորքերից: (ԸԵ, հ. 3, էջ 153)

Հակադրության հիմքով ստեղծվում են նաև ոճագիտության մեջ օքսիմորոնային կապակցությունները, որոնց դրսևորած ոճական արժեքին արդեն անդրադարձել ենք նակլիրներին նվիրված հանապատասխան բաժնում, ուստի այստեղ կխոսենք միայն դրանց կառուցվածքային որոշ հատկանիշների մասին: Ըստ Ս. Էլոյանի՝ օքսիմորոնները շարահյուսական այնպիսի կառուցներ են, որոնք կազմված են երկու տարրեր խոսքի մասերից և հիմնականում արտահայտում են որոշչ-որոշյալ հարաբերությունները⁶⁷: Խանյանի բանաստեղծական խոսքում գործածական օքսիմորոնները կամ հականիշ բառերով կազմված կապակցություններ են, կամ տրամարանորեն անհամատեղելի կապակցություններ, ինչպես օրինակ՝ **հանգած բոցեր** (ԸԵ, հ. 2, էջ 96): Սակայն դրանք այնքան էլ շատ չեն և բանաստեղծի խոսքում քանակ չեն կազմում:

Խանյանի խոսքարվեստում հակադրության ոճական արժեքը պայմանավորված է բառինաստի ընդգծնան և ընդլայննան հանգամանքով, լեզվական նշված իրողության միջոցով խոսքին հաղորդվող հուզական մեծ լիցքով ու մերգործուն արտահայտչականությամբ:

Ծրջադասություն (ինվերսիա)

Խոսքը ոճավորելու հարցում շարահյուսական իրողություններից ինքնատիպ հնարներով է օժտված շրջուն շարադասությունը: Յայերենի ճկուն շարադասությունը հնարավորություն է տալիս մտքերի ձևավորման ընթացքում արտացոլելու մեջ թվով ոճական յուրահատկություններ: Խանյանի բանաստեղծական խոսքի լեզվաօճական համակարգում զգալի դեր է կատարում բառերի, նախադասության անդամների շրջուն շարադասությունը: Վերջինս բանաստեղծական խոսքի կարևոր արտահայտչանմիջոցներից է և խոսքի ոճավորման լայն հնարավորություններ է ընծեռում՝ նիշաժամանակ նպաստելով հանգավորման խնդրի լուծմանը:

Խանյանին հաջողվում է սովորական շարադասությանը գուգընթաց օգտագործել նաև շրջուն շարադասությունը: Բանաստեղծի խոսքարվեստում հաճախված են ենթակայի, ստորոգյալի, որոշչի, հատկացուցչի, օժանդակ բայի ոչ սովորական շարադասությամբ գործածությունները: Խոսքին անսովորություն ու ինքնատիպություն է հաղորդում հատկապես ենթակայի ու ստորոգյալի շրջուն շարադասությունը, քանի որ այս դեպքում ստորոգյալն ինքն է ստանում տրամարանական շեշտը, ընդգծում է գործողության գաղափարը՝ առանց շեշտելու մտքի ավարտը: Ծրջուն շարադասության շնորհիվ նախադասության վերջին անդամ դարձած ենթական ծեռք է բերում յուրօրինակ հնչեղություն՝ կազմելով կից հանգավորում: Օրինակ.

Գեղեցկանում ես դու երբ... (ԸԵ, հ. 2, էջ 99)

⁶⁷ Էլոյան Ս., ժամանակակից հայերենի բառային ոճարանություն, էջ 173:

Ստորոգյալով արտահայտված գործողության տրամաբանական շեշտը, ինչպես տեսնում ենք, տարբեր տեղերում է: Տրամաբանական շեշտի տեղափոխումը, համապատասխան ռիթմ և ինչերանգ ստեղծելով, նպաստում է խոսրի ներդաշնակությանն ու պատկերավորությանը:

Խանյանական պատկերներին առանձնահատուկ արտահայտչականություն է հաղորդում մակդիր-որոշիչների շրջուն շարադասությունը: Բանաստեղծը որոշիչների շրջուն շարադասությունից օգտվում է այն դեպքում, եթե անհրաժեշտ է լինում բարձր արտահայտչականության հասնել: Դիտարկենք մի քանի օրինակ.

Ու ճառագեց հոգին արցախական,

Ծրջեց ավան ու շնմ քայլով արարողի

Ու մեռոնով օժեց անապական: (ԸԵ, հ. 1, էջ 103)

Պատմեշվել է թշնամու խրախճանը արմածին,

Իսկ աշխարհը անտարբեր, իր կոչերով ամիմաստ,

Խրախճանը է կարդում սելջուկ-թուրքին դրացի: (ԸԵ, հ. 2, էջ 107)

Գարումներիդ հյուսվածքը ջինջ,

Դու առանց ինձ կապենս հավետ,

Ես առանց քեզ ինչ եմ՝ ոչինչ: (ԸԵ, հ. 1, էջ 367)

Դիտարկված օրինակում ընդգծված հետադաս մակդիրները ոչ միայն նպաստում են խոսքի հուզականությանը, այլև «արցախական-անապական», «արմածին-դրացի», «ջինջ- ոչինչ» հանգավորմանը ավելի են ընդգծում բանաստեղծի հոգեվիճակն ու տրամադրությունը:

Բանաստեղծությանը յուրահատուկ պարետիկ ոճ է հաղորդում նաև հատկացուցի հետադաս կիրառությունը, օրինակ՝ ճամփաներով լուսի (ԸԵ, հ. 1, էջ 335), հորձանուտը հույզի (ԸԵ, հ. 1, էջ 335), մրրիկներ դարի (ԸԵ, հ. 1, էջ 335), երջանկությունն իմ (ԸԵ, հ. 1, էջ 175), շունչը օջախի (ԸԵ, հ. 1, էջ 271), տենչերով նրա (ԸԵ, հ. 1, էջ 1167), սրտերը նրանց (ԸԵ, հ. 2, էջ 96), նժույզը քաջի (ԸԵ, հ. 2, էջ 79), ձին պահի (ԸԵ, հ. 2, էջ 79):

Անգնահատելի է հետադաս որոշիչների դերը նաև գեղարվեստական պատկերի ամբողջացման առումով: Այնպես առավել ուժգնությամբ է դրսւորվում որոշիչ հատկանշային ինաստը, ինչպես օրինակ՝ վարագույրը մեծ (ԸԵ, հ. 1, էջ 332), այգիներ ծով (ԸԵ, հ. 1, էջ 332), կարուտներով ամանց (ԸԵ, հ. 1, էջ 307), անցրից մի նեղլիկ (ԸԵ, հ. 2, էջ 96), շիկնանքով նուրբ (ԸԵ, հ. 1, էջ 332), վերքը արնոտ (ԸԵ, հ. 1, էջ 127), ժափներդ բարի (ԸԵ, հ. 1, էջ 86), քաղաքում նորակերտ (ԸԵ, հ. 1, էջ 88), արմատներով խոր (ԸԵ, հ. 1, էջ 165), շիվերը նոր (ԸԵ, հ. 1, էջ 165), բունք տաք (ԸԵ, հ. 1, էջ 165), տենչերս անթիվ (ԸԵ, հ. 1, էջ 169) և այլն:

Բազմակի որոշիչների հետադաս գործածությամբ առավել հանգամանորեն են ներկայացվում դիտարկվող առարկաների ու երևույթների հատկանիշները: Ինչպես նշում է Ուզենտալը, «քազմակի անդամներն ունեն շատ ակտիվ արտահայտչական դեր: Նրանց օգնությամբ ցուցադրվում են ընդհանուր պատկե-

րի, միասնական ամբողջության մանրամասները, արտահայտվում է գործողությունների դիմամիկան, կազմվում են մակընթացների շարքերը՝ օժտված հսկայական արտահայտչականությամբ...»⁶⁸: Օրինակ՝ «Պատերիս տունն է՝ ամսվադ, խոնավ...» (ԸԵ, հ. 2, էջ 96), Անահիտն՝ անբիծ, Անհաս ու մաքուր, Եվ խոնակալ, Եվ հոգատար քույր...» (ԸԵ, հ. 2, էջ 119), Ներկան՝ քրտնաքոր ու լուսե (ԸԵ, հ. 2, էջ 121), Ունի բարձունքներ՝ Արևոտ, անհաս...» (ԸԵ, հ. 2, էջ 153), Եվ խորհուրդներ՝ ջերմ, հոգեհմա...» (ԸԵ, հ. 2, էջ 155), Յորս ձեռքերից՝ հողոտ, հացարույր...» (ԸԵ, հ. 4, էջ 136), անունդ քաղցր ու բարի (ԸԵ, հ. 2, էջ 138) և այլն:

Խանճանը շրջադասությունը դարձնում է բանաստեղծական խոսքի պատկերավորությունն ու գաղափարի ուժգնությունը ընդգծող արտահայտչամիջոց: Այդ նպատակին են ծառայում նաև օժանդակ բայի շրջադասված կիրառությունները, ինչպես օրինակ՝

Կարոսի թևերով սրտեր է շոյում... (ԸԵ, հ. 1, էջ 330)

Մեզ հետ շեմք եք կերտում,

Մեզ հետ երգ եք երգում... (ԸԵ, հ. 1, էջ 331)

Դժվար չէ նկատել օժանդակ բայի ոչ ստվորական շարադասության ոճական արժեքը: Խոնարիվող բային վերապահելով տողավերջի վանկարար դեր՝ խանյանը ոչ միայն նպաստում է բանաստեղծական տողերի հանգավորնանը, այլև ստեղծում է սիթմ ու արտահայտչականություն: Այստեղ մեծ է նաև տրամաբանական շեշտի նշանակությունը, որի տեղափոխման հետևանքով խոսքը ինաստային նոր երանգներ է ստանում: Ակնհայտ է, որ բանաստեղծի խոսքարվեստում բառերի դասավորության փոփոխությունն ինքնանպատակ չէ: այն ուղղված է գեղագիտական խնդիրների լուծմանը: Խանյանը, հավատարին մնալով հայերենի թերականության սկզբունքներին, վարպետորեն կիրառում է շրջուն շարադասությունը՝ դրսորելով բարձր պատկերավորության հասնելու իր կարողությունները:

Այսպիսով, լեզվական և պատկերավորման անհրաժեշտ միջոցների ընտրությամբ ու ճիշտ գործածությամբ Խանյանն իր բանաստեղծական խոսքը դարձնել է արտահայտիչ, պատկերավոր ու ներգործուն:

Հայրենի ժողովորդին համակած հույգերի ու զգացմունքների ինքնարուիս արձագանքն ու վարակող տրամադրությունների անմիջականությունը հնարավորություն են տվել բանաստեղծին՝ օգտագործելու մեր լեզվի արտահայտչական հարուստ հնարավորությունները, պատկերավորման տարբեր և բազմազան միջոցներ և մեր բանաստեղծական լեզուն հարստացրել պատկերների ու համեմատությունների ինքնատիպ ձևերով:

⁶⁸ Розенталь Д., Практическая стилистика русского языка, М., 1980, с. 331.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոկրատ Խանյանի խոսքարվեստի քննությունը համգեցնում է հետևյալ եղակացություններին.

1. Խանյանի բանաստեղծական խոսքում հնչյունական իրողություններն ունեն ոճական արժեք: Բանաստեղծը նպատակային կերպով կարողանում է իր խոսքին հաղորդել երաժշտականություն և բարեհնչություն, որոնք պայմանավորված են նմանահունչ բառերի, առձայնույթի ու բաղաձայնույթի կիրառությամբ: Այս առումով Խանյանը Վահան Տերյանի հետևորդն է: Տերյանն էր, որ առաջին անգամ զնողայնեց բաղաձայնների ոճավորման ոլորտը: Եթե անցյալում բաղաձայնույթի գործառնությունը բնության երևույթների ձայնային տպավորություն ստեղծելու ձգտումով էր պայմանավորված, ապա տերյանական լեզվում այն առավելապես մարդկային հոգեվիճակի ու վերաբերմունքի արտացոլման գեղարվեստական հնարանը է: Խանյանի բանաստեղծական խոսքում լեզվական այս իրողությունները հիմնականում կատարում են նույն ֆունկցիան՝ բացահայտելով քնարական հերոսի ներաշխարհը: Դարձ է նշել, որ բանաստեղծը բավականին հաճախ է դիմում բաղաձայնույթի և առձայնույթի հնարանքին՝ տպավորիչ և պատկերավոր դարձնելու համար իր խոսքը:

2. Խանյանը հմտորեն օգտվել է հայ գրական լեզվի բառապաշարի ոճական տարրեր շերտերից, բառերի իմաստային ու կիրառական բազմազան հնարավորություններից: Բանաստեղծի խոսքարվեստի հնքնատիպությունը պայմանավորող գործոններից մեկն էլ բառընտրության արվեստն է, որն ակնհայտորեն արտացոլված է համագործածական բառերի իմաստային-ոճական յուրահատուկ կիրառություններում: Դամագործածական բառերի ոճական նրբմասստներին զուգահեռ ինքնատիպ դրսելում են ստանում նաև ոչ գործուն բառաշերտի բառերը: Խանյանական խոսքում ժողովրդայնացման հատուկ դեր չկատարող ժողովրդախոսակցական ու բարբառային բառերը, հարադրությունները, դարձվածքներն աչքի են զննում իրերն ու երևույթները բնորոշելու գարմանալի պատկերավորությամբ: Խոսքային համապատասխան միջավայրում տեղ գտած ժողովրդախոսակցական ու բարբառային բառերը հաճախ պայմանավորում են պարբերույթի, բանաստեղծական տաճ, երբեմն նաև ամբողջ բանաստեղծության հնչելությունը: Խոսքի ոճավորման, մասնավորապես միջավայրի և բանաստեղծական կերպարի տիպականացման գործում կարևոր դեր ունեն հնարանությունների, փոխառությունների ու օտարաբանությունների գործածությունները: Նշված բառերի կիրառության հիմունքը առավել ոճական-արտահայտչական բնույթ ունի: Բանաստեղծի խոսքարվեստում ոչ գործուն բառաշերտի բառերի գործառնությունները հաճախ պայմանավորված են նաև խոսքի սեղմության և հանգավորման պահանջներով:

3. Խանյանի լեզվամտածողության ինքնատիպությունը հատկապես դրսելով է բառաստեղծման ասպարեզում: Նորաբանությունները լեզվական մյուս միջոցների հետ հանդես են գալիս որպես բանաստեղծի լեզվի յուրահատկությունները դրսելող կարևորագույն տարրեր: Օգտագործելով մեր լեզ-

վի բառակազմական ճկուն հնարավորությունները՝ Խանյանը կազմել է բազմաթիվ նոր բառեր, որոնց մեջ մասը նորաբանությունների արժեք ունի և հարստացնում է հայոց լեզվի բառակազմը, լեզվում առկա բառերի ինքնատիպ կիրառություններով կերտել է նոր բառիմաստներ, ոճական նոր արժեքով օժտել բազմաթիվ բառեր:

4. Խանյանի ստեղծագործության լեզվի հարստությունն ամենից առաջ ապահովում են հոմանիշները, որոնք բանաստեղծը գործածում է հնարավոր բոլոր միջոցներով ու եղանակներով: Նույնարմատ, տարարմատ բառապաշարի շերտերի պատկանող լեզվական ու խոսքային հոմանիշները հնարավորություն են տալիս խոսափելու կրկնություններից և բազմակողմանիորեն արտացոլելու նկարագրվող առարկաներն ու երևույթները, դրսևարվող հովաքերն ու ապրումները: Հոմանիշների առատ գործածությունը պայմանավորում է խանյանական խոսքի բազմազանությունն ու բովանդակային հարստությունը: Բանաստեղծական հովաքի ու ապրումի արտացոլման գործում նշանակալի դեր ունեն նաև հականշային կապերի մեջ գտնվող բառերը, որոնք հիմնականում հանդես են գալիս հակադրություններում ու օքսիմորոնային կապակցություններում: Համանունների ու հարամանունների գործածություններն առավելապես տաղաչափական խմելիրների լուծնան, խոսքի ներդաշնակության, բարեհնչության ու երաժշտականության ապահովման ոճական գործառույթ են կատարում:

5. Խանյանի բանաստեղծական խոսքին բնորոշ է նաև քերականական իրողությունների միջոցով ոճական խմելիրների լուծումը: Գոյականի, բայի, դերանվան, ինչպես նաև մյուս խոսքի մասերի յուրօրինակ կիրառությունները խանյանական խոսքը հարստացնում են ոճական ու արտահայտչական բազմաթիվ նորերանգներով, օժտում սեղմության, բազմազանության և այլ հատկանիշներով: Բանաստեղծը հմտորեն օգտվել է ծևարանության ընձեռած ոճական հնարավորություններից: Ոճական առումով գրաբարյան, բարբառային, ժողովրդախոսակցական բառաձևերի նշանակալի կիրառությունները նույնպես բնորոշում են հեղինակի նախասիրությունները: Դրանց ընտրության ու գործածության հարցում անշափ կարևոր դեր են խաղում նաև տաղաչափական գործուները: Ոճական կարևոր արժեք ունեն նաև շարահյուսական իրողությունները՝ նախադասության կառուցվածքային տարրեր տեսակները, գեղչումը և այլն, որոնք հաճախ պայմանավորում են բանաստեղծական խոսքի ինքնատիպությունն ու արտահայտչականությունը: Խանյանի շարահյուսական համակարգին բնորոշ են անշաղկակ բարդ նախադասությունների գործածությունները, որոնք մեծ մասամբ բանատողերի համաչափ կառուցվածքը պահպանելու կարևոր գործառույթ են կատարում:

6. Խանյանի բանաստեղծական լեզվում պատկերավորման միջոցները ծառայում են գեղարվեստական կոմիրետ խմելիրների և բանաստեղծի ոճը հատկանշող լեզվական միավորներ են: Պատկերավորման միջոցներից հաճախված են մակդիրի, համեմատության, փոխարերության, անձնավորման, իսկ արտահայտչամիջոցներից՝ ճարտասանական դարձույթների, կրկնության, հակադրության, շղաղասության ոճական հնարանքները: Խանյանը որպես

մակդիր գործածել է բոլոր այն խոսքի մասերը, որոնք կարող են ունենալ մակդրային կիրառություններ: Բանաստեղծի չափածո խոսքին բնորոշ է մակդիրը գոյական որոշչով արտահայտելու հակումը: Բազմաբնույթ համեմատությունները բանաստեղծական խոսքն օժտում են գրավչությամբ և օգնում գեղարվեստական պատկերն առավել խորությամբ ընկալելուն: Խանյանական համեմատությունների ներգործուն ուժը ինքնատիպության մեջ է: Փոխարերությունը գեղարվեստական պատկեր կերտող հիմնական պատկերավորման միջոցն է: Բարի փոխարերական գործածություններով բանաստեղծը մինյանց է մոտեցնում հաճախ նույնիսկ անհամատեղելի թվացող առարկաներն ու երևոյթները: Մտքի արտահայտման յուրօրինակ միջոց է անձնավորումը, որի տպավորիչ ու շոշափելի օրինակները բանաստեղծի խոսքարվեստում մարդու ներաշխարհի արտացոլման գեղարվեստական ինքնատիպ հնարանքներ են:

7. ճարտասանական դարձույթների գործածությունները արտահայտչականություն են հաղորդում բանաստեղծական խոսքին՝ հաճախ պայմանավորելով նաև խոսքի մի շարք արժանիքների դրսնորումները: Ոճական նշանակալի արդյունքով են օժոված անպատճախան հռետորական հարցն ու ճարտասանական այն հարցերը, որոնցից հետո բանաստեղծն առաջադրում է նաև դրանց պատասխանները: ճարտասանական կոչերի կիրառությունները պայմանավորված են քնարական հերոսի տրամադրությամբ ու ապրումներով, ուստի առավելապես հանդես են գալիս որպես հոգեկան բարդ ապրումներ ու զգացումներ արտացոլող ոճական միջոցներ: Խոսքի լեզվածական հարստացման նպաստում են նաև կրկնություններն ու շրջադաշտությունները: Կրկնությունները հանդիպում են տարբեր կիրառություններով՝ նախադաս, միջադաս և վերջադաս: Խանյանը հաճախ է դիմում կրկնություններին՝ հաղորդելու համար քնարական հերոսի ներքին հոյզերն ու ապրումները:

Ահա բանաստեղծի ստեղծագործության խոսքարվեստի նմանօրինակ մի ուսումնասիրություն, որը կարող է փաստել, որ խանյանի լեզվամշակութը առանձնանում է իր յուրօրինակությամբ, իսկ նրա չափածոյի լեզվական փաստերի հիման վրա կարելի է բացահայտել ցանկացած օրինաչափություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԻՐՈՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՈճԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԲԱԽԱՊԱՅԱՐԱՅԻՆ ՂԱՐՑԵՐ	18
Ընդհանուր հայերեն (չեզոք) կամ համագործածական բառեր	18
Ժողովրդախոսակցական և բարբառային բառեր	23
Դարադրություններ	26
Դարձվածքներ	28
Նորաբանություններ	29
Օտարաբանություններ	32
Դնաբանություններ	33
Բառապաշարի իմաստածևային խմբերի ոճական կիրառությունները	
Դոմանիշներ	37
Դականիշներ	42
Դարանուններ	44
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	46
Զնարանական իրողություններ	47
Շարահյուսական իրողություններ	50
Միակազմ նախադասություններ	53
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	
ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՐԱՅՅՈՒԱԿԱՆ ՂԱՍԱԿԱՐԳԸ	58
Մակդիր	59
Դամենատություն	67
Այլաբերություն	73
Արտահայտչական միջոցների ոճական արժեքը	80
Դարցական-բացականչական բնույթի նախադասություններ	80
Դուտորական դիմում, բացականչություն	82
Կրկնություն	83
Դակադրություն	88
Շրջադասություն (հնվերսիա)	89
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	92

ՄԱՄԻԿՈՆ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ԶԱՓԱԾՈՅԻ
ԼԵԶՎԱՊԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՎԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

МАМИКОН ЯВРУМЯН

ОСОБЕННОСТИ ЯЗЫКА И СТИЛЯ
ПОЭЗИИ СОКРАТА ХАНЯНА

Խմբագիր՝	Կ. Ս. Խանյան
Տեխ. խմբագիր՝	Ս. Մ. Վրայան
Սրբագրիչ՝	Ս. Ա. Խաչունց
Դամակարգչային շարվածքը և	
Էջադրումը՝	Թ. Վ. Դարությունյանի
Կազմի ձևավորումը՝	Մ. Ա. Սայհյանի

Տպագրություն՝ օֆսեր: Թուղթ՝ օֆսեր: Չափակ՝ 60x84^{1/16}:

Ծավալը՝ 6 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պյուս» իրատարակչության տպարանում:
375000, Ար, ք. Ստեփանակերտ, Ք. Ջակոբյան, 25
Հեռ. /+374/47946360, /+374/97302002 Էլ. հասցե՝ dizak-plus@mail.ru